

2634

Russia nub

Mugger shmt

205
F-15

200
214 - RU

Հրատարակութիւն Մուսեղ Տէր Արևելան Բագրատունոյ

05
1-15

ՅՈԳԵՒՈՐ ԸՆԹՐԻՔ

Քրիստոնեայ լուսանիմների համար

«Ճաշակեցէք և տեսէք զի
քաղցր է Տէր»:

պատրաստեց
Խօսից

ԱՐՍԵՆ ՔԱՀԱՆԱՑ Տէր ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Վ. Ա. Պ. Ռ. Շ. Ա. Պ. Տ.

Տպարան Մայր Արքուոյ Արքոյ Էջմիածնի.

1901

200
IV - RU



158 FEB 2009

200
214-RK

Մ.

23 SEP 2009

Հայաստանի Առաջին Տէր Արքական Բազմաւորութիւն

205:
F-15

ՅՈԳԵՒՐՐ ԸՆԹՐԻՔ

Քրիստոնեալ լիտանիֆների համար

«Ճաշակեցէք և տեսէք զի
քաղցր է Տէր»:



Խօսեց

ԱՐՍԵՆ ԳՈՀՈՆՅԱՅ ՏԵՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
ԲԱԴՐԱՑՈՒՆԻ



Վ. Ա. Պ. Ա. Ռ Զ Ա. Պ. Ա. Տ

Տպարան Մայր Արքուն Արքուն էջմիածնի.

1901

Տպարան Մայր Արքուն Արքուն էջմիածնի.
Տպարան Մայր Արքուն Արքուն էջմիածնի.
Տպարան Մայր Արքուն Արքուն էջմիածնի.

26 FEB 2013

2634

BOOK 932 C. S.

449969 004806

Дозволено Цензурою 5 Мая 1901 г. г. Тифлисъ.

Р. Чорч. 5 Мая 1901 г.
Цензору. 5 Мая 1901 г.
Чарльз. 5 Мая 1901 г.



Բատ Բարձու հրամանի նորին Ա. Օծութեան
Վեհափառ Հայրապետի ազգիս Տ. Տ. ՄԿՐՏՉԻ,
Դիւանս թոյլատը տպագրութիւն սորին, համա-
ձայն զբաւոր վկայութեան Բարձր. Անդամոյ Ա.
Սիհօդի Տ. Ցուսիկ վարդապետի Մովսիսեան,
որում յանձնեալ էր ի քննութիւն:

Ի ստուգութիւն սորին Դիւանս վաւերացու-
ցանէ ստորագրութեամբ և դրոշմամբ կնքոյ Հայ-
րապետական Դիւանի:

Դիւանապետ ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ.

Ե 15 Հոկտեմբերի 1898 ամի

Ե. Ա. Եղմածին

Թ. 1174.

S. Կ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

Հայ ժողովրդի կրօնական սէրը վառելու դէսի
Ծշմարիտ Աստուածպաշտութիւն, նորա կրօնական
ջերմեռանդութիւնը աւելի քաջալերելու իւր հաւա-
տոյ մէջ, ամուր կերպով միացնելու նրան իւր
եկեղեցւոյ եւ դաւանութեան հետ, միսիթարելու
նրան հոգեսպէս, խօսելու նրա հետ Աւետարանի
աստուածեղէն խօսքերը, ցոյց տալու Ծշմարիտ
աստուածպաշտութեան ուղիղ ճանապարհը (այն
ճանապարհը, որ միմիայն յատուկ է հաւատացեալ
քրիստոնէին), ի՞նչ շաւդով է որ 1900 տարի սրանից
առաջ իւր երկրաւոր եւ մարդկային կեանքն անց-
րել է Քրիստու իսկական եւ ըուն մարդկային մի
ամենաբարձր օքինակ դառնալով իւր հետեւողնե-
րին, որով պարտաւոր է ընթանալ եւ ամեն մի
հաւատացեալ քրիստոնեայ, որ պիտի խոնարհուի
նրա ամենաբարձր եւ բարոյական սկզբունքների
եւ օրէնքների առաջ, մենք գրեթէ միջոց չունինք:

Հայ ժողովուրդը միանգամայն զուրկ է կրօ-
նական միսիթարութիւնից՝ խրախուսանքից՝ Եկե-
ղեցւոյ ընմից միմիայն սպասում է ժողովուրդը
ևնել Աստուծոյ խօսքը եւ բացի որանից ուրիշ որ
եւ է միջոց չունի յագեցնելու իւր կրօնական

ծարաւը: Եկեղեցւոյ ամքիոնն էլ այդ պահանջը
միշտ չի կարողանում՝ լրացնել ըստ որում հայ
հոգեւորականութիւնը միանգամայն բացառութիւն
է կազմում իր այդ պատասխանառու պարտա-
ւորութեան նկատմամբ, ընդ նմին եւ ժողովուրդը
միանգամայն զորկ է այնպիսի գրքերից եւ հրա-
տարակութիւններից, որոնք կարող էին ծառայել
նրա այդ մեծ պահանջին եւ նուիրուած լինէին
բարձրացնելու ժողովրդի բարոյական աստիճանը
եւ ամրացնելու նրա հաւատը: Իսկ եթէ կան էլ
այնքան քիչ եւ սուղ են, որ անկարող ենք ասել,
թէ որանք իսկապէս կարող են մի որոշ չափով
բաւարարութիւն տալ այդ պահանջներին: Բացի
այդ սղութիւնը որանք ժողովրդականացած չեն,
մուտք չեն գործել ժողովրդի ամնն խաւնրի մէջ,
մուտք չեն գործել ընտանիքների շրջաններում
եւ որս միակ պատճառը այն է՝ որ մեր հոգեւո-
րականութիւնը ջանք չի գործ որել ստեղծելու մի
այնպիսի ժողովուրդ, պահանջ չէ դարձել նրա
համար հոգեւոր գրքերի ընթերցանութիւնը եւ
իր հրատարակութիւններով եւ աշխատութիւննե-
րով չէ շարժել նրա հետաքրքրութիւնը: Բայց թէ
ինչո՞ւ է այդպէս, պատճառը շատ պարզ է. մեծա-
մասնութեան տգիտութիւնը, շատերի ծուլութիւնը
եւ շատերի էլ «ժամանակ չունենալը», որ մի լաւ
պատրուակ է ազատուելու քրտնաշան աշխատան-
քից եւ որի մէջ թագնուած են հէնց նրանց անձ-
նական գործերի, սեսմական շահերի այն անդուն
ջանքն ու աշխատանքը, որ մի ըուպէ անզամ ժա-

մանակ չեն ունենում աշք բաց անել զրապանի ծառայութիւնից:

Բայց մի բոլէ մեր շուրջը նայենք, աշք ձգենք բողոքական հայ համայնքի վրայ եւ նրանց պատողների վրայ եւ տեսնենք թէ նրանց միսիօնարները, ընկերութիւնները ո՞րպիսի արագութեամբ են թափում նրանց առաջ կրօնական-քարոյական գրքեր, հրատարակութիւններ ու բրոշներ, որոնք իսկապէս մեծ նշանակութիւն եւ շահ ունին ժողովրդի համար, որոնք մեր հոգեւորականների դէմ մրցելու ամենառաջին եւ զլխաւոր զէնքերն են դարձրել եւ որով նրանք զրաւում են դէպի իրենց ժողովրդի սիրտն ու համոզմունքը եւ այդպիսով ժողովուրդ են վաստակում։ Նոքա կարող են լաւ օրինակ լինել մեր հոգեւոր հայրերին, եթէ միայն վերջիններս մի բոլէ բարենախանձ աշքով նայեն իրենց օտարերկրացի եւ օտարադաւան պաշտօնակիցներին եւ հետեւեն նրանց բարի օրինակին։

Հրատարակելով մեր հանգուցեալ հօք Արաքն քահանայի թողած բազմաթիւ աշխատութիւններց այս առաջին զրքոյկը, մեր նպատակն է մեր կողմից եւս մի փոքր օգնած լինել այն արժանաւոր հոգեւոր հայրերին, որոնք ճգնաւմ են միջոց տալ բազմաշխատ հայ ժողովրդին, կրօնական ոգելից զրբերի ընթերցանութեամբ յագեցնել նրա հոգեկան ծարաւը։

Հայ հաւատացեալ զերդաստանի համեստ սեղանի վրայ ենք դնում այս պարզ եւ անպանոյն

«Հոգեւոր Ընթրիքը»։ Թող ճաշակէ եւ տեսնէ, որ քաղցր է Տէրը, որ միսիթարիչ է Նա, որ սփոփիչ է Նրանց, որոնք գտնւում են բազմահոգ վշտերի մէջ եւ այդ վշտերը Նրանց սպառնում են յուսահատեցնելու, Թուլացնելու իրենց հաւատոյ ամրութիւնից, որ Նա խրախուսիչ է եւ քաջալերող քրիստոնէական հաւատոյ համար պատերազմում մարտնչող հաւատարիմ՝ զինուորին։

Ասացինք պարզ եւ անպահոյն։

Այո՛, պարզ է եւ անպահոյն, ըստորում հնդինակը չէ գոռում-զոշում սպառնալի բառեր արտասանելով, բովեալէս չէ գրգորում ընթերցողի նեարդերը, վայրկենապէս չէ բորբոքում նրա սիրտը, որի հետեւանք պէտք է լինի կրկին միեւնոյն առաջուան ննջնամհուացութեան եւ անզգայութեան ենթարկուել։ Այլ նա խօսում է որպէս զթառատ հայր իւր սիրատոն զաւակների հետ, ուսուցանում է որպէս բազմափորձ ծերունի՝ իւր շուրջը ժողոված իւր սիրելի գերդաստանին։

Այսպիսով ամեն մի հայ ընտանիք, որ կարօտ է հոգեւոր միսիթարութեան—սփոփանքի, որ կամենում է Աստուծոյ խօսքը լսել եւ կամենում է իր քաղցը յագեցնել «Հոգեւոր Ընթրիքով», — ահա թող ընդունի մի քրանաշան հովուի հոգեւոր աշխատութեան արզասիքը։ Թո՞ղ Նրա խրախուկան, համոզեցուցիշ, բազմադիմի օրինակներով եւ փաստերով լի խօսերը, որոնք անշուշտ անմհուաց կերպով որոշմած կը մսան իւրաքանչիւր ընթերցողի սրտի եւ համոզմունքի վրայ, ինչպէս եւ կեն-

դանութեան ժամանակ եկեղեցւոյ ամբիոնից միշտ
նրա ծայնը հնչել է, այնպէս էլ իւր մահից յետոյ
Թոհի հնչէ իւր սիրած եւ պաշտած հայ ժողովրդի
ականջին եւ մխիթարի նորան:

Այս զքոյկը որպէս հոգեւոր սնունդ ամենի
համար անհրաժեշտ է:


Հրատարակելով այս առաջին հատորը, յոյս
ունինք, որ ընդունելութիւն կը գտնի հայ հասարա-
կութեան մէջ, որով եւ կը իրախուսի մեզ հրատա-
րակելու միւս հատորներն եւս, որոնք յուսով ենք,
որ աւելի եւս պիտի զբաւեն բանասէր ընթերցող-
ների ջերմ հետաքրքրութիւնը:

Յարգանօֆ դեսպի հայ ժողովուրդի

Հրատարակիչ՝

ՄՈԽԵՎԱ, ՏԵՐ ԱՐՄԵՆԻԱՆ

ԲԱԳԻՐԱՏՈՒԹԵՒ.



ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹՌԻՔ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Ճաշակեցէք և տեսէք,

ով քաղցր է Տէր»

(Ժամազիր).

Ա:

Յամենայն ժամ պարտ է կալ յա-
դօրս, եւ մի՛ ձամանանալ:

(Ղուկ. ՓԲ. Գ. 1—14.)

Ամեն ժամանակ պէտք է սղօրք անել
եւ չձամանանալ:

Այս խօսքերով մեր Տէր Յիսուս Քրիստոսը
մեզ սովորեցնում է, ոչ թէ միայն աղօթել, այլ
պարտք է զնում մեզ վրայ, որ ամեն ժամանակ
աղօթք անենք և չձանձրանանք: Յիսուս իբրև
մեր հոգիների ուսուցիչը, մեր հոգիների վար-
դապետ-քարոզիչը, մեզ սովորեցնում է աղօթել
իսկ Յիսուս իբրև մեր հոգիների դատաւորը
«դատաւոր կենդանեաց և մեռելոց», որի առջե-
ծունկ են չոքում երկնաւորները, երկրաւորները
և սանդարամետականները, մեզ պարտաւորեց-

նում է ամեն ժամանակ աղօթել և չձանձրանալ։ Ի՞նչ կը նշանակի աղօթք։—Աղօթք նշանակում է աղաչանք գէպի Աստուած։ Նախ՝ աղօթքի միջոցով մեր հոգու ցանկութիւնները և բաղձանկները յայտնում ենք Նորան և Երկրորդ՝ աղօթքի միջոցով ցոյց ենք տալիս մենք մեր հաւատոյ, յուսոյ և սիրոյ չափը։ Եւ աղօթքը երեքի կարելի է բաժանել։ Ա. Առանձնական, Բ. Բնաւանեկան և Գ. Հրատարակական—Եկեղեցական։

Առանձին աղօթքով մարդիկ Աստուծոյ հետ են խօսում և պատասխան ստանում։ «Խնդրեցէք և պիտի տրուի ձեզ», «Նեղութեան օրը խնձի կանչէ ու ես քեզի պիտի աղատեմ», «Իմ անունովս ինչ որ հաւատով խնդրեք, պիտի ստանաք»։ Խնչպէս նննան, խնչպէս Սոզոմոնն, խնչպէս Եղեկան, խնչպէս Կուռնէլիոս հարիւրապետը։

Առանձին աղօթքը դիխաւորապէս մեղաց խոստվանութեան և հոգւոյ փրկութեան համար պիտի լինի։ Մարդիկ պիտի առանձին լինեն, որ իրենց սիրութ բաց անեն Աստուծոյ առջև, իրենց հոգւոյ վէրքերը—հոգւոյ ախտերը թափեն Նորա առջև, որպէս զի բժշկուին։

Բնաւանեկան աղօթքով մարդիկ խնդրում են ոյժ և կարողութիւն և առաւօտ ու երեկոյ Հնորհակալութիւն են յայտնում իրենց ստացած ոյժի և կարողութեան համար։

Առաւօտները, երբ ընտանիքի անդամները միասին են, շատ յարմար է աղօթել, խնդրել ոյժ և կարողութիւն, որպէս զի կարողանան օր-

ուայ ընթացքում իրենց քրիստոնէական պարագաներութիւնները ճշտիւ կատարել, այն է՝ Աւետարանի պատուելիների համաձայն ընկերներին օդնել, թշնամիններին սիրել, առևտուրը և այլ պարտականութիւնները ճշմարտութեամբ կոտարել:

Երեկօնները, երբ որ ընտանիքի անդամները իրենց գործը վերջացրած վերադառնում են տուն և միասին են, դարձեալ պիտի ազօթեն և չնորհակալութիւն մատուցանեն Աստուծուն, որովհետեւ նորա տուած չնորհիւ այն օրը խաղաղ և անվնաս անցկացրին, յաջողութեամբ իրենց գործը կատարեցին և թէ այդ օրը անսպասելի յաջողութեան ևս պատահեցին: Այն, ազօթքի մէջ պէտք է աւելի յարդանք, մեծարանք ու չնորհակալութիւն յայտնել Աստուծոյն այն չնորհների համար, որ ամեն օր բաշխում է մեզ իւր անսահման բարեգթութեամբ և առատաձեւնութեամբ, վերջապէս չնորհակալութիւն պէտք է յայտնել, որ նա իւր հովանաւորութեամբ կրկին անվնաս և անփորձ վերադարձնում է մեզ մեր օթեանը և մեր ընտանեաց գիրկը: Հաւատացեալ քրիստոնէան այս բոլորը կատարելու է, արդեօք կատարեալ անզգայութիւն և անսանութիւն չի լինի, եթէ շարունակ ուտենաք, խմենք, հագնենք և ապրենք, բայց Աստուծուն, այդ բոլոր բարիքի չնորհողին, չմոռաբերենք ու գոհութիւն ու չնորհակալութիւն չմատուցանենք: Բացի այս, ընտաննեկան ազօթքի մի քաղցրու-

թիւնն էլ այն է, որ տան մեծը — հայրը, ազօթքի ժամանակ խւր գերդաստանը, իրբե տան քահանայ, ներկայացնում է Աստվածուն, ինչպէս նոյր իր ընտանիքի հետ զոհ — պատարագ. հանեց Աստվածուն. Մի հայր, եթէ ուզում է ցոյց տալ, որ ինքը հայր է, տան մեծ է, եթէ ուզում է, որ իր հայրական, ծնողական իրաւունքները տարածուի ընտանիքի վրայ, այդ կրթինի միայն ազօթքի ժամանակ և ազօթքի միջոցաւ երբ որ տան հայրը ծնկների վերայ եկած, ձեռքերը տարածում է իր ընտանիքի հետ գեղի Աստված, երբ որ իր ջերմեռանգ ազօթքների և քաղցր զգացմանքների հետ խառնում է և նորա ջերմ արտասուրի, որ բարեպաշտութեան սրտի պըտուզն է, այն ժամանակ բոլոր ընտանիքի վերայ մի առանձին տկնածութեան և հնագանդութեան հոգի և տպաւորութիւն է գալիս Բոլորը ակնածում են նորանից՝ ինչպէս յիրաւի տան մեծից և ծնողից Աչքերս խմենք և մտնենք այդ ուրարութեան մեջ, տեսնենք թէ մեղանից ով ինչ կը մտածէ:

Եթէ ուզում ենք, որ մեր որդիքը մեղ հնագանդ զաւակներ լինին, եթէ ուզում ենք, որ մեր ընտանիքը մեղ հնագանդ լինի, այդ ազօթքի միջոցաւ կարող ենք սովորեցնել:

Իսկ եթէ մենք, մեր երկնաւոր Հօրը չենք հնագանդիլ, ինչ իրաւունքով կարող ենք պահանջել, որ մեր որդիքը և ընտանիքը մեղ հնագանդուին. նախ մենք մեր երկնաւոր Հօրը հնա-

զանդուենք, որ մեր որդիքն ու ընտանիքն էլ մեզանից սովորեն հնազանդութիւն և մեզ հնազանդուին։ Մենք մեր երկնաւոր Հօրից սպասենք, որ մեր որդիքն էլ մեզանից սպասեն։ Մենք Աստուածանից վախենանք, որ մեր ընտանիքն էլ մեզանից վախենայ։ Մենք հաւատք և անկեղծ սէր ունենանք մեր երկնաւոր Հօր վրայ, որ մեր որդիքն էլ հաւատք ու սէր ունենան մեր խրառները լսելու։ Հնազանդել, լսել, սպասել, հաւատալ, սիրել և յուսալ, ահա վախաղարձ սլարաքը ծնողներից գեղի Աստուած, որդիներից գեղի ծնողները։

Կատարելագոյն և գերազանց ազօթքը եկեղեցական ազօթքն է, որովհետեւ առանձին ազօթքը նախապատրաստութիւն է ընտանեկան ազօթքի, իսկ ընտանեկան ազօթքը՝ եկեղեցական ազօթքի։

Եկեղեցական ազօթքը միացումն է վերին, երկնային եկեղեցու հետ, ըստ Պօղոսի՝ «Բայց գուք մօտեցել եք Սիօն լերանը, երկնքի երուսաղեմ քաղաքին, հրեշտակների բիւրաւոր բանակներին և երկնքում դրուած անդրանիկների հանդիսին, եկեղեցուն և ամենքի դատաւոր Աստուածուն և կատարեալ արգարների հոգիներին։»

Եկեղեցւոյ երգերը միացումն են փրկուածների երգերին, որոնք Սիօն լերան վրայ երգում են։ «Եւ տեսայ ահա Գաւը կանգնած էր Սիօն լերան վրայ և նորա հետ հարիւր և քսան չորս հազար հոգիներ, որոնք նոր երգ էին եր-

գում» (Յովհ. յայտ.):

Եկեղեցւոյ երգերը դարձեալ նմանում են Սերովեէից երեքսրբեան երգերին, որոնք գիշեր ցերեկ հանդսառոթիւն չունին, այլ անդադար երգելով ասում են. «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրոթեանց» (Յով. յայտ. Դ. 4. 8). և «Տեսնուժ էի Տէրը վերացած ու բարձր աթոռի վերայ նըստած և նորա վերեխ կողմը կանդնած էին Սերովեէք, որոնք վեց վեց թեեր ունեին, երկուքով աչքեր էին ծածկում, երկուքով ոտները և երկուքով թռչում էին» Եւ մէկը կանչում էր միւսին և ասում. «Սուրբ, սուրբ, սուրբ է զօրաց Տէրը, բոլոր երկինքը լիքն է նորա փառքովը» «Եւ գոների հիմունքը շարժուեցան աղաղակների ձայնից և տունը-տաճարը ծուխով լցուեց» (Եսայի Զ. 1.)

Եկեղեցւոյ ազօթքները նման են Աստուծոյ աթոռի առջև անուշահոտ խունկի:

«Եւ երբ որ եօթներորդ երկինքը բացաւ, կէս Ժամի չափ երկինքումը լուսոթիւն եղաւ» Եւ մի ուրիշ հրեշտակ եկաւ կանգնեց սեղանի առջև և սոկի իննկանոց ուներ և շատ խունկ տրուեց նորան, որ բոլոր սուրբերի ազօթքների հետ մատուցանէ այն սոկէ սեղանի վրայ, որ աթոռի առջևն էր: Եւ վեր ելաւ խունկի ծուխը, որ սրբերի ազօթքն է, հրեշտակի ձեռքից (Յով. յայտ. Բ. 1—4):

Աւրեմն բաւական չէ, որ առանձին ազօթում ենք, բաւական չէ, որ ընտանիքի հետ

աղօթում ենք, պէտք է եկեղեցւոյ աղօթքին էլ
միանանք, պէտք է հրեշտակների հետ էլ սուրբ,
սուրբ, սուրբ երգենք, պէտք է փրկեալ հոգի-
ների հետ էլ նոր երգը երգենք, որ նոքա եր-
կընքումն են երգում, մենք էլ երկրի վերայ
երգենք»

Միթէ հրեշտակները Յիսուսի ծննդեան
օրը չիջան հովիւների մօտ և չերգեցին «Փառք
ի բարձունս Աստուծոյ և երկիր խաղաղութիւն
ի մարդիկ հաճութիւն և օրհնութիւն . . .»

Ուրեմն առանձին աղօթքից յետոյ, ընտա-
նեկան աղօթքից յետոյ, պէտք է միանանք եկե-
ղեցւոյ աղօթքին էլ:

Այսուհետեւ ու այս

Կամ պրածեանե յայնըսպի Նույլը Ասու
շյամուզնակ մի և սկզբու լոյն չ ապա-
սույթ ո՞ւ ո՞ւ ո՞ւ պատկանաց որոշուած
այս պայտաւունութեանը ո՞ւ այս ուսումնակ
այսու ո՞ւ այս այս այս այս այս այս այս այս
չ պայտաւունութեանը ո՞ւ այս այս այս այս
շյամուզ չ պայտաւունութեանը ո՞ւ այս այս այս
չ պայտաւունութեանը ո՞ւ այս այս այս այս այս
շյամուզ չ պայտաւունութեանը ո՞ւ այս այս այս
այս այս այս այս այս այս այս այս այս այս

շյամուզ չ պայտաւունութեանը ո՞ւ այս այս այս
պայտաւունութեանը ո՞ւ այս այս այս այս այս
այս այս այս այս այս այս այս այս այս այս

Ա մեջնօրու աւագրձման և պահա ազգի կողման
պահա լի ամէ միջնավայրութիւն է պահա պահանջի
միջն բամբակի և պահա ազգը պահա պահա
պահ առաջ որ աշխարհ պահ որտ լի ամէ միջն
աշխա նիցի լի պահ առաջ որ մա մասքան

Բ.

« Խոստվան եղերու միմեանց
զմեղս եւ աղօրս արարէ ի վերայ մի-
մեանց, որպէս զի քժէկիջիֆ.

(Յակ. Ե. 16).

Զեր յանցանեները իրարու խոստ-
վանեցէլ եւ աղօրք արէլ իրարու նա-
մար, որ քժէկուիֆ:

Առաջի գլխում վերցնելով « Յամենայն ժամ
պարտ է կալ յաղօթս և մի ձանձրանալ »
բնաբանը, բացատրուեց, որ մեր Տէր Յիսուս
Քրիստոս իբրև մեր հոգիների ուսուցիչը սովո-
րեցնում է մեզ աղօթել, իսկ իբրև մեր հոգի-
ների Տէրն ու դատաւորը, մեզ վրայ պարտք է
դնում, որ ամեն ժամանակ պէտք է աղօթենք
և չը ձանձրանանք: Բացատրուեց նոյնպէս, թէ
ինչ է աղօթքը և քանի՞ տեսակի է բաժանւում
Այժմ մի երկու խօսք պիտի ասուի՝ թէ ինչպէս
պէտք է աղօթել:

Աղօթելուց առաջ, դեռ Աստուծոյ անունը,
խաչեալ Քրիստոսի և Ս. Հոգու պատուական և
սուրբ անունները մեր բերանը չառած, այս

Երեք մեծ պայմանները պէտք է կատարենք։ Ա. Որ
մեր բոլոր եղբայրների հետ հաշտուած լինինք
Քրիստոսի սիրով (հաշտուիլը այն գէպօւմն է
լինում, երբ մենք ուրիշներին նեղացրել ենք),
գնանք նոցանից ներողութիւն խնդրենք և մի-
մեանց հետ սրբութեան համբոյրով կրկին Քրիս-
տոսի սիրոյ մէջ նորոգուենք, որովհետեւ մեր Տէր
Յիսուս Քրիստոսն ասում է. «Եթէ քո ընծան
մատուցանես սեղանի վերայ և այնտեղ միտքդ-
դայ, որ քո եղբայրը քեզ հետ մի խէժ ունի,
ընծաղ սեղանի վերայ թող, գնան նախ հաշտուիր
նորա հետ և ապա գալով քո ընծան մատուցիր»
(Մատթ. Ե. 23—24): Աստուած մարդոց մեղ-
քերը ներեց միմիայն Քրիստոսի հաշտութեան
զոհովը. կը նշանակէ, եթէ մենք էլ մարդոց հետ
չհաշտուենք և հաշտութեան օրհնութիւնը չմա-
տուցանենք Աստուծուն, Աստուած մեր մեղքերը
չի ներիլ. «Եւ երբ որ աղօթքի կանգնեք, թէ որ
մէկի դէմ բան ունիք՝ պէտք է թողնեք, որպէս
զի ձեր երկնաւոր Հայրն էլ, որ երկնքումն է,
թողնէ ձեզ ձեր յանցանքները. որովհետեւ եթէ
չը թողնեք, ձեր Հայրն էլ, որ երկնքումն է, ձեր
յանցանքները չի թողնիլ (Մարկ. ԺԱ. 25—26):
Բ. Որ մեր ընկերների մեղքերը ներենք (այս
այն գէպքումն է լինում) երբ նոքա են մեղ նեղա-
ցրել։ Մեր Տէր Յիսուս Քրիստոսն ասում է.
«Եթէ դուք մարդկանց մեղքերը ներեք, Աս-
տուած էլ ձեր մեղքերը կը ների, իսկ եթէ մար-
դոց յանցանքները չներէք, Աստուած էլ ձեր

յանցանկները չի ներիլ» և սովորեցրեց մեզ ասեալու թէ՝ երբ որ կը կանգնէք աղօթքի, ասացէք «Հայր մեր, թռղ մեր պարտագերը, ինչպէս որ մենք թողնում ենք մեր պարտապահներինը» Գ. Պէտք է աղօթել միմիայն մաքուր հոգւով, ճշմարիտ և ուղիղ հոգւով, վասն զի ասում է. «Հոգի է Աստուած և նրան երկիրպագողները պարտաւոր են հոգւով և ճշմարտութեամբ երկիրպագանել» (Յով. 24): այս ամենը ուսումնական հոգւով աղօթել կը նշանակէ մարմինը իր գործքով մի կողմ զնել ինչպէս վերարկու, կրկնել չհագնելու գիտաւորութեամբ, մոռանալ մարմնոյ գործերը՝ չարութիւն, հպարտութիւն, նաև խանձ, ատելութիւն, բարկութիւն, ագահութիւն, արծաթուիրութիւն, աշխարհային սէր, աշխարհային ստացուածք. այս բոլորը պէտք է մոռանալ, միմիայն ներկայանալ Հօր Աստուծուն հոգւով։ Երբ այս երեք պատրաստականութիւն կունենանք, այն ժամանակ և համարձակութիւն կունենանք մօտենալ Աստուծուն աղօթելու։

Աղօթքների առաջինը առանձնական աղօթքն է, որ մեզաց խոստովանութեան համար է. ուրեմն ինչպէս պէտք է խոստովանուինք։

Լուսաւորչական եղբայրները ամենեւին խոսնառվանութեան վերայ գաղափար չունին և կարելի է ասել, որ շատերը ոչ խոստովանուին են ուզում և ոչ էլ գիտեն թէ ինչ պէտք է խոստովանուին և ինչպէս պէտք է խոստովանուին։ Խընդիմին այս է։

Նախ պէտք է այս հարցը վճռել — լուծել՝
թէ ինչ կը նշանակէ խոստովանութիւնն եկեղեցական կամ կրօնական առևմամբ խոստովանութիւն կը նշանակէ մեղքերը յայտնել։ Ե՞րբ որ մեր անձերը կը քննենք. ուրեմն խոստովանութիւն կը նշանակէ անձնաքննութիւն Հօր Աստուծոյ, Յիսուս Քրիստոսի և Ա. Հոգւոյ առաջ Պօղոս Առաքեալը միշտ ասում է թէ՝ «Քննեցէք ձեր անձերը թէ հաւատքի մէջն էք»։

Մարդիկ սովոր են ամեն տարի, ամեն ամիս, ամեն շաբաթ, ամեն օր, մինչև անդամ ամեն ժամ իրենց հաշիւները, այն է՝ իրենց գործերը, առուտուրը քննել, ուղղել, կարգի դնել, իրանց մարմնաւոր վիճակը բարւոքել և ուրիշների բարոյականը դատել. բայց չըկայ մէկը, որ գոնէ մի անդամ էլ նստէր իր հոգեսոր վիճակը քննելու ինչու. — վասն զի մարդիկ սովոր են միշտ ուրիշի աչքի շիւղը տեսնել, իսկ իրանց աչքի գերանը ամենեին ոչ տեսնում են և ոչ էլ կամենում հանել. «Կեղծաւոր, նախ քո աչքի գերանը հանիր և ապա եղբօրդ» ասում է մեր Տէր Յիսուսը Եւ այս մոլորութիւնը, այս տգիտութիւնը մարդոց մէջ յառաջ է եկել անձնաքննութեան վերայ գաղափար չունենալուց։

Մարդիկ եթէ քննեին իրենց անձը, իրենց սիրու, հոգին, մեղքերը, մոտածմունքը, վարք ու բարքը, գործը, հաւատքը, յոյսը, սէրը, այն ժամանակ կը զարհուրէին ուրիշին դատելուց։

Մարդիկ եթէ քննեին իրենց անձը, աւելի

ջերմեռանդ և բարեպաշտ քրիստոնեաներ կը լինէին. մարդիկ եթէ քննէին իրենց սրտերը, աւելի լաւ, ընտիր և արթուն ժողովուրդ կը լինէին և աւելի լաւ կը կապուէին յաւիտենական կենաց և Քրիստոսի հետ:

Զարմանալի անհոգութիւն, որ մենք մեր հոգեոր վիճակը միանգամայն անտես ենք արելայս նշանակում է հոգեկան մեռելութիւն, որով հետեւ անձնաքննութիւնը սովորեցնում է մարդուն լուսաւոր և պայծառ տեսութիւն ունենալ իր հոգեոր և յաւիտենական կեանքի վերայ: Անձնաքննութիւնը մեզ ծանօթացնում է մեր գործերին և ցոյց է տալիս՝ կորչելու ենք արդեօք թէ երկինք պիտի գնանք, կամ մեր հաւատքը աւազի վերայ է թէ հաստատուն վիմի վերայ:

Այժմ սկսենք մեր անձնաքննութիւնը: Ի՞նչպէս պիտի քննենք:

Երբ որ մտնում եմ իմ առանձին սենեակը, նախ պիտի սկսեմ քննել իմ

1. Մտածմննը, թէ արդեօք այսօր Տիրոջ օրէնքների վերայ, Տիրոջ խօսքերին հնագանդուելու վերայ մտածեցի. հոգւոյ փրկութեան համար և յաւիտենական կենաց ու զարհուրելի դատաստանի մասին մտածեցի. եթէ մտածեցի, ինչ որոշումներ արի:

2. Վարը ու բարը. Արդեօք այսօր Փրկչիս նման համբերող եղայ, բարկութիւնս սանձեցի, հպարտութիւնս ոտնակոխ արի, նախանձողու-

Թիւնս անդունդ գլորեցի, շարութիւններս ու հայհոյութիւններս մեռցրի մէջս:

3. Խօսքերը. Արդեօք խօսքերս Աւետարանի աղով համեմած էին, խօսքերիցս քաղցրութիւն էր բուրում թէ դառնութիւն, խօսքերովս եղայրներիս սրտերը քաղցրացրի, շահեցի և այսպիսով շինութիւն եղաւ թէ դառնացրի, կոտրեցի և այնպիսով աւերմունկը եղաւ:

4. Գործքերը. Արդեօք այսօրուան գործերս արդարութեամբ էին, ճշմարտութեամբ էին, արդարութիւնով չափեցի, արդարութիւնով կշռեցի, արդարութիւնով տուի, արդարութիւնով ստացայ: Ի՞նչ պիտի անէի, որ մոռացել եմ կամ զանցառութեան տուել ու չեմ արել և կամ ի՞նչ պիտի չանէի՝ որ արել եմ:

5. Պատահմունքները. Արդեօք այսօր Տէրից ի՞նչ աւանձին ողորմութիւն եղաւ ինձ՝ որին չէի սպասում, կամ իմ բարեկամներիցս ու սիրելիներիցս ի՞նչ տրամաւթիւն լսեցի. արդեօք այս տրամաւթիւնը ինձ զգուշացնող միջոց եղաւ:

6. Հաւատքը. Արդեօք Քրիստոսի կատարեալ ու կենդանի հաւատքով եմ զեկավարում, հաւատքով աւելի երկնքի հետ եմ կապուած թէ թերահաւատութեամբ աշխարհի հետ. արդեօք հաւատութեամբ եմ, որ աշխարհը ունայն է և յարդի պէս կրակով պիտի այրուի. հաւատութեամբ եմ, որ աշխարհի սէրը Աստուծոյ առջե թշնամութիւն է. հաւատութեամբ եմ, որ վրկութեան նախապատրաստութիւնը այս կեանքումն է. հաւատութեամբ եմ, որ

արդարները հանդերձեալում կեանք ունին, իսկ
մեղաւորները տանջանք:

7. Աէր. Արդեօք սէրս աւելի երկնքի հետ է
թէ աշխարհքի. արդեօք աստուածսիրութեան,
ընկերսիրութեան վերայ գաղափար ունիմ, ճշշ-
մարիտ սիրով եմ սիրում ընկերիս թէ կեղծաւոր:

Ահա այսպէս և սորա նման պէտք է քըն-
նենք մեր անձերը և այսօրուանից յետ դառ-
նանք գէպի մեր մանկութեան օրերը, տեսնենք
թէ ինչ հետքեր ենք թողել մեր ետեկց, ար-
դեօք նախանձել ենք, բարկացել ենք, խարել ենք,
գողացել ենք, Աւետարանին անհնազմնդ ենք
եղել: Այս բոլորը ըննելուց յետոյ, պէտք է մէկ
մէկ մեր յանցանքները խոստովանենք Յիսուս
Քրիստոսի, Հօր ամենակալի և Սուրբ Հոգւոյ
առաջ:

Յանցանքները խոստովանելիս պէտք է նկա-
րագրել յանցանքը և նորա մեծութիւնն ու զար-
հուրելի պատիժը և խօսք տալ այլ ևս չանելոււ
Օրինակ.

Հպարտութիւն. Մարդիկ կարծում են, թէ
մեղքը միայն սպանութիւնն է, ոչ, նայենք հպար-
տութեան վերայ, թէ ինչ զարհուրելի է նրա
պատիժը:

Առաջին հրեշտակները հպարտացան, ամ-
բարտաւանացան և այդ պատճառաւ բարձրու-
թիւնից մինչև անդունդ գլորուեցան և կացած
են մինչև դատաստանի օրը, որ զարհուրելի կրա-
կով այրուեն:

Անհնազանդութիւն. Աղամը անհնազանդութեան պատճառաւ զրկուեց գրախտի վայելչութիւնից և երկիրն էլ իր հետ անիծուեց, ինքը և իւր սերունդները մեռան ու գժոխք իջան։

Ատելութիւն. Ինչպէս Կայէնը իւր եղբօրը ատեց մինչև որ նրան սպանեց և անիծուեց, նորա վերայ անիծից նշան դրուեց, որպէս զի ոչ ոք չսպանէ նրան։

Տաքաթ շպահելը. Խորայէլացին փայտ ժողովելու համար ինչպէս քարկոծուեց։

Գողութիւնը. Աքար Զարայն ինչպէս քարկոծուեց։

Ահա այսպէս մեր յանցանկների մեծութիւնը տեսնելուց յետոյ, նացա զարհուրելի պատիժներին ծանօթանալուց յետոյ, կը տեսնենք, որ մենք հպարտութեան անդունդն ենք գլորուած Աւետարանին անհնազանդ լինելու համար, անէծքի ու մեղքի տակն ենք բեռնաւորուած. աչքի առաջ ներկայացնելով այդ մեղքերի համար սպասող անխուսափելի մահն ու զարհուրելի պատիժը, մենք սրտանց կը զզանք և արտասուքով կը սկսենք աղօթել մեր մեղքերը քաւելու համար։

շատ բարութեան զիւրը առ օհութաւունեամ
շանգըրոյ ժամանոց ու լուսուրու մանե
շանդ պատկեմ առէ ու ու աղջիկը և բիւրե
տակե զիւրեք առ մասն ուժօքուարն զիւ և
զարդ ու ու զարդու մերու առ օհութամ
շանդ առ բանարու **Գ.** աղջիկը ու աղջիկը զարդ
և ար աղջիկը առ աղջիկը մասն ու նիւթեան բարձր աղջիկը

**Քանիցս անգամ թէ ուտիցեկ զիացս
զայս, եւ զբաժակս ըմպիցեկ, զիահն
Տեառն պատմեցեկ, մինչեւ եկեսցէ նա:**
(Ա. Կորեք. ԺԱ. 26.)

**Քանի անգամ որ այս հացը ուտիէ
եւ այս բաժակը խմէք՝ Տիրոջ մահը
պատմեցեկ, մինչեւ որ խմէք գայ:**

**Առաքեալն այս խօսքերով երեք բան է յիւ
շեցնում:**

**Ա. Որ մենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի
մարմինն ու արիւնը ճաշակենք: Յիսուս Քրիս-
տոսն էլ հացն ու դիմին տուաւ իր աշակերտ-
ներին և ասաց. «Առեք կերեք ու խմէք, այս է
իմ մարմինն ու արիւնը». «Որ ուտէ զմարմին
իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենա-
կանս և ես յարուցից զնա յաւուրն յետնում »»**

**Բ. Որ մենք, երբ ցանկանում ենք Տիրոջ
սեղանին, այն երկնաւոր հացին ու բաժակին մաս-
նակից լինել, պէտք է Տիրոջ մահը մեր միաքը բե-
րենք: Յիսուս Քրիստոս, երբ հացն ու դիմին**

տուաւ, ասաց. «Զայս արարէք առ իմոյ յիշատակիւ»

Գ. Առաքեալը մեզ սիրո է տալիս, մեզ
միսիթարում և ուրախացնում է, որ Յիսուս Քրիս-
տոս պէտք է դայ. ինքը Յիսուս Քրիստոս ասում
է. «Յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամ-
պով և փառօք բազմօք»»

Բայց մենք բացատրենք բնաբանի երկրորդ
մասը, ուր ասուած է. «Տիրոջ մահը պատմեցէք»»

Քրիստոնէի գլխաւոր մտածմունքը, գլխաւ-
որ միտքն ու խորհուրդը Յիսուս Քրիստոսի մահը,
չարչարանքը և խաչուիլ պէտք է լինի, որովհետե-
եթէ մենք աշխարհին և նրա հարստութեան,
զուարճութեան ու զայելչութեան, մարմնոյ հեշ-
տութեան ու ցանկութեան մասին ենք մտածում,
հեռանում ենք երկնքից, հեռանում ենք Յիսուս
Քրիստոսից և Սուրբ Հոգուց, որովհետեւ մարդու
սիրտը, միտքը, բնութիւնը այնքան փոփոխա-
կան է, որ միշտ գէպի մարմնոյ հեշտութիւններն
ու մեղքն է թեքըում. «Մարդու սիրտը ամենից
խարեբայ ու չարն է» (Երեմիա):

Այսպէս երբ որ աշխարհային ցանկութիւնների, վայելչութիւնների և զուարճութիւնների
մէջ ընկած, մոռանում ենք յաւիտենական՝ կեանքը
և հոգւոյ փրկութիւնը, պէտք է Տիրոջ մահը
միտք բերենք. Թէև մենք կարող ենք ուրիշ
առաքինի մարդկանց մահն էլ, պատմութիւնն էլ
մեր միտքը բերել, բայց աշխարհումը ոչ մի մարդ
ոչ մի փիլիսոփայ, ոչ մի պատմութիւն և ոչ մի
հանճարեղ գրուածք մեր հոգին, մեր սիրտը այն»



քան չի կարող շարժել դէպի Աստուածակրութիւն, ընկերսիրութիւն, ծնողասիրութիւն, կարեկցութիւն, գութ, մարդասիրութիւն, համբերութիւն, հնազանդութիւն և այլն, որքան Յիսուս Քրիստոսի մահը, որովհետեւ աշխարհքում ոչ մի մարդ, ոչ մի ծնող, եղբայր, քոյր, աղջական, բարեկամ, մեզ այնքան չսիրեց, որքան Յիսուս Քրիստոս Նա մեզ այնքան սիրեց, որ մեզ համար սիրոյ և հաշութեան պատարագ, քաւութեան զոհ եղաւ, ընտիր ընծայ և ողջակէզ եղաւ, ահա դորա համար էլ Յիսուս Քրիստոսի այդ անհուն սէրը մեզ ստիպում է, որ իր մահը մեր միտքը բերենք*

Երբ որ Յիսուսի մահը մեր միտքն ենք բերում, մենք մի ուրիշ աշխարհ ենք գնում, հոգւով վերանում ենք երկինք, այնտեղ աստուածային և երկնային հանդէսներ ու հրաշալիքներ ենք տեսնում, այնտեղ կենդանի հաւաաք, հաստատուն յոյս, անկեղծ սէր և առաքինի հոգու յաղթանակ ենք տեսնում։ Այնտեղ տեսնում ենք, թէ երկնային սէրը ինչ պատուզ է բերում և թէ հաւատոյ թուլութիւնն ու երկմտութիւնը ինչ հետեւանքներ է ունենում։

Երբ որ Յիսուս Քրիստոսի մահը մեր միտքն ենք բերում, մենք հոգւով ամենից առաջ Դէմսէմանի պարտէզն ենք գնում, տեսնում ենք, որ Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոսը աշխարհի, մեր մեղքերի համար կէս գիշերին երեսի վերայ ընկած, աղի արտասուզ, արիւն քրտինք է թա-

փում Հօր Աստուծոյ առջև, աղօթք է անում, աղաշում, խնդրում է, որ Հայր Աստուծը մեր մեղքերը ներէ»

Որովհետեւ աշխարհի մեղքերը այնքան շատ էին, որ ովկիանուների ջրերը բաւական չէին լուանալու և սրբելու, աշխարհքումն գտնուած բոլոր ոչխարները և եզները, եթէ զոհ լինէին, չէին կարող մարդոց մեղքերը քաւել, դորա համար Աստուծոյ արդարութիւնը ստիպում էր, որ Յիսուս Քրիստոս ամբողջ մարդկութեան համար լաց լինէր և իւր արտասուրքով մարդկանց մեղքերը լուանար, որովհետեւ մարդը Աստուծոյ առողջ շատ յանցաւոր էր»

Աստուած մարդուն ստեղծեց, նորա համար գեղեցիկ դրախտ պատրաստեց, մարդուն նրա մէջ դրաւ, որ նա դրախտային կեանք անցկացնէ, վայելութիւն ունենայ, դրախտի ընտանիք լինի, բայց մարդը Աստուծուն չհնազանդուեց, նորան մոռացաւ, նորա պատուիրանները ոտնակոխ արաւ, սատանային հնազանդուեց, ճշմարիտ Աստուծուն թողեց, սուտ աստուածներին պաշտեց, լուսից հեռացաւ, խաւարի մէջ բնակուեց, երկինքը թուզեց, սանդարամետ իջաւ: Յիսուս Քրիստոս աեւսաւ, որ մարդը արտասուրքով էլ չի փրկուիլ, պատրաստուեց, որ ինքը միանդամայն քաւութեան զոհ լինի, հաշտութեան անուշահոտ պատրագ լինի, որ Հայր Աստուծուն մարդկանց հետ հաշտեցնէ. դորա համար չարչարանաց ու մահուան բաժակը ձեռքն առած աղաջում էր

Հայր Աստուծուն. «Հայր, եթէ հնար է, այս բառ ժակը թող ինձնից անցկենայ, բայց ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս դու» (Մատթ. իջ. 39):

Յիսուս Քրիստոսի այս պահնչելի տեսարանի ժամանակ տեսնենք միւս կողմում ի՞նչ էր կատարւում, մենք տեսնում ենք, որ Աստուծոյ Որդի Յիսուս Քրիստոսը երկնքից մինչև երկիր խոնարհած, մարդոց մեղքերի համար ազօթք է անում, աղաչանք է անում. բայց նորա աշակերտները ամենայն անտարբերութեամբ խոր քնի մէջ են ընկած։ Յիսուս Քրիստոս գալիս է կաթողին մօր պէս վեր է կացնում ու ասում. «Սիրելիք, այդպէս մի ժամ չկարողացաք ինձ հետ արթուն մնալ։ Արթուն կացեք և ազօթեցեք՝ որ փորձութեան մէջ չընկնեք» (Մատթ. իջ. 42):

Մենք էլ ամբողջ ժամեր, ամբողջ օրեր զուհում ենք մարմնոյ համար, բայց չենք բարեհաճում մեր հոգու փրկութեան համար մի ժամ ազօթել։ Յիսուս Քրիստոսի պատուէրն է՝ «Յամենայն ժամպարտ է կալ յազօթս և մի ձանձրանար» — «Արթուն կացեք, յամենայն ժամ ազօթս արարեք, զի մի անկանիցիք ի փորձութիւն»։ Բայց մենք շուտ շուտ մոռացութեան ենք տալիս փրկչական այս պատուէրը։

Այդ նորանից է, որ թէև մենք դէպի Աւետարանն ենք կոչուած, բայց Աւետարանի ոգին դեռ չենք ըմբռնել, դէպի Աւետարանի լոյսն ենք կանչուած, բայց Աւետարանի լոյսը չենք ճա-

նաշել. դէպի քրիստոնէական հաւատն ենք կու չուած, բայց չունինք կենդանի հաւատք, հաւատուն յոյս և անկեղծ սէր. այս ևս նորանից է, որ մեր անարժան գործերով հեռացրել ենք մեզնից Ա. Հոգին, որ այդ բոլորի աղբիւրն է. Առաքեալներն էլ, քանի որ Սուրբ Հոգին չէին ստացել, մարդկային փորձանքին չէին դիմաւ նում. փորձանքը եկաւ թէ չէ, բոլորն էլ Քրիստոսին թողին ու փախան. որը նրան ծախում էր, որն էլ ուրանում:

Մենք էլ ենք այդպէս. երբ որ տեսնում ենք մի հալածանք է դալիս, Քրիստոսին ուրանում ենք. երբ որ տեսնում ենք կրօնի և եկեղեցւոյ դէմ հալածանք է դալիս, ազգերի, հայրենիքի հալածանք է դալիս, թողնում ենք և փախում. այդ նրանից է, որ Քրիստոսի վերայ կենդանի հաւատք չունինք, կրօնի և եկեղեցւոյ ոգի չունինք, հայրենիքի սէր չունինք, դպրոցի և կրթութեան ճաշակ չունինք, վախկու և թուլասիրա ենք, մեր նախնեաց քրիստոնէական հաստատուն հաւատքը սառել է մեր մէջ:

Այսպէս երբ Սուրբ Հոգւոյ շնորհը չունինք, կրօնի և եկեղեցւոյ ոգի չունինք, հայրենիքի սէր չունինք, ամեն բան մոռանում ենք, ինչպէս որ առաքեալները, քանի որ Սուրբ Հոգին չէին առել, Քրիստոսին ուրանում էին, իսկ երբ որ Սուրբ Հոգին առան, իրանց անձը ուրացան Քրիստոսի համար. Պետրոս քանի որ Ա. Հոգին չէր առել տեսնելով Յիսուսին շրջապատուած երկիւղածու-

թեամբ հետեւող ժողովրդով ասում էր. «Դու Աստուծոյ Որդի ես», բայց տեսնելով դատի մասնուած՝ ուրանում էր և ասում» «Երան չեմ ճաշնաշում»:

Մենք էլ Յիսուս Քրիստոսի համբերութիւնը, հնազանդութիւնը պիտի ունենանք: Նատ անդամ երբ տեսնում ենք, որ չարագործները խկոյն չեն պատժւում, թերահաւատում ենք Աստուծոյ համբերութեան և երկայնամսութեան մէջ, թէ ինչ չու այս ինչ ռքը չի պատժւում: Բայց բարի և սիրելի Յիսուսը միշտ մեղաւորների դարձին է սպասում, ինչպէս Պետրոսին դարձեալ առաքելութեան կանչեց: Նատ անդամ մեղաւորների դարձի համար զանազան միջոցներ է որոշում: Որ նրանք առիթ լինին իրանց դարձին և ապաշխարանացը: Եյդպէս աքաղաղը առիթ եղաւ Պետրոսին յիշեցնելու Յիսուս Քրիստոսի խօսքը: Յիշրաւի երբ որ աքաղաղը կանչեց, Պետրոսը իր միտքը բերեց մի օր առաջ Քրիստոսի հետ ունեցած խօսակցութիւնը՝ «Եթէ ամենքն էլ գայթակղուեն քեզանից, ես երբէք չեմ դայթակղուիլ» Յիսուսն էլ ասաց. «Պետրէ, մինչեւ հաւի խօսիլը երեք անդամ ինձ կուրանաս» Պետրոս այս խօսքը միտքը բերելով, դարձաւ Յիսուսին նայեց, Յիսուսն էլ Պետրոսին նայեց: Յիսուս Քրիստոսի այս հայեացքը Պետրոսին դարձի և ապաշխարութեան հրաւիրեց: Պետրոսը Յիսուսի երեսը նայելուց յետոյ, էլ չկարողացաւ դիմանալ, դուրս եկաւ ու դառնապէս լաց եղաւ: Պետ-

ըսուի արտասառքը իր համար ծով դարձած, միտքը բերեց իր ծովի մէջ ընկված ժամանակը, երբ ծովի ալիքները նրան խեղդում էին և նու ձայն տուեց Յիսուսին տաելով. «Տէր, ազատ! ինձ» և Տէրը ձեռքը պարզելով, դուրս քաշեց նրան ջրից ու տաց. «Թէրահաւանո, ինչո՞ւ երկ մոռեցիր?»

Երբ որ Յիսուսի մահը մեր միտքն ենք բերում, մենք հոգւով Յիսուսի հետ Գոզգովմայ ենք բարձրանում և կարծես մի աներեսյթ դօրութիւն, մի աներեսյթ ձեռք մեր սիրու, մեր միտքը, մեր հոգին այնաեղ է քաշում. ինչո՞ւ:— Արողիետե այնաեղ է խաչեցեալ Յիսուսը, այնաեղ է հաշութեան պատարագը, կենաց հացը, կենդանի ջուրը: Մենք այնաեղ տեսնաւմ ենք, որ Աստուծոյ Արքի Յիսուս Քրիստոսը անմեղ դառնան նման, վառչերով պատկուած, խաչի վերայ բարձրացրած, մարմինը խոցուած, մեր մեղքերի համար կենդանի զոհ է դաւնում: Մի կողմից ամբողջ աշխարհի մարդկանց համար հօրից ներողութիւն է խնդրում, մի կողմից մեղաւոր աւագակին դրախտն է հրաւիրում և մի կողմից էլ աստուածային սիրոյ և ընկերսիրութեան ու մարդասիրութեան կրակովը զոհագործում է:

Այնաեղ Յիսուս Քրիստոսի անհապական արիւնը մաքրութեան և սրբութեան ովկիանոս դարձած, միլիօնաւոր մարդիկ—միլիօնաւոր հոգիք այդ լուսոյ և արդարութեան Ովկիանոսի մէջ լուացըում ու մաքրում են, դորս համար

մեր սրտերն ու հոգիք այնտեղ են սլանում: Այս-
տեղ երբ տեսնում ենք, որ մեզաւոր աւազակը
դրախտ է գնում, մենք էլ նորա պէս ասում
ենք՝ «Տէր, ինձ էլ յիշիր Քո արքայութեան մէջ»:
Այստեղ մենք տեսնում ու լսում ենք, որ Յի-
սուսն ասում է մօրը՝ «Մայր, ահա քո որդին» և
իր սիրելի աշակերտին թէ «ահա քո մայրը»:
Այստեղ որդիական ծնողասիրութիւնն ու երախ-
տագիտութիւնը փայլում է իր բուն նշանա-
կութեամբ: Յիսուս Քրիստոս որքան որ սիրում
է Հօր Աստուծուն և կատարում է նորա կամքը,
նոյնքան սիրում և պատռում է մօրը: այնպէս
որ իր անտանելի տանջանքների և չարչարանք-
ների մէջ էլ չի մոռանում նորան: Բայց մենք
մեր յաջողութեան մէջ անդամ ոչ միայն մոռա-
նում, այլ արհամարհում ենք մօրը:

Այսպէս ուրեմն Տիրոջ մահը միշտ մեր
միտքը բերենք, Յիսուս Քրիստոսի նման ծնողա-
սէր լինինք, որ Պետրոսի և աւազակին նման թու-
զութեան արժանանանք, որ նորա աշակերտների
նման հալածանքների ժամանակ հաւատոյ մէջ
չը թուլանանք, որ ազօթքից չը ծուլանանք, ինդ-
րենք Յիսուս Քրիստոսին, որ մեր հոգիները ար-
թուն պահէ և իր հետ ազօթակից գարճնէ, միշտ
Տիրոջ մահը մեր միտքը բերենք: Ամէն:

անց պրելուսը ուր գտնուի և մզի խոնդելու
առաջ դիմութիւնը ու դիմութիւնը ու և հան մաց
ովեն, միշտակա ովեն աւաճելու ամսն այս և պրե
առաջ գտնուի պրելուսը գտնուի ամսն այս և պրե
գրի գույքը գույքը գույքը գույքը գույքը գույքը գույքը գույքը
Ո.
«Եկայք առ իս ամենայն վաստակ-
եալ եւ բեռնաւոր եւ ես հանգուցից
զձեզ» :

Եկայք ինձ մօս ամեն վաստակած-
ներ եւ բեռնաւորներ եւ ես կը հան-
գրստացնեմ ձեզ:

Աշխարհի Փրկչի հրաւերն է այս Ամեն
յոդնածներին ու բեռնաւորուածներին կանչում
հրաւերում է իր մօտ, որ հանգստութիւն տայտ-
Յիսուս Քրիստոս ինչ սիրով որ երկնքից եր-
կիր իջաւ, ինչ սիրով որ մեր մեղքերը սրբելու,
մեր հոգիները փրկելու համար խաչն առած
Դողգութայ բարձրացաւ, ինչ սիրով որ մեզ հա-
մար պատարագ ու հաշտութեան զոհ դարձաւ,
նոյն սիրով կանչում հրաւերում է մեզ իր մօտ
ասելով. «Ով աշխարհի ցաւերից ու վշտերից յոդ-
նածներ, ով աշխարհի հոգսերից, նեղութիւն-
ներից և մեղքերից ծանրաբեռնուածներ, եկեք
ինձ մօտ և ես ձեր սրտերին ու հոգիներին
հանգստութիւն կը տամ»»

Աշխարհի Փրկչի այս հրաւերը միանգամայն
երկնային ուրախութիւնով, երկնային միսիթա-

բութիւնով լիքն է, Յիսուսի այս հրաւերը այնաքան մեծ է, որ աշխարհը իւր գոյութիւնովը շատ փոքր է նորա մօտ, որովհետեւ մեր որտերին, մեր հոգիներին այնպիսի պարգևներ, այնպիսի բարիքներ է խոստանում, որ աշխարհում ոչ մի գիտութիւն, ոչ մի հարստութիւն չի կարող տալ Ինչու, — որովհետեւ այս հրաւերը սիրալիր է, առառուածային ու երկնային է:

Սիրալիր է, որովհետեւ մեր Փրկչի ձայնն է մեզ հրաւիրում, ասատածային է, որովհետեւ Աստուծոյ Որդի Յիսուս Քրիստոսն է հրաւիրում. և երկնային է, որովհետեւ մեր հոգիներին ու սրտերին հրաւիրում է իր մօտ, երկնքի թագաւորութեան մէջ, յաւիտենական կեանքի մէջ, լուսեղին ու սիրոյ աշխարհում հանգստացնելու:

Յիսուս Քրիստոս մեր հոգիները այն փառաւոր կեանքի մէջ հանգստացնելու, երկնքի թագաւորութիւնը ժառանգել տալու, մեր հաւատոյ պակասութիւնը լրացնելու և մեր հաւատոյ թուլութիւնը ամրապնդելու համար այնապիսի բաներ արտւ, այնպիսի հրաշքներ գործեց, որ երկինքն ու երկիրը միանգամայն շարժեցաւ:

Այսպէս էլ Աստուած Խորայէլի ժողովրդին՝ երբ որ Եգիպտոսի գերութիւնից, Եգիպտոսի ծառայութիւնից պէտք է հանէր, Աւետեաց երկիրը ժառանգել տար, կաթն ու մեզը բղիսող երկիրը պիտի տանէր, թերահաւատատ ժողովրդին հաւատի բերելու բնչ մեծամեծ բաներ արեց: Նրանց առա-

յեր ծովը բաժանեց, նրանց համար գառը ջրերը
քաղցրացրեց, նրանց համար ապառաժ քարերից
ջուր բղխեցրեց, նրանց համար երկնքից հաց—
մանանայ տուեց, նրանց հանդերձները չը հնացան,
կօշիկները չը մաշտեցան, բայց դարձեալ տրամա-
ջում էին Մովսիսից և ասում, թէ լաւ էր, որ
եգիպտասումը մեռնէինք, այնտեղ առատ հաց
ու լի կաթսաներով միս ունէինք։ Նոցա սրտերը
շարութիւնով այնքան կոշտացել էին, որ չէին
հաւատում թէ իրենք Աստուծոյ խոստացեալ եր-
կիրը պէտքէ ժառանգեն։

Այսպէս էլ մենք և ամբողջ երկիրը—մարդ-
կութիւնը, երբ որ սատանայի իշխանութեան տակ
մեղի մէջ մեռած էինք, մահը մեզ վերայ թա-
գաւորում էր, Աստուծոյ Որդին Յիսուս Քրիս-
տոս, ինչպէս երկնային Մովսէս, եկաւ աշխարհ
մեզ ձրի շնորհքով փրկելու, մեր մեղքերը սըր-
բելու, մեր հոգիները յաւիտենական մահից ա-
զատելու և սատանայի իշխանութիւնից հա-
նելու, վերին խոստացեալ երկիրը տանելու, ուր
մեղի և կաթի փոխանակ սէր և լոյս է բըզ-
խում։ Բայց մարդոց վերայ հաւատք չը գտաւ։

Յիսուս Քրիստոս իրեն աստուածային լե-
զուով, իրեն աստուածային խօսքերով շատ հրա-
ւերներ և քարոզներ կարդաց, շատ երկնային
ճշմարտութիւններ յայտնեց, ասաց. «Ես եմ աշ-
խարհի լոյսը, յարութիւնն ու կեանքը. Ես եմ կե-
նաց հացը և ճշմարիս ըմպելիք. Ես եմ ճշմարիս
ճանապարհը, կենաց գուռը. Ես եմ խոկական ու

Ֆշմարիու Հովիւը և իմ անձս ոչխարներիս համար պէտք է զոհեմ:

Աշխարհքի լոյս. Յիրաւի Յիսուս Քրիստոս տեսնելով, որ մարդիկ երկնային լուսից հեռացած խաւարի մէջն են շրջում և խաւարի գործքեր են կատարում, արդարութեան գործքերը լուսի նմանեցրեց, իսկ չարութեան գործքերը խաւարին, և կամեցաւ, որ մարդկանց չարութեան գործերից հեռացնի, դադարեցնի չար գործելուց և արդարութեան վարժեցնի. և ասաց. «Ես եմ աշխարհի լոյսը. ով որ իմ ետևից գայ, խաւարի մէջ չի մնալ, այլ կենաց լոյսը կունենայ». այսինքն ով որ ինձ հնազանդուի, իմ խօսքերս լսի և կատարի, յաւիտենական կեանք կունենայ:

Յարութիւն եւ կեանք. Յիսուս Քրիստոս տեսնելով, որ մարդիկ յաւիտենական կեանքից զըրկուած մեղքի մէջ են ապրում և մեռնում յաւիտենական մահով թէ այստեղ և թէ հանդերձեալում, կամեցաւ նոցա երկրորդ մահից—յաւիտենական մահից ազատել և ցոյց տալ, որ փառաւոր յարութիւն և կեանք կայ. ասաց՝ «Ես եմ յարութիւնն ու կեանքը, ով որ ինձ հաւատայ, թէպէտ և մեռնի, բայց պիտի ապրի»:

Հաց եւ ջուր. Յիսուս Քրիստոս տեսնելով, որ մարդիկ ապրում են մարմնոյ համար, ու տում են մարմնոյ համար, խմում են մարմնոյ համար, բայց իրենց հոգիքը երկնային հացին և երկնային ջրին քաղցած ու ծարաւի են, Յիսուս

այս խօսքերը հոգեոր կերակրի նմանացրեց և
Սուրբ Հոգւոյ իմաստութիւնը՝ ջրի, և ուղեցաւ
հասկացնել, որ ինչպէս մարմինը առանց ուտիշ-
լու և խմելու չի կարող ապրել, այնպէս էլ առանց
հոգեոր կերակրի չի կարող ապրել և ասաց. «Ես
եմ կենաց հացը, ով որ այս հացից ուտէ, յա-
փուեան կապրի, ով որ ծարաւ է թնդ ինձ մօտ
գայ, ես նրան կենդանի ջուր կը տամ, որ յաւի-
տեան չի ծարաւիլ»:

Ճանապարհ. Յիսուս Քրիստոս տեսնելով, որ
մարդիկ երկնքի ճանապարհից հեռացած, չարու-
թեան ճանապարհը բանած, դէպի անգունդ են
վազում, ուղեցաւ, որ նրանց այդ չարութեան
ճանապարհից յետ դարձնի, դէպի երկնք տանի
և ասաց. «Ես եմ ճշմարիտ ճանապարհը, մէկը չի
կարող Հօր մօտ գնալ եթէ ոչ ինձանով»:

Հովիլ. Յիսուս Քրիստոս տեսնելով, որ Իս-
րայէլի ժողովուրդը Աստուծոյ խօսքերով, երկ-
նային խմաստութիւններով չի կրթւում ու չի
դաստիարակւում և Աստուծոյ խօսքը ոչ ոք քա-
րոզող և տարածող չկայ, ժողովուրդը բարոյա-
պէս մեռած է, այնպէս անտէր ու անգլուխ մնա-
ցած է ինչպէս մի հօտ առանց հովուի, և բացի
այն, որ Իսրայէլի հովիւնները վարձկան հովիւ-
ների նման աւելի իրանք ենք արածում քան թէ
հօտն են արածեցնում և մի նեղութեան ու հա-
լածանքի ժամանակ հօտը—ժողովուրդը թողնում
վախչում են, ասաց. «Ես եմ ճշմարիտ հովիւը, որ
իմ անձս իմ ոչխարներիս համար պէտք է զոհեմ»:

Արդարեւ աշխարհի վրկիչ Յիսուսը ձշմարիտ և բարի հոգուի նման դաւազանը ձեռքն առած, մախաղն ուսին, ոտարորիկ դիւզից դիւզ, քաղաքից քաղաք իրեն կորսուած ոչխարհերի ետեից ընկած ման եկաւ—մեր ետեից ման եկաւ։ Դրամը կորցրուծ կոոջ նման ճրագը ձեռքն առած իր թաղաւորական կորսուած պատկերին ման եկաւ, բայց շնտ ման եկաւ և աստուածային քաղցր ձայնով կանչեց և ասաց. «Ինձ մօտ եկէք, ով յոդնածներ ու բեռնաւորուածներ ես ձեզ հանդսութիւն կը տամ»։

Բայց որովհետեւ մարդիկ իրանց սիրան ու հոգին երկնքից հեռացրել և այդպիսով երկ նային լուսից զրկուել էին, որովհետեւ մարդոց աչքերը մահուան խաւարով ծածկուած էին, իրանց երջանկութիւնը և հանդիսաք աշխարհի մէջն էին կարծում, գորա համար էլ իրենց հոգւոյ երջանկութիւնը հարստութեան մէջն էին որոնում, ոմանք գոյքերի և կալուածների մէջ, ոմանք շքեղ ու գեղեցիկ տների և պալատների մէջ, ոմանք հաղուստի և զարդարանկների մէջ, ոմանք ուտելու և խմելու մէջ, ոմանք վայելչութիւնների և զուարճութիւնների մէջ և ոմանք էլ տասն հազարների և հարիւր հազարների մէջն էին կարծում և այդ նպատակով էլ չարչարում, տանջում, քրտինք էին թափում ու հոգւով ու մարմնով յոդնում էին, բայց երբէք իրենց հոգւոյ երջանկութիւնը այդ հոդ ու փոշի դառնաւ-

լու բաների մէջ չեին կարողանում գտնել, դորա
համար Յիսուս Քրիստոս այդպիսի յոդնածներին
հրաւիրում էր թէ «Ինձ մօտ եկեք, ովք բոլոր
յոդնածներ, ես ձեզ հանդսութիւն կըտամ»։

Յիսուս Քրիստոս տեսնելով, որ մարդիկ ճշշ-
մարտութեան ճանապարհից շեղուած, ասուուա-
ծային պատուիրաններից հեռացած, յաւիտե-
նական կեանքը, հոգւոյ փրկութիւնը մոռացած
իրենց երջանկութիւնը, իրենց հանդսութիւնը
մարմնոյ ցանկութիւնների մէջ են կարծում, դորա
համար շարունակ չարութիւններ են անում, թշ-
նամութիւն, ատելութիւն, նախանձ, բարկու-
թիւն, կոփու, վիճաբանութիւն, բամբասանք, երկ-
պառակութիւն և այլ մեղքեր են գործում այն
նպատակով, որ հարստութիւն գիզեն և ապա
հանդիսա վայելեն, բայց մեղքերով աւելի ծան-
րաբեռնուում են, Յիսուս այդպիսի մեղքերով
բեռնուածներին հրաւիրում էր թէ «Ինձ մօտ
եկեք, ամենքդ, որոնք մեղքերով էք ծանրաբեռ-
նուած, ես ձեզ հանդսութիւն կըտամ»։

Բայց որովհետեւ մարդիկ բարոյապէս և
միանդամայն հոգւով և մարմնով մեղքի մէջ մե-
ռած էին, կեանքը նրանց վերայ չեր ներգոր-
ծում, երկնային լրյուղ նրանց սրտերում չեր թա-
փանցում, ինչպէս որ մեռած մարդուն բնու-
թեան գեղեցկութիւնները չեն ներգործում և
գեղեցիկ երաժշտութեան ձայնը նրանց սրտի
լարերը չեն շարժում, այնպէս էլ Փրկչի անոյշ
խօսքերը նրանց մեռած սրտերին չեին ներգոր-

Ճումբ։ Դորա համար Յիսուս Քրիստոս մեծամեծ
հրաշքներ գործեց, հիւանդներին բժշկեց, դիւ-
տահարներին և անդամալոյժներին բժշկեց, ոտքի
կանգնեցրեց, բորսոներին սրբեց, մեռելներին
յարութիւն տուեց, բայց մարդկանց հաւատն
այնքան պակաս էր, որ ասում էին թէ «Դևերի
Խշանութիւնով է հանում դեերին»։ Յիսուս տե-
սաւ, որ հրաշքներն էլ չեն ներգործում նրանց սրբ-
տերի վերայ, ուստի ամբողջ մարդկութեան համար
միանդամայն խաչ բարձրացաւ և խաչի վրայից
իւր անապական արիւնը ցանեց մարդոց սրտերի
վերայ և այսպէս ձրի շնորհքով մեզ մեր մեղ-
քերից սրբեց և մեր հոգիվը յաւխտենական կո-
րուստից ազատեց երկնքի արքայութեան մէջ
հրաւիրելով և ասաց. «Ինձ մօտ եկեք, ով ծանրա-
քեռնուածներ, ես ձեզ կը հանդստացնեմ»։

Ի՞նչ գեղեցիկ հրաւէր է այս։

Աստուծոյ որդին Յիսուս Քրիստոս երկնքը
և իւր երկնային աթոռը թողեց, եկաւ այս աշ-
խարհ մեր մեղքերը սրբելու համար, մեր հոգիւ-
ները փրկելու համար և չարչարուեց, փշերով
պատկուեց, խաչը բարձրացաւ, քացախ ու լեզի
խմեց, մահը ճաշակեց, որպէս զի մեզ երկնք
հրաւիրէ։ Ուրեմն Յիսուս Քրիստոսի այս հրաւէրը
ճշմարիտ է և միանդամայն երկնային։

Ինչպէս որ Աստուած Խրայէլի ժողովրդին
Մովսիսի միջոցաւ խոստացաւ Եգիպտոսից հանել
Քանանացւոց երկիրը տանել, որ վազուց հետէ
Աբրահամին էլ խոստացել էր և իւր խոստումը

կատարեց և Մովսիսի ձեռքով Եգիպտասոի դերութիւնից ազատեց, նոյնպէս և մեզ խոստացաւ, որ Յիսուս Քրիստոսի միջոցաւ մեր հոգիքը երկընքի արքայութիւն տանէ, և ահա իւր Միածին Որդւոյ ձայնով հրաւիրում է մեզ՝ «ինձ մօտ եկէք, ով աշխարհային հոգսերով վաստակածներ, ևս ձեզ հանգստութիւն կը տամ»։

Բայց Աստուած մեզ աւելի մեծամեծ բարութիւն արեց քան թէ Խորայէլի ժողովրդին, որովհետև Աստուած Մովսիսին ուղարկեց Խորայէլի ժողովրդին հրաւիրելու, իսկ մեզ հրաւիրելու ուղարկեց իւր Միածին որդի Յիսուս Քրիստոսին։ Ահա այս է ամենամեծ բարիքը։

Արդարեւ Աստուած Մովսիսի միջոցով Խորայէլի ժողովրդին Եգիպտասոի ծառայութիւնից հանեց, բայց Յիսուս Քրիստոս մեր հոգիները ստանայի իշխանութիւնից և յաւիտենական մահից ազատեց։

Մովսէս իւր գաւազանով ժողովրդին ծովից ու ջրից անցկացրեց, իսկ Յիսուս Քրիստոս կւր խաչով մեզ մեզքի ծովից ազատեց։

Մովսէս ժողովրդին երկնքից մանանայ տուեց, կերան՝ բայց գարձեալ մեռան, իսկ Յիսուս Քրիստոս իւր մարմինն իբրևերկնային հաց մեզ չնորհեց, որ ուտողը յաւիտեան պիտի ապրի։

Մովսէս քարից ջուր հանեց և ժողովրդին խմացրեց, բայց գարձեալ ծարաւեցան, իսկ Յիսուս Քրիստոս մեզ իւր աստուածային կողից

կենդանի ջուր տուեց, որ խմողը յաւիտեանս
չոլխոի ծարաւի:

Եթէ Աստուած Մովսիսի միջոցով ժողովրդին
իւր օրէնքները քարէ տախտակի վրայ գրած
տուեց, մեր Տէր Յիսուս Քրիստոս իւր աստուած
ծային լեզուով խօսեցաւ և իւր խօսքերը մեր
սրտերի, մեր հոգիների վրայ իւր արիւնովը գրեց:

Մովսէս Խարայէլի ժողովրդին Եգիպտասից
հանեց Քանանացւոց երկիրը տարաւ, իսկ Յիսուս
Քրիստոս մեր հոգիները երկրից երկինք, մահից
կեանք, ապականութիւնից անապականութիւն,
շարչարանքից հանդիսատ փոխադրեց և ամենայն
ժամ էլ հրաւիրում է թէ՝ «ինձ մօտ եկը»:

Ի՞նչ փառաւոր և գեղեցիկ բան է հանդիսաւ-
ող Ամբողջ աշխարհի մարդիկ, որ չարչարւում,
քրտնում, աշխատում են, ինչի համար է. չէ որ
վերջում կամենում են հանդիսատ ապրել և հան-
դիստ կեանք անցկացնել:

Ամեն դասակարգի մարդիկ հանդսութիւն
են ցանկանում:

Մշակը մինչև երեկոյ անդադար աշխատում
է, որ երեկոյեան հանդստանայ: Երկրագործը,
արուեստաւորը, վաճառականը ի՞նչու համար են
աշխատում: չէ որ ուզում են վերջը հանդիսատ
ապրել, որ հանդիսատ կեանք վայելեն:

Աստուծոյ ընտիր ժողովուրդը վեց օր գոր-
ծում է, որ եօթներորդ օրը հանդստանայ. Նա-
հատակ մարդիկ աշխարհի վրայ այս կեանքում
Քրիստոսի անուան համար չարչարուեցին, հա-

բածուեցին, նախատինք լրեցին, որ հանդերձեալ
կեանքում հանգիստ վայելեն: Եատերը բարկոծ-
ուեցին, խոցուեցին, սպանուեցին, որ այն կեան-
քումը հանգստանան: Քրիստոնեաների փառքը,
պարծանքը, պատկը այն հանգիստն է: Առ-
տուած, Յիսուս Քրիստոս, Մարգարէք և Առա-
քեալները այս հանգստութեան վրայ խօսեցան:

Աւետարանի լրտմը, աւետարանի պարզե-
ները այս հանգիստն են. այս հանգիստը, որ
մեզ համար Աստուած պատրաստել է, այնքան
փառաւոր է, հրաշալի է, որ Պօղոս առաքեալը
ասում է. «Մարգու լեզուն չի կարող պատմել».
Խոկ Յովհաննէու աշխարհքի ամենաթանկադին
բաներովն է նկարագրում:

Աւրեմն Աստուած, որ մեզ համար այնպիսի
մի փառաւոր և հրաշալի հանգիստ է պատրաս-
տել, ինչու մենք չենք փնտում, ինչու շարու-
նակ մեր սիրտը այնտեղ չի, մեր միտքը, մեր
խորհուրդները այնտեղ չեն:

Այս նրանից է, որ նրա մեծութիւնը, նրա
փառաւորութիւնը, նրա քաղցրութիւնը չենք ճա-
նաչել, չենք ճաշակել, նրա համը չենք առել և
կարծում ենք, որ մեր հանգիստը այս աշխար-
հումն է:

Բայց նայենք աշխարհային ընտանիքներին,
կը տեսնենք, որ մի մարդ մեծ հարստու-
թիւն ունի, մեծ և փառաւոր աներ, պալատներ
ունի, շատ կալուածներ և ամբարներ ունի հա-
րլատութիւնով լի, գեղեցիկ կահ կարստիներով

պարզաբուած, յանկարծ մի ծայրից սկսուեց հրդեշ
հը և լափելով գնաց միւս ծայրից գուրս եկաւ,
տասն բովէից յետոյ բոլոր հարստութիւնը ոչնչաց-
րեց ու փոշի գարձրեց, կամ նայենք ծովի վերայ
մի մարդ իւր բոլոր հարստութիւնը, ապրանքը
բեռնել է նաւի վերայ և գնում է աշխատելու,
յանկարծ ծովը ալեկոծուեց, քամին վեր կացաւ
ալիքները բարձրացրեց ու նաւը տարաւ քարին
խփեց ջարդ ու փշուր արաւ և նորա կարողութիւնը
անդունի տարաւ, հարուստը մնանկացաւ, աղքա-
տացաւ և երջանկութիւնն ու վայելչութիւնն էլ
ձեռքից գնաց:

Ուրեմն եթէ մենք կարծում ենք, որ աշ-
խարհի վերայ է հանգստութիւնը և երջանկու-
թիւնը հարստութեան մէջն է, չարաչար սխալ-
ւում ենք. երբէք աշխարհի մէջ երջանկութիւն
չկայ. երջանկութիւնը միմիայն երկնքումն է:

Պօղսս Առաքեալը Եփեսացւոց գրում եր՝
«Անդադար ձեզ համար եմ ազօթք անում, որ
ձեր սրտերի աչքերը լուսաւորուեն, որպէս զի
կարողանաք ճանաչել թէ ինչ է նորա կոչումի
յոյսը և ինչ է իր ժառանգութեան փառաւոր
մեծութիւնը»:

Երանի թէ Տէրը մեր հոգւոյ աչքերը լու-
սաւորէր և մեր սրտերը բաց անէր, որպէս զի
կարողանանք ճանաչել մեր երկնային ժառան-
գութիւնը, մեծութիւնը և այն հանգստութիւնը,
որը Աստուած պատրաստել է մեզ համար և մեր
ականջները բաց անէր, որ լսէինք Յիսուս Քրիս-

տոսի քաղցր հրաւերի ձայնը և գնայինք նորա մօտէ
Բայց Յիսուս Քրիստոսի մօտ գնալու համար
մի քանի անհրաժեշտ գիտելիք կան, որ պիտի
ունենանք և առանց նոցա այնտեղ չենք կարող
գնալ։ Նախ հարկաւոր է ունենալ Հաւատք։

Հաւատագիր ընդունում ենք Առւրբ Հոգի և
մեր հոգւոյ աչքերը լուսաւորւում են և երկնքի
փառաւոր մեծութիւնը ճանաչելով սիրում և դէպի
այն գեղեցիկ ժառանգութիւնն ենք վազում։ Բայց
անհաւատագութիւնը մարդու հոգւոյ աչքերը կաշ
ուում է, երկնային լուսից զրկելով խաւարի
մէջ է պահում։ մարդ չի կարողանում տեսնել և
երբ չի կարողանում տեսնել, չի կարողանում և
սիրել։ Հաւատքով Յեսու և Քաղէբ մտան Աւետ
տեաց երկիրը, իսկ անհաւատագութեամբ մարդիկ
մեռան և չը կարողացան մտնել այնտեղ։

Ապա Սէր։

Սիրով պէտք է գնանք, որովհետեւ Յիսուս
Քրիստոս սիրով եկաւ մեղ մօտ մեղ հրաւիրեա-
լու, սիրով մահ ճաշակեց, սիրով խաչի վերայ
բարձրացաւ։ Հաւատոյ մեծութիւնը սիրոյ մէջն է
երկում, եթէ հաւատք ունենանք և սէր չունե-
նանք, չենք կարող երկինքը դնալ։ Պօղոս Առա-
քեալը ասում է, «Եթէ ունենամ այնպիսի հաւ-
ատ, որ կարողանամ մինչև անգամ սարերը փո-
խագրել տեղից, բայց սէր չունենամ, ոչինչ եմ»։

Ապա Խոնարհութիւն։

Խոնարհութիւնով պէտք է գնանք Յիսուսի
մօտ, որովհետեւ Յիսուսի կեանքը բոլորովին խո-

Նարհութիւն էր, խոնարհութիւնով մեր ստեղք
լուացաւ։ Խոնարհներին Աստուած շնորհը է տա-
լիս, իսկ հպարաներին հակառակ է։
Ապա Ապաշխարութիւն.

Ապաշխարելը մեղքից հեռանալ կը նշանակէ.
ով որ մեղքի մէջ է, մեղքը սիրում է և չի կարող
Քրիստոսի մօտ գնալ. եթէ Քրիստոս իր մօտ
դայ, նա կամաչի և կը փախչի իր չարագործու-
թեան համար, ինչպէս Աղամ Աստուծոյ առաջից
փախու և ժագնուեց, որովհետեւ մեղք էր դոր-
ծել և ամաչում էր նորան երևալ։ Այսպէս
էլ մեղաւոր մարդը աստուածային լոյսից փախ-
չում է գեղի խաւար, որպէս զի իր դործած
մեղքը և յանցանքը չերեայ, որ իր չար դոր-
ծերը անյայտութեան մէջ ծածկուած մնան. եթէ
նա իւր չար դործերովը լուսոյ մէջ դուրս դայ,
կը յայտնուի և կը յանդիմանուի։ Ուրեմն մեղքից
պէտք է հեռանանք, մեղքը պիտի տունք և
մեղքի հետ կուռենք։

Աղօթքն էլ մեղ կը մօտացնի Աստուծուն.

Իւրաքանչյուր մարդ պիտի ընկնի երեսի
վերայ Յիսուս Քրիստոսի խաչի պատուանդանի
տակ և այսպէս աղօթք անի. «Աշխարհի Փրկիչ,
Յիսուս Քրիստոս, Դու երկինքից երկիր իջար, որ
ինձ Քեզ մօտ հրաւիրես, երկինք տանես, բայց
մենք այնքան անհաւատ էինք, որ ոչ Քո խօս-
քերը լսեցինք և ոչ Քո մեծամեծ հրաշքներին
հաւատացինք. բայց Դու ինձ այնքան սիրեցիր,
որ մեղ հաւատքի բերելու համար խաչը բարձ-

բացար և Քո աստուածային անապական արիւնով
իմ մեղքերս լուացիր և ինձ սրբեցիր։ Այժմ՝ Քո
սուրբ արեան շնորհիւ իմ աչքերս լացուեցին,
հաւատում եմ Քեզ, սիրում եմ Քեզ, կանչիր
ուրեմն ինձ Քեզ մօտ, յօժարութեամբ կը գամ
Քեզ մօտ կանչիր, ով աշխարհի Փրկիչ, ճանա-
պարհս որքան քարոտ և փշու լինի, որքան նեղ
և անձուկ լինի, որքան երկայն ու դժուար լինի,
Քո շնորհիւդ կը հարթուի, կը սրբուի, կը լայնա-
նայ, կը կարճանայ և կը դիւրանայ ինձ համար
և ես անարդեկ կանցնեմ կը գամ Քեզ մօտ կան-
չիր ինձ Քո փառաւոր հանգստի մէջ, որ աշխարհից
սկզբեց Քո սիրելիների համար ևս պատրաստել»

Եւ երբ Յիսուս Քրիստոս կը լիէ այս մեր
ջերմեռանդ և կենդանի աղօթքը, մեր մեղաց
քաւութեան և ապաշխարութեան արտասուքը,
նա կը սրբէ մեզ, կը ներէ մեր բոլոր յանցանք
ները և կը հրաւիրէ մեզ իւր մօտ ասելով. «Ի՞նձ
մօտ եկեք, ով վաստակած և բեռնաւորուածներ
և ես հանդիսա կը տամ ձեզ իմ երկնային արքա-
յութեան մէջ».

նու օքուս մաշտարակն անդառա ուսամ ո՞ւ և զարդաց
ո՞ւ և անձ ազգաց անձ և պիտոյ պահապել են
ամենասար ողջուն նոյ ու յերանց մահար զարա
պիտոյ ո՞ւ ո՞ւ և անձայի ազգ և անձ ու ո՞ւ և անձ ու ո՞ւ
և անձ ո՞ւ ո՞ւ և անձ ո՞ւ ո՞ւ և անձ ո՞ւ ո՞ւ և անձ ո՞ւ ո՞ւ
Ե.

Զի՞նչ օգուտ է մարդոյ, Եթէ զաշխարհ
ամենայն շահեսցի եւ զանձն իւր
տուժեսցէ, եւ կամ զի՞նչ տայցէ մարդ
փոխանակ անձին իւրոյ:

Ի՞նչ օգուտ է մարդուն, Եթէ ամբողջ
աշխարհիը իւրան սեպհականացնի,
բայց իւր անձը կորցնի եւ կամ ի՞նչ
կըսայ մարդ իւր անձի փոխանակ:

Յիսուս Քրիստոս այս խօսքերով մեզ հաս
կացնում է, որ աշխարհքից ու աշխարհքի մէջ
գտնուած բոլոր գանձերից, այն է՝ ոսկուց, ար-
ծաթից, ակներից և մարդարիտներից պատուա-
կանագոյնը հոգին է։ Աշխարհային բոլոր կայքե-
րից, այն է՝ կալուածներից, շինութիւններից,
աշտարակներից ու պալատներից գեղեցիկ ու
պատուականագոյնը է հոգին։ Որովհետեւ ասում
է. «Ի՞նչ օգուտ է մարդուն բոլոր աշխարհքը
իւրան սեպհականացնել, բայց իր անձը-հոգին
կորցնել»։

Ուրեմն մարդուս առաջին գործը, գլխաւոր
գործը իր հոգւոյ փրկութիւնը պէտք է լինի։

Խնչալէս Աստուծոյ ամենամեծ գործերից
մէկը մեր հոգիների փրկութիւնն էր, որ փրկեց
իւր Միածին Որդի Յիսուս Քրիստոսի ձեռքով։
Աստուած երբ որ երկինքն ու երկիրն ոչնչից
ստեղծեց, երբ որ նորա հիմունքը անդունդի
վրայ գրեց, խաւարը պատառելով անճառելի
լոյս ստեղծեց, երկնքի աստեղապարդ կամարը
հաստատեց, ծովերին ու ցամաքներին սահման
գրեց, այդ բոլորը միայն խօսքով ստեղծեց «Որով
հետեւ նա ասաց և եղան, հրամայեց և հաս
տառուեցին» Բայց մարդուն խօսքով չը ստեղ
ծեց, մարդու մարմինը իւր ձեռքով կազմակեր
պեց, նորան իւր պատկերի կերպարանք տուեց
և իւր անմահ շունչը վչեց, որով մարդս անմահ
հոգի ունեցաւ։ Ուրեմն և մարդու հոգին այն
քան մեծ և պատուականագոյն էր աշխարհքից
և նորա միջի եղած բաներից, որ իւր Միածին
Որդի Յիսուս Քրիստոսի չարչարանքով, մահով,
խաչովն ու արխնովը փրկեց։ Յիսուս Քրիստոս
գնահատելով հոգւոյ արժեքը—հոգւոյ մեծագին
լինելը, իւր կեանքը չը խնայեց, այլ իւր անձը
դոհեց հոգիների փրկութեան համար։
Ուրեմն եթէ արդարը մեռնում է անար
դարների հոգիների փրկութեան համար, եթէ
անմեղը մեռնում է մեղաւորների հոգիների
փրկութեան համար, անմահը մահկանացուների
համար, մենք որ անարդար ենք, մեղաւոր ենք,
մահկանացու ենք, որքան պարտաւոր ենք մեր հո
գիների փրկութեան համար մտածել, և ոչ թէ

միայն մտածել, այլ վառուել այն սիրով, այն հոգւով, ինչ սիրով և ինչ հոգւով որ Յիսուս Քրիստոս վառուած չարչարուեց. Պետրոս առաքեալը ասում է. «Դոք Ել այն մտքով վառուեցէք, ինչ մոքով որ Յիսուս Քրիստոս մեր հոգիների համար վառուեց և չարչարուեց».

Ուրեմն մեր կեանքի առաջին պայմանը, առաջին կանոնն ու պարտականութիւնը մեր հոգիների փրկութիւնը պիտի լինի, ինչպէս որ Յիսուս Քրիստոս Ել իր կեանքի առաջին պայմանը, առաջին պարտականութիւնը հոգիների փրկութիւնն ընտրեց. Խ՞նչու.—որովհետեւ ասում է. «Խ՞նչ օգուտ է մարդուն, եթէ բոլոր աշխարհը շահէ, բայց իր հոգին կորցնէլուց յետոյ Ել այն կեանքումը ի՞նչ պիտի տայ» Որովհետեւ հոգւոյ փրկութիւնը այս կեանքումն է, Յիսուս Քրիստոսի անապական մարմինն ու արիւնը այս կեանքումն է, կենաց հացը, մաքրութեան ջուրը, փրկարար արիւնը, մեղքի քառութիւնը, հաշտութեան զոհը, ընտիր պատարագը այս կեանքումն է. Յիսուս Քրատոսի հոգի և կեանք տուող խօսքերը, Առը Հոգին, Վերըստին ծնունդը, սրբուելն ու մաքրուելն և արդարանալն այս կեանքումն է. Այս կեանքում պէտք է հանդերձեալի նախապատրաստութիւնը տեսնենք. Ինչպէս Յիսուս Քրիստոս ասում է. «Պարտէ գործել մինչ օր կայ, գայ գիշեր յորժամ ոչ ոք կարէ գործել» Պօղոս ասում է. «Այլ մինչդեռ ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս»

Ուրեմն քանի որ օր կայ, լոյս կայ, լոյս
ենք տեսնում, լուսոյ մէջ ենք բնակում. քանի
որ կեանքը ձեռներիս է, քանի որ մահուան
գիշերը չի եկել՝ պէտք է հոգւոյ փրկութեան
համար գործենք, որ մեր հոգիները փրկենք,
որովհետեւ մահը գալուց յետոյ մեր կեանքը չի
վերջանում, մեր հոգին անմահ է մնում և պէտք
է ապրէ յաւիտեան:

Աշխարհքս իր գեղեցկութիւններով, իր վա-
յելութիւններով, իր փառքով պէտք է անց կե-
նայ, ինչպէս Յովհաննէսն է ասում. «Աշխարհքս
էլ կանցնի իր գեղեցկութիւններով»:

Աստուած աշխարհքի բոլոր գեղեցկութիւն-
ների, ուրախութիւնների և ստացուածքների
վրայ իր հոգւոյ ներչնչութեամբ Սողոմոնի ձեռ-
քով ունայնութիւն ունայնութեանց է գրել,
որովհետեւ կը գայ ժամանակ, աշխարհքի ամեն
աչք շլացնող գեղեցկութիւնները կը թառամեն-
Ամեն սիրա ուրախացնող ուրախութիւն պիտի
վերջանայ: Ամեն վազգազող և խաղացող մանուկ
պէտք է ծերանայ, խակ ամեն ծերուկ պիտի
մեռնի: Ամեն անուն, մեծութիւն, աստիճան,
իշխանութիւն, ժառանգութիւն, հարստութիւն
պէտք է խլուեն, ամեն մարդ հող պէտք է դառ-
նայ առանց վիճակի և աստիճանի խորու-
թեան:

Երկինք և երկիրն էլ պէտք է վերջանան,
արեգակն, լուսինն և աստղերն էլ պէտք է խա-
ւարեն, ինչպէս որ աւետարանն է ասում. «Արե-

դակն խաւարեսցի և լուսին ոչ տացէ զլոյս իւր
և աստեղք երկնից թօթափեսցին և զօրութիւնք
երկնից շարժեսցին» Պետրոսն ասումէ. «Երկները
պիտի շառաչիւնով անցնի, տարերքը բռնկուած
պիտի այրուին, երկիրը և ինչ որ իր մէջը կայ
և միասին պիտի այրուին և ոչչանան»

Բայց արեգակի, լուսի, աստղերի ոչնչա-
նալովը, տարերքի ոչնչանալովը, աշխարհքի ոչըն-
չանալովը հոգիներս չեն ոչնչանալ, այլ անմահ
են և պէտք է ապրեն յաւիտեան:

Բայց ի՞նչ կը նշանակէ յաւիտեանը.—օրեր,
ամիսներ, տարիներ և դարեր յաւիտեանի մէջ
թաղւում են ու կորչում, որովհետեւ յաւիտեանը
վերջ չունի, անվերջ է. նորա կատարեալ նշանա-
կութիւնը ոչ կարելի է հասկանալ և ոչ կարելի
է հասկացնել, որովհետեւ եթէ աշխարհքի բոլոր
ջրերը մի տեղ հաւաքուին և ամեն մի կաթիլ
ջուրը հազար տարում վերջանայ, թէ այդ ահա-
գին ջրերը քանի հազարաւոր և միլիոնաւոր տա-
րիներ կրտեւին, այդէլ կը վերջանայ, բայց յա-
ւիտեանը չի վերջանալ. նոյնպէս երկրագնդի մի-
աւազի չափ հողը եթէ հազար տարում վերջա-
նայ, այդ բոլոր հողերն էլ կը վերջանան, բայց
յաւիտեանը չի վերջանալ, բայտ որում յաւի-
տեանը Աստուծոյ գոյութեան հետ կապուած է.
Աստուած որքան կենդանի է, յաւիտեանն էլ նո-
րա հետ կենդանի է մնալու, նոյնպէս հոգիներն
էլ պէտք է Աստուծոյ հետ ապրեն յաւիտեան:
Ուրեմն եթէ արե, լուսին, աստղեր, ծովեր

և ցամաքներ պէտք է ոչնչանան, միմիայն մարդուս հոգին պիտի մնայ, որքան թանկագին է մարդուս հոգին, յիրաւի որ աշխարհքի բոլոր գանձերից, ոսկիներից, արծաթներից, կայքերից և ստացուածքներից պատուականագոյնը մարդուս հոգին է և մարդուս իսկական դանձը, իսկական ժառանգութիւնը և հարստութիւնը իւր հոգին է, մարդուս իսկական կարողութիւնը, սեպհականութիւնը, տօւնն ու շինութիւնը, աշտանակն ու պարխապը իր հոգին է. մարդուս բոլոր ուրախութիւնը, վայելչութիւնը, զուարծութիւնն ու փառաւորութիւնը իր հոգին է:

Մարդս եթէ աշխարհքի չափ հարստութիւն կորցնէ, բայց միմիայն իր հոգին դանէ, այս ինքն փրկէ, շատ իմաստուն է և իմաստութիւնով է գործ տեսել, իսկ եթէ բոլոր աշխարհքը վաստակէ և իր հոգին կորցնէ, այն մարդը շատ յիմար է, որովհետեւ «աշխարհքն էլ պիտի անցնի և իրեն ցանկութիւններն էլ», աշխարհքի դանձերն էլ, հարստութիւններն էլ, բայց մարդու հոգին պիտի մնայ:

Եւ հոգին մարմնով ուր պէտք է գնայ:

Մահից յետոյ երկու ճանապարհ կայ հոգիների առաջ, կամ յաւիտենական կեանք և կամ յաւիտենական տանջանք: Յիսուս Քրիստոս ասում է, «Եւ երթայցեն նոքա ի տանջանս յաւիտենականս, իսկ արդարքն ի կեանս յաւիտենականս»:

Որովհետեւ մահը մեր կեանքին վերջ չի

դնում, մահից յետոյ դրախտ էլ կայ, դժոխք էլ, երկինք էլ կայ, սանդարձմետ էլ, լոյս էլ կայ, խաւար էլ. լոյս կայ, որ խաւար չունի, խաւար կայ, որ բնաւ լոյս չունի. առաւաօտ կայ, որ բնաւ իրիւ կուն չունի, իրիկուն կայ, որ բնաւ առաւաօտ չունի. օր կայ, որ գիշեր չունի. գիշեր կայ, որ բնաւ ցերեկ չունի. Աչք չը տեսած, ականջ չը լած, մարդոյ սիրտ չընկած երանաւէտ և երկնային ուրախալի վիճակ և երջանկութիւն էլ կայ, բայց յաւիտենական թշուառութիւն, անհանգչելի կրակ և յաւիտենական տանջանք էլ կայ»

Բայց ինչու համար են այս ամենը. — Նրա համար, որ արդարները վարձք ստանան, որ չարերը պատժուեն, որպէս զի յայտնի լինի ամենի առաջ Աստուծոյ մեծութիւնը և նորա իմաստութիւնը. Եւ դորա համար էլ բոլոր հոգիները Յիսուս Քրիստոսի առեանի առաջ պէտք է ներկայ լինին, որ բարիները իրանց վարձքը ստանան, իսկ չարերը իրանց պատիժը. Պօղոս ասում է. «Քանզի մեզ ամենեցուն յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի իւրաքանչիւր ոք ընկալցի իւրով մարմնով, զոր ինչ դործեաց յառաջ, եթէ բարի եթէ չար»»

Բոլոր մարդկանց իմաստութիւններն ու քաջութիւնները այստեղ պէտք է երեան գան. ամեն առաքինութիւն, ամեն արդարութիւն, ամեն ճշմարտութիւն, ամեն սրբութիւն, ամեն մաքրութիւն, ամեն համբերութիւն այստեղ արե-

գակի պէտք է վայլեն, ըստ աւետարանին։ Յայնժամ արդարքն ծագեային իբրև զարեղակն արքայութեան երկնից», որովհետեւ մրցանակ վերցնելու ասպարէցն այստեղ է։

Արդարները պէտք է վարձատրուեն՝ սուրբերը պէտք է պատկռեն, նահատակներն ու մարտիրոսները լուսեղին թագեր պէտք է ստանան, Յիսուս Քրիստոսի արխնոնվ լուացուած և մաքրուածները այստեղ Գառան սեղանին պէտք է մասնակից լինին։

Այս մասին երէցներից մէկն ասում է. «Երանելիք են ամեննեքեան, որք կոչեցեալք են յընթրիս հարսանեաց Գառին»։ Երանելի են այն բոլորը, որոնք Գառան սեղանին պէտք է մասնակից լինին և Գառան սեղանից պէտք է վայելեն։

Արդարեւ երանելի կըլինին այն բոլորը, որոնք այս կեանքումը իրենց հոգիները կը փրկեն, իրենց հոգիները կանմահացնեն և երկնքի սուրբերի հետ Յիսուս Քրիստոսի սեղանին մասնակից կը լինին, որ պէտք է վայելեն ոչ թէ մի անգամ, այլ յաւիտեանս յաւիտենից կուտեն ու կը կշանան և կը հանգստանան։ Գաւիթն այս սեղանի համար էր ասում. «Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տէր» Ո՛վ փրկուածներ, կերէք և վացելեցէք, որովհետեւ Տէրը շատ քաղցր է, քաղցր է և նորա հացը։

Այն, քաղցր է նորա հացը, ցանկալի է, փափագելի է. հոգւոյ բերկութիւն, հոգւոյ զուարձութիւն է նորա հացը. հոգւոյ ցնծուա-

թիւն, հոգւոյ վառաւորութիւն, հոգւոյ անմաշ հութիւն է նորա հացը՝ Յիսուս Քրիստոս այս սեղանի համար էր ասում. «Ել ձեզ հետ գինի չեմ խմիլ, մինչև որ Էլի կը խմեմ ձեզ հետ իմ Հօրս թագաւորութեան մէջ» Յիսուս Քրիստոս այս սեղանի համար էր ասում. «Երանի նրանց, որոնք քաղցած և ծարաւի են արդարութեան, որովհետեւ նրանք են յադենալու»

Որոնք գեռ երկրի վերայ այն երկնային հացի համը զգում էին, այն երկնային սեղանի ճաշակը և քաղցրութիւնը զգում էին, Դաւիթի նման ասում էին. «Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տէր» Որոնք այն երկնային բաժակի համն ու քաղցրութիւն էին զգում, Դաւիթի պէս ասում էին. «Ծարաւի է անձն իմ առ Քեզ, Աստուած, երբ եկից երեցայց երեսացգ Աստուծոյ» Որպէս փափագի եղջերու յազրերս ջուրց, այնպէս փափագի անձն իմ առ Քեզ, Աստուած»

Նորա համար էլ աշխարհի սուրը, կրակը և ամեն տեսակ նեղութիւններն ու տանջանքները չը կարողացան նոցա սրտերը բաժանել երկնքից ու Յիսուս Քրիստոսից. Շատերը կրակի մէջ ընկան, առիւծների գուբը ձգուեցին, քարկոծուեցին, սղոցուեցին, քերթուեցին, շատերը բանդերի կապանկների, նեղութիւնների մէջ մեռան, շատերը սոված, ծարաւ, մերկ մնացին, շատերը հալածուեցին, անտառներում, ձորերի և այրերի մէջ անցկացըին իրենց օրերը, բայց երբէք սրտերը Յիսուս Քրիստոսի սիրուց չը բա-

ժանեցին։ Պօղոս առաքեալն էր ասում, «Մեզ
ոչ ոք չի կարող բաժանել Յիսուս Քրիստոսի սի-
րուց, ոչ կեանք, ոչ մահ, ոչ հրեշտակ, ոչ իշխա-
նութիւն, ոչ փառք, ոչ բարձրութիւն, ոչ կրակ,
ոչ սուր և ոչ այլ արարած կարող է բաժանել
մեզ Աստուծոյ սիրուց»։

Մի հարուստ երիտասարդ հարցրեց Յիսու-
սին, «Բարի վարդապետ, ինչ անեմ, որ երկնքի
արքայութիւնը ժառանգեմ»։ Յիսուս ասաց
նրան, «Եթէ ուզում ես երկնքի արքայութիւնը
ժառանգել, պատուիրանները պահիր, մի չնար,
մի սպանիր, մի գողանար, սուտ վկայութիւն մի
ասր, պատուիր հօրդ և մօրդ, քո ընկերիդ սի-
րիր ինչպէս որ քո անձդ ես սիրում»։ Նա էլ
պատասխանեց, «Այդ բոլորը մանկութիւնից ի վեր
պահել եմ, ուրեմն էլ ինչ է պակաս ինձ»։ Յի-
սուս պատասխանեց, «Եթէ ուզում ես կատա-
րեալ լինել, դնա քո բոլոր ունեցածդ ծախիր և
աղքատներին բաժանիր, որ երկնքումը գանձ
ունենաս և եկ իմ ետևից»։ Երիտասարդը, որ
այս լսեց, արտմեց ու գնաց, որովհետեւ շատ
հարուստ էր։ Յիսուսը տեսնելով այս բանը իւր
աշակերտներին ասաց, «Որքան դժուար է հա-
րըստութիւն ունեցողների համար Աստուծոյ ար-
քայութիւնը մտնել, որովհետեւ ուզան աւելի
շուտ կը մտնի ասեղի ծակը, քան թէ հարուստը
Աստուծոյ արքայութիւնը»։ Յիսուս Քրիստոսի այս
խօսքը չի նշանակում թէ՝ ով որ հարուստ է, ով
որ կարողութիւն ունի չի կարող երկնքի արքա-

յութիւնը մտնել, այլ ինչ մարդ որ իրեն յօյսը
դրել է հարստութեան վերայ, իրեն կարողու-
թեան վերայ, ինչ մարդ որ թողել է երկինքը,
իր սիրոն ու հոգին կապել է աշխարհի հա-
րըստութեան հետ, նա չի կարող երկինքի արքա-
յութիւնը մտնել։ Աշխարհի ամենամեծ հարստութը-
Աստուած է։ Աստուած Սողոմոնին այնքան հա-
րըստութիւն տուեց, որ ոչ մի թագաւորութիւն
չունէր. Աստուած տուեց նոյնպէս Յորին, Աբ-
րահամին, Յակովին, բայց նոքա միենոյն ժա-
մանակ Աստուծուն սիրելի էին։

Աստուած հարստութիւնը տալիս է մար-
դուն որպէս երկնային բարիք, որ մարդն էլ
մատակարարէ ազգատներին, կարօտեալներին ի
նշան որդիական երախտագիտութեան և փոխա-
դարձ սիրոյ և պարտաճանաչութեան։


Բայց հարուստ երիտասարդը չը լսեց Յի-
սուս Քրիստոսի խօսքը, որովհետեւ շատ ստա-
ցուածք ունէր. նա երկինքը և յաւիտենական
կեանքը թողել էր, բայց իւր հարստութիւնը չը
թողեց։ Այս պատմութիւնը 1900 տարի առաջ
էր. հիմայ ուր է այն երիտասարդը, ինչի՞ էր
պէտք իր այն հարստութիւնը, եթէ նա այժմ
դժոխումն է։

Մենք էլ եթէ երկինքը, յաւիտենական
կեանքը թողնենք, որտերս կապենք աշխարհի
հարստութեան հետ, մոռանանք մեր հոգւոյ փըր-
կութիւնը 1900 աարուց յետոյ, մեր մահից յե-
տոյ, չէ որ դժոխումը կը լինինք։

Ուրեմն ամեն մի թմրած ու քնած հոգի,
ամեն մի աշխարհը հաղարտութեան, դանձերի
և հարստութեան հետ կապուած հոգի պէտք է
լսի Յիսուս Քրիստոսի խօսքը, պէտք է զարթնի,
պէտք է իր աշքը բանայ ու տեսնի, որ հոգւոյ
փրկութիւնը թանգ է, որովհետեւ յաւխտենա-
կանը նա է և այս աշխարհում բոլոր եղածները
ունայնութիւն ունայնութեանց են:

Առաջնա Խաչուոց ամեն՝ =

Ես ուսումնական կառու եւ առաջնա ամենու-
նակ չունի քննի մեռ առաջ քայլու ու
ուժ ուժ բարեկանա մասնա զգինա



Ես ուսումնական կառու եւ առաջնա ամենու-
նակ չունի քննի մեռ առաջ քայլու ու
ուժ ուժ բարեկանա մասնա զգինա
ամեն ու ամեն ու ամենունա ու պայման ու
ու ամ ամենուն պահպանաց բայ պատր
ու պրեյ և պայման պահպան ու պայման պատր
ու պահպան ու պայման ու պահպան պատր
ու պահպան ու պահպան ու պահպան պատր

(ՆՈՐ ՏԱՐԱԿԱՎԱՐ ԱՌԵԹԻՒ)

«Բարի եւ հաւատարիմ ծառայ, դու
որ այդ ֆիչ բանի մէջ հաւատարիմ ե-
ղար, քեզ շաս բաների վերայ պէս! Ե-
նিচանակեմ, միիր fn սիրոց ուրախու-
թեան մէջ:»

Այսպիս եր ասում Յիսուս Քրիստոս այն ծառաների համար, որնք իրենց տիրոջ բան- գարները շահացրել են, Երկուսը չորս եկեղեցիներ, նինդը՝ տասն:

Յիսուս Քրիստոս մի առակ ասաց թէ՝ «Մի
հարուստ մարդ հեռու աշխարհք էր գնում,
կանչեց իւր ծառաներին, մէկին տուեց հինգ-
քանքար, միւսին երկու քանքար, իսկ երրորդին
մի քանքար և պատուիրեց, որ մինչև իւր վերա-
դարձը այդ քանքարները շահեցնեն։ Նա, որ
հինգ քանքար էր ստացել, շահացրեց և հինգն էլ
աւելացրեց։ Նա, որ երկուսն էր ստացել, երկուսն
էլ աշխատեց, իսկ նա, որ մէկ էր ստացել, տա-
րաւ գետինը փորեց և ծածկեց։ Շատ ժամա-

նակից՝ յետոյ ծառաների տէրն եկաւ, կանչեց
իւր ծառաներին և հաշխապահանջեց։ Հինգ
քանքար ստացողը եկաւ ու ասաց. «Տէր, քո
տուած հինգ քանքարը տամն եմ դարձրել» Տէրը
դովեց նորան ու ասաց. «Ազնիւ և հաւատարիմ
ծառայ, որովհետեւ քչի մէջ հաւատարիմ եղար,
շատի վերայ կը նշանակեմ քեզ, մտիր քո տիրոջ
ուրախութեան մէջ» Մօտենալով երկու քանքար
ստացողն, ասաց. «Տէր, երկու քանքար տուիր
ինձ, ահա ուրիշ երկու քանքար էլ աւելի շահեցայ» Տէրն ասաց. «Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, որովհետեւ քչի մէջ հաւատարիմ եղար,
շատի վերայ կը նշանակեմ քեզ, մտիր քո տիրոջ ուրախութեան մէջ» Գալով մի քանքար
ստացողն, ասաց. «Տէր, գիտէի, որ դու խիստ
մարդ ես, չը սերմանած տեղից հնձում ես ու
չը ցանած տեղից ժողովում, և վախենալով քեզանից,
քանքարդ գետնի տակ պահեցի, ահա քո քանքարը քեզ» Պատախան տուեց Տէրն և
ասաց. «Լամ ու չար ծառայ, եթէ գիտէիր, որ
ես հնձում եմ, ուր չեմ սերմանել և ժողովում
եմ, ուր որ չեմ սփռել, պէտք է իմ արծաթը
տայիր սեղանաւորին, որից ես կարող էի տոկու
սով ստանալ, ուրեմն առեք դրանից քանքարը և
տուեք տասը քանքար ունեցողին, որովհետեւ ով
որ ունի կը տրուի և կաւելանայ, իսկ ով որ
չունի, ունեցածն էլ կառնուի և կը տրուի ունեցողին. և այդ անպիտան ծառային հանեցէք
դրսի խաւարը, այնտեղ կը լինի լալ և ատամ»

Հերի կրծտալը»

Յիսուս Քրիստոս այս առակով երկու բան
է սովորեցնում: Առաջին՝ որ մենք մեր կեանքի
մէջ, մեր կենդանութեան ժամանակ մեծ պար-
տականութիւններ ունինք կատարելու, այնպէս՝
ինչպէս առաջին և երկրորդ ծառաները իրենց
տիրոջ քանիքարը ամենայն հաւատարմութեամբ և
սրբութեամբ շահեցրին, երկուսը չորս գարճնե-
լով և հինգը՝ տասն: Եւ երկրորդ՝ որ մենք
Յիսուս Քրիստոսի ահաւոր գալստեան ժամանակ
մեր բոլոր գործերի մասին, բարի լինի թէ շար,
մանրամասն հաշիւ պիտի տանք, այնպէս՝ ինչ-
պէս որ ծառաների տէրը եկաւ և հաշիւ պաշ-
հանջեց:

Ինչպէս տեսանք ծառաների տէրը իրեն
առաջին երկու ծառաներին, որոնք իրենց քան-
քարները հաւատարմութեամբ շահացրել եին,
գովեց, վարձատրեց, մեծամեծ պաշտօններ յանձ-
նեց և իրեն ուրախութեանը մասնակից արեց,
իսկ այն ծառային, որը ստացած քանիքարը չէր
շահացրել, յանդիմանեց, անպատուեց, պատժեց,
քանիքարները ձեռքից առաւ, իր պաշտօնից զրբ-
կեց և խաւար բանգը ձգեց: Ահա այնպէս էլ
Յիսուս Քրիստոս մեզ հետ պէտք է վարուի,
մեր ամեն առաքինութեամբ կատարած գործերի
համար պիտի վարձատրի և իր ուրախութեանը
մասնակից անի. իսկ զօրութեամբ կատարած
գործերի կամ ծուլութեամբ անցկացրած կեանքի
համար պիտի յանդիմանի, իւր ուրախութեանը

մասնակցելուց զրկի և արտաքին խաւարի մէջ
պիտի ձգի:

1. Թէ մենք ի՞նչ պարտականութիւններ ու
նենք կատարելու:

Աստուած Խրաքանշիւր մարդու նորս ար-
ժէքի չափ զանազան տեսակ և զանազան չու-
փով քանքարներ, տաղանդներ, մնասներ, այսինքն
երկնային բարիքներ ու չնորհքներ է առել,
այն է՝ ոմանց հարստութիւն, ոմանց կալուածք,
արուեստ, վաճառականութիւն, անձի առողջու-
թիւն, ընտանիք, սրդիք, եղբայրներ, ոմանց՝
պաշտօն, աստիճան, անուն, մեծութիւն, իշխա-
նութիւն, ժառանդութիւն, հայրենիք, բնակու-
թիւն, ոմանց՝ գիտութիւն, ճարտարութիւն, իմաս-
տութիւն, ոմանց՝ հաւատք, յոյս, սէր, մարդա-
րէութիւն, առաքելութիւն, թարգմանութիւն,
լեզու, գիտութիւն, ուսուցչութիւն, վարդապե-
տութիւն, ոմանց՝ կրօնասիրութիւն, աղդասիրու-
թիւն, եկեղեցասիրութիւն, գալրոցասիրութիւն
և այլն և այլն: Այսպէս Աստուած բաժանել է,
որ ամեն ոք, ամեն մարդ իր կարողութեան չափ,
իր ոյժի չափ ամենից առաջ Յիսուս Քրիստոսի
Աւետարանի լոյսը մարդկանց սրտերում տարա-
ծի, որ Աւետարանի հոգի ու կեանը տուող
խօսքերը, Աւետարանի արքայութեան բարի սեր-
մերը մարդկանց սրտերի և հոգիների վերայ
սփռեն, որ մարդոց հոգիները փրկելու համար,
քրիստոնէական հաւատքը տարածելու համար,
Յիսուս Քրիստոսի երկնային սէրը տարածելու

համար գործեն, աշխատեն և շահեցնեն, որպէս
զի քրիստոնէական հաւատքը կենդանանայ, որ
մարդկանց երկնքի վրայ ունեցած յոյսը աւելի
հաստատուի, որ Յիսուս Քրիստոսի սէրը շատա-
նայ, որ սէր, խաղաղութիւն, շինութիւն, միու-
թիւն լինի, որ կատարուի Յիսուս Քրիստոսի այն
գեղեցիկ ցանկութիւնը, որ ասում էր. «Հայր,
տներ, որ նրանք ել մէկ լինին, ինչպէս որ մենք
մէկ ենք» Յիսուս Քրիստոս Դէմսեմանի պար-
ակում, այն սարսափելի ժամում, որ արիւն
քրանք էր թափում իր ազօթքի ժամանակ, որ
աշխարհիս սկզբից մինչեւ այսօր այնպիսի ազօթք
ոչ ոք չի արել, այս խօսքերն էր ասում. «Հայր,
ինչպէս Դու ինձանում ես և ես Քեզանում, այն-
պէս ել նորանք մեզանում թնդ մէկ լինին, որ
նոքա միութեամբ կատարեալ լինին» . . .

Այսպէս, մարդիկ Յիսուս Քրիստոսի աւետա-
րանի քանիքարները, աւետարանի տաղանդները
շահեցրած կը լինին այն ժամանակ, երբ որ
մարդկանց մէջ աստուածսիրութիւն և ընկերու-
թութիւն կը տարածեն, երբ որ աւետարանի
լոյսը, Յիսուս Քրիստոսի սէրը մարդկանց ճանա-
չեցնել կը տան, մարդկանց սրտերը աւետարանի
սիրով կը կապեն միմեանց հետ, Քրիստոսի հետ
և երկնքի հետ:

Այսպէս, երբ Յիսուս Քրիստոսի հաւատա-
ցեալը, Յիսուս Քրիստոսի աւետարանի լուսոյ
մէջ կանչուած իշխանը իր իշխանութիւնով,
պաշտօնակատարը իր պաշտօնով, հարուստը իր

Հարստութիւնով, վաճառականը իր վաճառականութիւնով, արհեստաւորը իր արհեստով, հաւատացեալլը իր կենդանի հաւատքով, քրիստոսաւէրը իր անկեղծ սիրով, իրենց բարի գործքերով, առաքինի զօհաբերութիւններով կը գործեն ազգի և հայրենեաց համար, կրօնի և եկեղեցւոյ համար, գպրոցի և տղայոց կրթութեան համար, կօգնեն աղքատին, չբաւորներին, կարօտեալներին ու կը մխիթարեն հիւանդներին, վշտացեալներին, հաւատոյ ընտանիքներին, այն ժամանակ Յիսուս Քրիստոս կասէ «Բարի և հաւատարիմ ծառայ, գնւ որ այդ քիչ բանի մէջ հաւատարիմ եղար, քեզ շատ բաների վերայ պէտք է կարգեմ, մտիր քո Տիրոջ ուրախութեան մէջ»:

Յիսուս Քրիստոսի հաւատացեալլը որքան իր սիրան ու հոգին կապել է երկնքի հետ, որքան որ ինքը կենդանի հաւատքով, հաստատուն յուսով և անկեղծ սիրով միացած է Յիսուս Քրիստոսի հետ, որքան որ ջերմեսանդ ազօթքով և ապաշխարանաց արտասուզով կամնդնում է Յիսուս Քրիստոսի առաջ, պէտք է միտքը բերէ և իր եղբայրներին և ընկերներին, որպէս զի նոքա ևս միանան իր հետ իրանց ազօթքներով. որքան նրա սիրալ սիրում է ազօթք, ունկնդրութիւն, եկեղեցի գնալ, այնքան նա պիտի աշխատէ այդ երկնային սէրը տարածել իր եղբայրների և ընկերների սրտերի մէջ:

Ճշմարիտ է, որովհետեւ մենք Քրիստոսի,

նորա հօր և Առւրբ հոգւոյ անունով միքտուած
ենք, նորա զինուորեալ եկեղեցւոյ հետ միացած
ենք, երկնքի յաղթական եկեղեցւոյ հետ միացած
ենք, Գառան առջե, Աստուծոյ աթոռի առջե
փրկութեան երգեր ենք երգում, բայց մեզանից
շատերը թէ իրենց ծուլութեան և թէ իրենց
տգիտութեան պատճառաւ դրկուած են փրկու-
թիւնից և Յիսուս Քրիստոսի և մեր ներկայու-
թիւնից, և ինչ են անում նորա, ոմանք վատա-
բարոյ և չար ճանապարհների մէջ ընկած, մարմ-
նոյ և անձնական զուարճութիւններ են կա-
տարում, ոմանք աննպատակ թափառումներով
իրենց հոգւոյ փրկութեան գործը մոռացած ժա-
նակ են վատնում, ոմանք զինետներում արբե-
ցողութեամբ են պարապում, մի ուրիշը խարե-
բայութեամբ, վաշխառութեամբ, բամբասանք-
ներով և այլ անարդար ու չար գործերով են
պարապում, բայց մենք նոցա համար պէտք է
ցաւենք, արտասուենք, որ նորա կորստեան ճա-
նապարհի վերայ են կանգնած, մենք նոցա պի-
տի յայտնենք և ասենք, մենք և գուք Փրկչին
ենք կարօտ, Յիսուս Քրիստոսի անապական ա-
րիւնին ենք կարօտ, պէտք է յայտնենք, որ փըր-
կութիւնը այս կեանքումն է, որքան որ մենք
պարաւառոր ենք նոցա նիւթականապէս օգնելու,
նոյնքան և աւելի պարաւառոր ենք բարոյապէս
օդնելու, եթէ մենք նոցա նպաստում ենք ալ-
բուստի և կենցաղավարութեան համար, պէտք է
նպաստենք և նոցա հոգւոյ փրկութեան համար,

«Զի հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ առանձ» ասում է Յիսուս Քրիստոս:

2. Հիմայ խօսենք մեր հաշուետուոթեան մտավին.

Յիսուս Քրիստոս ասաց՝ թէ «Շատ ժամանակից յետոյ եկաւ ծառաների տէրը և նրանից հաշիւ պահանջեց»:

Յիսուս Քրիստոս իր գալու համար այսպէս է ասում. «Երբ որ Մարգոյ Որդին կը գայ իր փառքսվը և երկնքի բոլոր սուրբ հրեշտակները նորա հետ, այն ժամանակ իր փառաց աթոռի վերայ կը նստի և բոլոր ազգերը կը ժողովուին նորա առաջ և նրանց կը բաժանէ իրարից, ինչ պէս հովիւը բաժանում է ոչխարները այծերից, ոչխարներին իր աջ կողմումը կը կանգնեցնէ, իսկ այծերին ձախ կողմումը։ Այն ժամանակ Թագաւորը կասէ իր աջ կողմում կանգնածներին. «Եկէք, իմ Հօր օրհնածներ, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած թագաւորութիւնը»։ իսկ իւր ձախ կողմում կանգնածներին կասէ. «Դնացէք ես ձեզ չեմ ճանաշում . . .»

Յիսուս Քրիստոս իր այս ահաւոր գալստեան համար շատ օրինակներով և շատ առակներով խօսեց, որպէս զի մենք միշտ, միշտ պատրաստ լինինք և սպասենք նորա ահաւոր գալստեանը, ինչպէս տասն կոյսերի, տնտեսի, ծառաների և այս քանկարների առակներով։ Դարձեալ ասում է. «Եւ դուք պատրաստ եղէք, որովհետեւ, որ ժա-

մանակին որ չեք սպասում, կը դայ մարդոյ Որդին»

Բայց եթէ Յիսուս Քրիստոս այս բողեիս դայ, կարծում եմ, որ ոչ մեկս պատրաստ չենք նորա առաջ դուրս դալու:

Վաղը նոր տարի է, ուրեմն նոր տարուայ սկիզբն է. իսկ այսօր հին տարուայ վերջը կը համարուի: Բայց մի բողե մտնենք մարդկանց սըրտերի մէջ և տեսնենք, թէ ինչ յոյսեր, ինչ զգացմունքներ, ինչ հոգսեր են դիզուած: Անշուշտ կը տեսնենք, որ հազարաւոր և միլիոնաւոր մարդիկ սպասում են՝ թէ արդեօք նոր տարին իրենց համար ինչ նոր բարիքներ է բերելու:

Հարուստը նոր տարուց սպասում է աւելի մեծ՝ յաջողութիւններ, բազգաւորութիւններ, վայելչութիւններ, զուարձութիւններ և գեղեցիկ օրեր. իսկ աղքատը, ընդհակառակն, աւելի մեծ հոգսեր, նեղութիւններ, քաղց, ծարաւ և թշուառ օրեր: Առողջ մարդը սպասում է գործի և աշխատանքի, իսկ հիւանդը վշացած սրտով իր անցկացրած գտան օրերն է մտաբերում և կրկնուելուց է սարսափում: Երիտասարդը մեծ յոյսերով սպասում է փառքի, պատուի, մեծութեան, հարստութեան և յաջողութեան, կոյսը նոյնակս ուրախ սրտով, զմայյլուելով, ուրախ ժպիտով նայում է, որ դարնան օրերը նորա կեանքի համար նոր վարդեր ու ծաղիկներ պիտի բերէ. իսկ ծերացած մարդը, զառամեալ կինը իրենց առաջ տեսնելով և մահուան

անկողնում սպասելով, սարսափում և դարհութում են:

Այսպէս աշխարհիքի մարդիկ նոր տարուայ մէջ բազդի ու յաջողութեան, թշուառութեան ու գառնութեան և մահուան տագնապի են սպասում: Բայց Քրիստոսի աշակերտները այդ բոլորը մի կողմը թողած, իրենց քանիքարների շահեցողութեամբ, իրենց բոլոր հաշիւների պատրաստութեամբ էին զբազւում և Տիրոջ գալստեան էին սպասում, որովհետեւ նոքա լաւ գիտէին, որ Տէրը յանկարծ կը գայ կամ երեկոյեան կամ կէս գիշերին և կամ առաւօտեան և միշտ արթուն էին մնում, որ մի դուցէ յանկարծ գալու ժամանակ քնած լինին:

Մենք էլ Քրիստոսի աշակերտներ ենք, Քրիստոսի աւետարանին ենք կոչուած. գեռ նոր տարուայ մէջ չը մտած և նոր տարուայ մէջ ինչ ցանկութիւնների, բազդի, յաջողութեան, հարըստութեան, մեծութեան, փառքի և պատուի սպասում ենք, այդ բոլորը գեռ մի կողմը դնենք, դառնանք մեր անցկացրած տարուայ վրայ և մեր հին հաշիւները վերջացնենք և տեսնենք թէ ինչ ենք արել:

Մեզանից ամեն մէկը թնդ բաց անի խորսրութաւարը, մտածէ և մտաւոր համբիչը առաջը դրած մէկ մէկ կարդայ և հաշուէ ու համբիչի վրայ գցէ: Եւ ինչ պէտք է գցէ. գուցէ շատերը կարծեն թէ գցելու բան չկայ. ոչ. գցելու բան շատ կայ: Մի քանի բոլէ միայն հարկա-

ւոր է մաքով մտնել աւետարանի աշխարհը պայն ժամանակ շատ բան կը գայ միտքը, բայց թող միայն այս դցէ, արդեօք իւր օրերը ազնիւ կերպնի է անցկացրել, սիրոն ու հոգին ամեն մեղքերից հեռան է պահել:

Արդեօք ուսւութիւն չէ խօսել, մարդ չէ խարել, գողութիւն չէ արել, չոտթիւն չէ արել:

Արդեօք խղճմտանքը արթուն է պահել, աշմեն բանի մէջ իւր օգուտը չէ փնտոել:

Արդեօք կարօտեալներին, չքաւորներին և աղքատներին օգնել է, հիւանդներին, վշտացեալներին միսիթարել է:

Արդեօք իր եղբայրների հետ հաշտ է ապշրել և հաշտուել է, իր թշնամիներին սիրել է. իրեն ատողներին բարիք արել է, իրան անիւծոցներին օրհնել է:

Արդեօք ազգի ու հայրենիքի համար, կրօնի և եկեղեցւոյ համար, գլուխի ու մանուկների կրթութեան և քրիստոնէական հոգւով գաստիարակութեան համար իր արդարութեամբ վաստակած լուման չէ խնայել:

Արդեօք սրտով, մոքով, լեզուով կամ խօսքով իր ընկերի դէմ չէ մեղանչել, գառնութեամբ չէ վիրաւորել կամ խօսքով նրա սիրով չէ կոտրել:

Եթէ այս բոլորը իսկութեամբ կատարել է, ուրեմն իր քանքարները շահեցրել է, իր բոլոր հաշիւները ուղղութեամբ պատրաստել է, սորա համար էլ Յիսուսից կը լսի՝ «Բարի ու հաւատա-

բիմ ծառայ, որովհետեւ այդ փոքր բաների մէջ հաւատարիմ ես եղել, (այս նոր տարուայ մէջ) քեզ շատ բաների մէջ կը նշանակեմ. եկ մտիր իմ ուրախութեան մէջ» Իսկ իր գալստեան ժամանակ ել իր երկնային քաղցր ձայնով այն միշտոնաւոր մարդկանց միջից պէտք է կանչէ տսեւ լով. «Բարի և հաւատարիմ ծառայ, եկ մտիր իմ ուրախութեանս մէջ, որ աշխարհքի սկզբեց քեզ համար է պատրաստուած»

Հեն վաճառ պար քայ մատեխաց ուստի նիս
Ծին բանակու լու ուս քըր ու հայաստան
վիճ ու աւայսամայ ով Հմենինաց ուս քայ
առ անձաւուր ով իւն ու մատեխաց ու նու
ով ու խայր պար գումար ու յա մասնա

Է.

«Պատուեա՝ զիայր նո եւ զմայր նո, զի
երկայնակեաց լիցիս ի վերայ երկրի»:

Պատուիր նո հօրը եւ մօրը, որ երկար
կեանք ունենաս երկրի վերայ:

Աստուած Մովսէս մարդարէին ասաց. «Քեզ
համար երկու քարէ տախտակներ շինիր բեր, որ
նորա վերայ օրէնքներ գրեմ և տամ»: Մովսէս
Աստուծոյ հրամանը իսկոյն կատարելով, քարէ
տախտակները տարաւ Աստուծոյ մօտ, Սինա լե-
րան վերայ: Աստուած իւր ձեռքով այն երկու
տախտակների վերայ գրեց տասն պատգամներ: Առաջին տախտակի վերայ գրեց ա. «Ես եմ քո
Տէր Աստուածը ...», բ. «Կուռք չը պաշտես ...», գ.
«Չնչին բաների համար քո Աստուծոյ անունը մի
յիշիր ...», դ. «Նաբաթ օրը սուրբ պահիր ...»: Այս
չորս պատգամները, որ գրած էին առաջին տախ-
տակի վերայ, կոչւում էին աստուածսիրութեան
տախտակ կամ օրէնքներ. իսկ երկրորդ տախտա-
կի վերայ գրուած էին վեց պատգամներ և կոչ-
ւում էին ընկերութեան տախտակ կամ օրէնք-
ներ:

Ընկերութեան տախտակի վերայ գրուած

առաջին օրէնքը այս էր՝ «Պատուիր քո հօրն ու
մօրը, որ երկար կեանք ունենաս այս աշխարհքի
վերայ և բարի լինի քեզ»։

Աստուած այս ձեւը տալով, այսինքն աս-
տուածսիրութեան օրէնքներից յետոյ ծնողասի-
րութեան օրէնքը գրելով, ցոյց տուեց, որ իրան
սիրելուց յետոյ պէտք է մեր ծնողներին սիրենք.
ընկերսիրութեան օրէնքներից առաջ ծնողասի-
րութեան օրէնքը գրեց, որ մեր ընկերներից,
ամենասիրելիներից առաջ մեր ծնողներին սիրենք՝
մեր հօրն ու մօրը պատուենք»։

Բարի զաւակը, բարեպաշտ հաւատացեալլը,
ճշմարիտ քրիստոնեան որբան ցանկանում է Աս-
տուծուն սիրել, որբան ցանկանում է Աստու-
ծուն պատուել, այնքան էլ պիտի իւր հօրն ու
մօրը սիրէ և պատուէ»։

Եթէ մենք պարտաւոր ենք Աստուծուն սիրել
ու յարդել, որովհետեւ նա ստեղծել է երկինք ու
երկիրը և մեզ խնամում է, ուրեմն պարտաւոր
ենք մեր ծնողներին էլ սիրել ու յարդել, ըստ
որում նոքա են մեզ աշխարհք բերել, նոքա են
մեզ կեանք տուել և նոքա են մեր կենաց պատ-
ճառ եղել, խնամել են մեզ և պահպանել ամեն
պատահարներից»։

Ծնողներին պատուելու և յարդելու պար-
տաւորութիւնը ոչ թէ միայն քրիստոնեաները և
սուրբ մարդիկ ճանաչեցին, այլ և ճանաչեցին
նոյն իսկ փիլիսոփաները և հեթանոսները, որով-
հետեւ իրենց հայրերին և մայրերին այնքան բար-

ձբր էին համարում, որ Աստուծոյ տեղն էլն ընդունում և ասուածների կարգը դասում:

Յիրաւի հօր և մօր երախտիքը, աշխատանը, կրած չարչարանկը իրենց որդոց վերայ այնքան մեծ է, այնքան սուրբ է, որ Աստուծ իրեն իսկական ձեռքովը դրեց. «Պատուիր քո հօրն ու մօրը և աւելացրեց. «Եթէ կատարես այս իմ կամքս, այն է՝ պատուես քո հօրն ու մօրը, աշխարհի վերայ երկար կեանի կունենաս»:

Որովհետեւ Աստուծոյ այս պատուէրը - օրէնքը մեծ է, սուրբ է, ամեն մի գաւակ՝ աղայ թէ աղջիկ, փոքր թէ մեծ, երիտասարդ թէ ծեր, կոյս թէ ամուսնացած, քահանայ թէ եպիսկոպոս, աստիճանաւոր թէ գատաւոր, ոչ մէկը ազատ չեն ամենեին այս օրէնքը ընդունելուց, որովհետեւ Աստուծ Սովորմն իմաստունի ձեռքով էլ կըրկնում է մի և նոյնը ասելով. «Որդեակ, քո հօրդ պատուիրանը պահիր և քո մօրդ օրէնքը մի մերժիր»:

Մենք Աստուծոյ հրամանը մերժած կը լինինք, Աստուծոյ օրէնքի դէմ օրինազանցութիւն արած կը լինինք և նորա կամաց դէմ չարութիւն գործած կը լինինք, եթէ մեր ծնողներին չը յարգենք և չը սիրենք, և նորա ասած բոլոր պատիժները մեղ վերայ կառնենք, ինչպէս որ ասում է, «Ով որ իւր հօրն ու մօրը անարգէ, մահով կը մեռնի»: Անիծեալ լինի նա, ով որ հօրն ու մօրը դէմ հայհոյութիւն կանի: Ով որ հօրն ու մօրը կանիշէ, լող քարկոծուի»:

Եթէ Աստուած իրենց ծնողներին անաբագողներին մահով է պատժում, խակ պատուաղներին երկար կեանք է խոստանում, ուրեմն պատուենք, սիրենք և հնազանդուենք մեր ծնողներին, որպէս զի Աստուծոյ խօստման համաձայն երկար ապրենք այս աշխարհի վերայ։ Պէտք է ոլատուենք ոչ թէ միայն սրտով, այլ և գործով, խօսքով։

Գործով պատուելը այն է, որ զաւակը իւր բոլոր շարժուածքը, նիստ ու կացը, վարմունքը, գործը, առևտուքը, ճանապարհորդութիւնը, ամուսնութիւնը իւր ծնողների խօսքով, համաձայն նութիւնով, նրանց գիտութիւնով, կամքով և հրամանով կը կատարի։

Գործով պատուելը այն է, որ որդին խոշնաբահութիւնով կը խօսի իւր հօրն ու մօր հետքալցրութիւնով, համեստութիւնով, պարկեշտութիւնով և չնորհքով կը պատասխանի նրանց հարցմունքներին։

Որդին որքան պատուով կամ աստիճանով բարձր լինի իւր ծնողներից, այնքան աւելի պէտք է յարգէ ու պատուէ իւր ծնողներին։

Յովսէփ գեղեցիկը եգիպտոսի ամենամեծ մարդն էր, մինչև անդամ թէւ թագաւորից պաշտօնով ցածր, բայց նորանից բարձր պատիւէր վայելում։ Յովսէփի հայրը, Յակոբը, մի հովիւմարդ էր Քանանում, բայց Յովսէփը երբ լսեց, որ հայրը գալիս է, ընդ առաջ դուրս եկաւ, գիւմաւորեց հօրը, ընկաւ նրա վզովը, համբուրում էր

նրան և աւելի պատուելու համար թագաւորի
մօտ տարաւ:

Բայց կան զաւակներ, որ մի փոքր բան հառչ
կանալուն պէս, մի փոքր դիտութիւն ձեռք բե-
րելուն պէս, կամ առևտրի մէջ յաջողութիւն ու-
նենալուն և հարստանալուն պէս և կամ, եթէ վի-
ճակը փոխում է, աստիճանով բարձրանալուն
պէս և որ և իցէ բարձր պաշտօն ստանալուն պէս
այլ ևս չեն ուզում իրենց ծնողներին լել, հնա-
զանդուել և մինչեւ անդամ այլւո չեն կամենում
իրենց ծնողների հետ ապրել: Բայց մենք պէտք
է զգուշացնենք այսպիսի պախարակելի ընթաց-
քից, որքան աստիճանով էլ բարձրանանք, պի-
տի ծնողաց առաջ խոնարհուենք և Յովսէփի պէս
մեր ծնողների վզովը պէտք է ընկնենք, համբու-
րենք և աշխատենք նոյն պատիւը մեր պատուից
էլ բարձրացնել:

Պատուելու հետ հարկաւոր է և սիրել:

Սէրը երկու է, հոգեկան և գործնական:

Հոգեպէս սիրելն այն է, որ ծնողներ կան,
որ կամ շատախօս են լինում, կամ բարկացող,
կամ արբեցող են լինում և կամ հոգեկան հի-
ւանդ, այդպիսի դէսպերում որդիք պարտաւոր
են շատ զգոյշ վարեւել, պէտք է աշխատեն հա-
մեստութիւնով շարժուել, քաղցրութիւնով խօսել,
որպէս զի չը վշտացնեն նրանց և նրանց բար-
կութիւնը չը շարժեն, որովհետեւ հայրը ինչ դրու-
թեան մէջ էլ որ լինի, նորա օրհնութիւնը օրհ-
նութիւն է և անէծքը՝ անէծք: Լինի նա արբե-

ցող, շատախօս, բարկացող և այլն, մի և նոյն է:
Նոյ միանգամ գինու զօրութիւնը չիմանաւ
լով, խմեց և արբեցաւ և այնպէս մերկ ընկաւ
քնեց, նորա որդի Քամը տեսնելով նրա մերկու-
թիւնը ծաղրեց և իր եղբայրներին էլ յայտնեց:
Նոյ զարթնելով քնից, իմացաւ իր Քամ
որդոյ արարմունքը, անիծեց նրան ասելով. «Ա-
նիծեալ լինի մանուկ Քանանը, իր եղբայրների
ծառաների ծառան լինի», այնպէս էլ եղաւ. Որովհ-
հետեւ ասում է. «Այն աչքը, որ իւր հօրը ծաղր
կանէ և կանարդէ իւր մօրը հնազանդիլը, նրան
պիտի փորեն ձորի ագռաւները և նրան պիտի
ուտեն արծուի ձագերը» (Առակաց):

Եթէ հին օրէնքի մէջ հօրն ու մօրը անար-
դողը քարկոծւում է և նոր օրէնքով, այն է՝
Աւետարանով այն մարդիկ, որոնք իրենց ընկերին
մի ծանր կամ նախատական խօսք են ասում,
պատժւում են դժոխքի անհանդչելի կրակով
(«Ով իր եղբօրը յիմար կամ մսրոս ասի,
պարտաւոր լինի դեհեն հրոյն»), ապա իւր ծնողին
անարդողին ինչ սարսափելի պատիժ կը տրուի:
Պէտք է սիրենք մեր ծնողներին գործնակա-
նապէս:

Գործնականապէս սիրելն այն է, որ մեր հօր
ու մօր բոլոր հոգեւոր և մարմնաւոր պիտոյքները
հոգանք, նոցա ուտելիքը, խմելիքը և հագնելիքը
պակաս չանենք, նոցա հագնելիքը միշտ լուացած
և մնաքուր պահենք, աւելի այն ժամանակ, երբ
նրանք կը ծերանան, երբ ուժից և կարողութիւ-

Նից կընկնեն, երբ որ չեն կարողանալ դուրս ու
ներս անել, ահա այդ ժամանակ մենք պարտա-
ւոր ենք մեր հոգ տանելով նոցա մխիթարել,
որովհետեւ նոքա էլ մեր տկարութեան ժամանակ
մեզ իրենց թեսերի վերայ են պահել և իրենց
կուրծքերի վերայ են մեծացրել, գիշեր ցերեկ
իրենց քունը խանգարել, անհանգիստ են եղել,
մեզ համար ազօթել, մեզ հետ լաց են եղել և
մեզ հետ ծիծաղել, նոքա մեզ ջրից և կրակից
են պահել, ամեն մի բոպէ մեր ետեից են ման
եկել, մեզ դաստիարակել և սնուցել:

Բայց զաւակներ կան, որ իրենց ծնողներին
չեն նայում, երբ նոքա քաղցած են կամ ծարաւ,
մերկ կամ տկար և կամ որ և իցէ կարօտութիւն
ունենում բայց Յովսէփը, երբ Եգիպտասում մեծ
և թագաւորավայել փառքի մէջ էր, չը մոռացաւ
իր հօրը, այլ ապսարեց իր Եղբայրների միջոցով.
«Եկ ինձ մօտ և մի ուշանալ, դու և քո որդիքդ,
որդոցդ որդիքը, հօտերդ և արջառներդ, որով-
հետեւ տակաւին հինգ տարի ևս շարունակուելու է
սովը և ես ձեզ բոլորիդ կը կերակրեմ». պատուի-
րեց իւր Եղբայրներին, որ իր փառքը պատմեն
իրեն հօրը ասելով. «Եւ իմ բոլոր փառքը պատ-
մեցէք իմ հօրը և շուտով այստեղ իջեցրեք նը-
րան»։ Ահա այսպէս Յովսէփի նման, երբ որ մենք
հարստութեան և փառքի մէջ լինինք, աւելի ես
ովհափ մեր հօրն ու մօրը մխիթարենք, որպէս զի
դործնականապէս սիրած լինինք։

Սիրելու հետ պէտք է հնագանդուենք էլ,

որովհետեւ ասում է. «Որդեակեք հնագանդ լերուք ծնողաց ձերոց յամենացնի, զի այն է հաճոյ առաջի Տեառն»:

Հնագանդուիլը այն է, որ մեր ծնողների հրամանը առանց ուշացնելու խկոյն կատարենք, ինչպէս Սամուել մարդարէն իր տղայութեան ժամանակ, երբ Տաճարի մէջն էր առլումն. Հեղի քահանային ծառայում: Մի գլշէր քնի մէջ ձայն լսեց, որ Սամուել էր կանչում. Սամուել ուրիշ տղաների պէս չասաց, թէ պառկած եմ, այլ խկոյն վեր թռաւ և գնաց Հեղիի մօտ և ասաց. «Տէր, այսաեղ եմ». Հեղին նրան պատասխանեց և ասաց. «Ես քեզ չեմ կանչել, որդի, գնա պառկիր»: Գնաց պառկեց թէ չէ, գարձեալ ձայն լսեց. գարձեալ վեր կացաւ և գնաց Հեղիի մօտ և մի և նոյն պատասխանը ստացաւ: Այս ձայնը երեք անգամ կրկնուեցաւ և երեք անգամ էլ առանց ծուլանալու վեր կացաւ, խոկ չորրորդ անգամին ինքը Աստուած խօսեց նրա հետ:

Այսպէս բոլոր զաւակները իրենց ծնողների ձայնը լսելուն պէս խկոյն պէտք է լսեն և նրանց կամքը կատարեն, որ Սամուելին նմանին:

Յիսուս Քրիստոս իր երկնաւոր Հօրը այն քան հնագանդուեց, որ իր երկրաւոր կեանքը դոհեց, ինչպէս Պօղոս Առաքեալն ասում է. «Խոնարհեցոյց զանձն իւր մահու չափ և մահու խաչի»: Խոկ իր մարմնաւոր ծնողներին այնպէս հնագանդ էր, որ աւետարանը առանձին կերպով միշում է նրա հնագանդութիւնը. «Եւ նրանց

Հետ իջաւ նազարէթ, գնաց և նրանց հնաղանդէր»։

Որդիք և աղջիկները իրենց հօրն ու մօրը պէտք է հնաղանդուեն, առանց պատճառը հարցւ նելու և առանց ընդդիմանալու։ Աբրահամը իր որդի Խսահակին տանում էր զոհելու, բայց չէր ասում, թէ ուր և ինչի՞ համար է տանում։ Խսահակը հարցնում էր. «Հայր, ահա վայտ, ահա կրտի, ուր է ոչսար յողջակէղ»։ Աբրահամը միայն այս պատասխանեց. «Աստուած կը տեսնէ իր ողջակէղ գառը»։ Խսահակը այնքան հնաղանդուեց հօրը, որ երբ հայրը նրա ձեռքն ու ոտքը կապեց և դրեց սեղանի վերայ մորթելու, Խսահակը ընդդիմութիւն չարաւ և չասաց, թէ հայր, ինչո՞ւ ես ինձ մորթում։ Բայց հիմա, հայրը եթէ իր որդուն մի բան է ասում և իր խելքը չի կտրում, ամենելին չի ուզում հօր խօսքը լսել, ուր մնաց հնաղանդուել։

Խսահակի նման աղջիկներ էլ են եղել. Երբ որ Յեփթայէ Խորայէլի վերայ դատաւոր ընտրուեց, Խորայէլացիք Ամմոնի որդւոց հետ պատերազմում էին։ Յեփթայէն ուխտ արաւ, որ եթէ Աստուած Ամմոնի որդւոցը իր ձեռքը մատնէր և յաղթութիւնով վերադառնար, իր տնից առաջին անդամ՝ դիմաւորողը Աստուծուն պէտք է զոհէր։ Աստուած կատարեց նորա խնդիրը. Ամմոնի որդւոցը յաղթեց, և երբ որ փառաւոր յաղթութիւնով վերադառնում էր, իր միակ աղջիկը թմբուկներով ու պարով իր առաջ դուրս եկաւ.

Երբ որ Յեփթայէն այս աեսաւ, իւր հանգերձնեռը պատառեց և ասաց. «Ո՞հ, աղջիկս, դու ինձ նկուն արիր. Ես Տիրոջ առաջ բերանս բացի և չեմ կարող յետ կանգնել»։ Աղջիկը պատասխանեց. «Դու Տիրոջ առաջ բերանդ բացել ես, կատարիր ինչ որ բերանիցդ դուրս է եկել, որովհետեւ Տէրը վրէժինգիր եղաւ և քո թշնամիներդքո ձեռքդ մատնեց, միայն այս չնորհն արտ ինձ, երկու ամիս ժամանակ տուր, որ ես գամ լեռները և իմ ընկերուհիներիս հետ իմ կուսութիւնս ողբամ։ այնուհետեւ խոստումի կատարիր»։ Յեփթայէն թոյլ տուեց զնալու. աղջիկը զնաց երկու ամիս լաց եղաւ և ապա վերադարձաւ և հնազանդուեցաւ հօր կամքին (Դատաւորաց ԺԱ. 29—40)։

Այսպիսի հնազանդ աղջիկներ ու տղաներ են եղել, որոնց հայրերը կամեցել են դանակ զնել վկներին և գառան նման մորթել են, բայց նրանք իրենց հօր դէմը բերան չեն բաց արել ու հակառակել։

Սորտ համար էլ Աստուած նոցա անունովն էր երգւում և միշտ նոցա անունն էր յիշում թէ՝ «Եօ եմ Արքահամի և Իսահակի Աստուածը, ինձ հնազանդող, իր ծնողին հնազանդող Իսահակի Աստուածն եմ»։

Բայց զարմանալին այն է, որ Իսահակի ժամանակ ոչ օրէնք կար և ոչ գիրք, ոչ Աւետարան կար, ոչ մարդարէք կային և ոչ էլ Առաքեալներ, ոչ քարոզողներ կային և ոչ ուսուցանովներ, բայց

Նորա այնպիսի սէր, հաւատք և հնազանդուշ
թիւն էին ցոյց տալիս:

Իսկ եթէ նորա տեսնէին ու լսէին մարգարէութիւնները, այն մեծամեծ հրաշքները, որ Աստուած արեց Խարայէլի ազգի համար և եթէ տեսնէին Յիսուս Քրիստոսի Աստուծոյ Որդոյ աշխարհք դալը և լսէին նորա քարոզները, եթէ տեսնէին նորա խոնարհութիւնը, որ մեր ոտները լուացաւ, տէսնէին նորա հնազանդութիւնը, որ մեր փրկութեան համար խաչ բարձրացաւ ու կենդանի զոհ դարձաւ, ինչ մեծ փափագով և ուրախութիւնով պէտք է հնազանդէին Յիսուսին և իրենց ծնողներին:

Բայց նայենք և տեսնենք այս ժամանակիս,
այս դարիս մէջ՝ թէ հաւատքը ինչպէս մեռած է,
յոյոը ինչպէս կորած է, սէրը ինչպէս սառած է,
որ մենք հաւատոյ հայր Աբրահամին էլ տեսանք,
հնազանդութեան հայր Խոահակին էլ տեսանք,
ողջախոհութեան հայր Յովսէփին էլ տեսանք,
հոգիացած մարգարէներին, երեք մանկունքին,
Թանիէլին էլ տեսանք, Յիսուս Քրիստոսին էլ տեսանք,
որ մեզ համար խաչ բարձրացաւ, Ստեփաննոսին տեսանք, որ իրեն քար դցողների համար աղօթք արեց, Առաքեալներին էլ տեսանք,
որ մեծամեծ հրաշքներ դօրծեցին և Աստուծոյ
սիրոյ համար իրենց վարդապետի նման ոմանք
չարչարուեցին, ոմանք խաչուեցին և ոմանք էլ
նահատակուեցին, բայց այս բոլոր տւաքինուշ
թիւններից ոչ մինը մեզ վերայ չի գանւում, ոչ

մէկից օրինակ չենք վերցնում։ բայց նորա, որ ոչ
մինը չը տեսան, ոչ մէկից չը սովորեցին, իրանք
մեզ օրինակ դարձան։ Այս է ահա հաւատոյ
մեծութիւնը և սորա համար էր, որ Աստուած
երկնքից ասում էր՝ թէ «Ես եմ Աբրահամի և
Իսահակի Աստուածը, ինձ հնագանդուող Իսա-
հակի Աստուածը....»։

Ուրեմն սիրենք մեր ծնողներին, որ աշխարհ-
քի վերայ երկար կեանք ունենանք, հնագան-
դուենք մեր ծնողներին, որ Իսահակի նման երկրի
բարութիւնը վայելենք, հոգ տանենք մեր ծնող-
ների վերայ, որ Յովսէփին նմանինք և երկն-
քումն էլ երկնային արքայութիւն ժառանգենք։
Հնագանդ լինինք մեր ծնողներին, ինչպէս Յիսուսը
իւր մարմնաւոր ծնողներին հնագանդ էր Երու-
սաղէմից Նազարէթ վերադառնալու ժամանակ և
իր երկնաւոր Հօրը՝ Աստուծուն հնագանդուելով
մեզ փրկելու համար խաչի վերայ բարձրացաւ և
այդ սարսափելի տանջանքի ժամանակ ասում էր
մօրը, «Մայր ահա քո որդիին»։ Պատուենք մեր
հօրն ու մօրը, որ երկրի վերայ երկար կեանք
ունենանք։

լ.

առ առ առօք բայց Աստվածի գոհեց յաման ուժին
պատու անհայտութեան ու ոչինչն ու անոնա ու զայտ
առաջակա անու և առ անհայտ յաման յահանձնու յահ
անհայտ ու առ զայտու առու և առ անհայտ ու
առ անհայտ նու ու առ առ անհայտ ու առ անհայտ ու

առ անհայտ «Խսկ որք ընկալան զնա, Ես նոցա
իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել,
որոց հաւատացեն յանուն նորա».

(Յովի. Ա. 12):

Բայց որոնի ընդունեցին նրան,
իշխանութիւն տուաւ նրանց Աստուծոյ
որդիներ լինելու, որոնի կը հաւատան
նորա անուանը:

ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՔԸ.

Պօղոս առաքեալը Գաղատացւոց թղթումն
ասում է՝ թէ Յիսուս Քրիստոսի աշխարհը դա-
լու նալատակն է, որ մենք որդեգրութիւն ընդու-
նենք—այսինքն Աստուծոյ որդիներ լինինք»:

«Բայց երբ որ ժամանակի լրումն եկաւ, Աս-
տուած ուղարկեց իւր Որդին՝ որ կնոջից ծնուեց,
օրէնքի տակ մտաւ, որ օրէնքի տակ եղողները
փրկէ և մենք որդեգրութիւն ընդունենք»։ (Գաղ.
Դ. 5—6) կրկին ասում է. «Այսուհետեւ չես ծա-
ռայ, այլ որդի և ժառանգ Աստուծոյ»։

Այժմ այս հարցն է առաջ դալիս, թէ ինչո՞ւ

Քրիստոսի հաւատացեալները որդի և ժառանգ
են կոչում: որովհետեւ բնականաբար հօր կա-
րողութիւնը օրէնքով որդին է ժառանգում, նոյն
պէս էլ թագաւորների մեծ և անդրանիկ որդի-
քը, որոնք կոչում են ժառանգ:

Այսպէս էլ քրիստոնեաները Աստուծոյ որդի են
կոչում այն պատճառով, որովհետեւ իրենց երկնա-
ւոր Հօր ունեցածը պէտք է ժառանգեն: Հօր ու-
նեցածը երկնքի թագաւորութիւնն է, որ պիտի
քրիստոնեաները ժառանգեն: Դորա համար էլ
Աստուծոյ որդիները ոչ թէ միայն որդի են կոչ-
ում, այլ և ժառանգորդ, այսինքն երկնային թա-
գաւորութիւն ժառանգող. ինչու, — որովհետեւ Աս-
տուծոյ որդիները երկնքումը հասարակ անուն
չեն ստանում, այլ թագաւորութիւն, թագաւո-
րական փառք, մեծութիւն և թագաւորական իշ-
խանութիւն են ժառանգում: այդ պատճառով
էլ կոչում են որդի և ժառանգակից Քրիստոսի»:
Այսպէս է ասում առաքեալը. «Նոյն ինքն Հոգին
վկայութիւն է տալիս մեր հոգւոյն հետ, որ մենք
Աստուծոյ որդիք ենք: Եթէ որդիք, ապա և ժա-
ռանգներ՝ Աստուծոյ ժառանգներ և Քրիստոսի
ժառանգակիցներ»:

Բնաբանի մէջ ասուեցաւ՝ «իշխանութիւն
տրուեց» այսինքն որդիական իշխանութիւն:

Որդիութիւնը իշխանութեան իրաւոնք է,
որ տրում է հաւատացեալներին: Այս իշխանու-
թիւնը հրեշտակների իրաւունքներից բարձր է:
Քրիստոսի համար ասուած է՝ թէ «Եւ այնչափ

եղաւ, որ հրեշտակներից գերազանց անուն ժառանգեց»։ Ի՞նչ է այս գերազանց անունը։ — Որդի։ — յետոյ ասում է՝ «Քանզի հրեշտակներից որին ասուեցաւ թէ՝ դու խմորդին ետ», բոլոր հրեշտակները սպասաւորով հոգիներ են։ Աստուծոյ որդւոյ գերազանցութիւնը այն է, որ հրեշտակները սպասաւորում են, ծառայ են, խակ հաւատացեալները որդի են և թագաւորութեան ժառանգակից Քրիստոսի հետ։ Կը նշանակի՝ թէ Քրիստոս երկնքում ինչ փառքի, ինչ մեծութեան ու պատույ արժանի է, բոլոր հաւատացեալներն էլ երկնքումը Քրիստոսի փառքերին, մեծութիւններին և պատիւներին բաժանորդ և մասնակից են։ Սորա համար Հոգին վկայում է թէ՝ «Եթէ որդի, և ժառանգ Աստուծոյ և ժառանգակից Քրիստոսի»։ Հայր Աստուած ինչպիսի մեծութիւն, ինչ փառք և ինչ պատիւ որ սահմանել է Քրիստոսի համար, նոյնպէս էլ իր Որդւոյ անուանը հաւատացողներին

Որդիութեան իշխանութիւնը սիրոյ իշխանութիւն է. Յակոբոս առաքեալն ասում է. «Ճենուեք, Հայրն ինչպիսի սէր շնորհեց մեզ, որ մենք Աստուծոյ որդիկը լինինք»։

Մեր արժանաւորութեան, մեր արդարութեան պատճառովը չէ, որ այս որդիական իշխանութիւնը տրւում է մեզ, այլ Քրիստոսի անհուն սիրոյ մեծութեան ձրի պարզեն է, «Վասն զի նրա շնորհքով էք փրկուած հաւատքի միջոցով, և այս ոչ թէ ձեզ ու ձեզ, այլ Աստուծոյ պար-

գեն է, ոչ թէ դորձքերից, որ ոչ ոք չը պարծեաւնայ» (Եփես. Բ. 9):

Աստուած այնքան սիրեց աշխարհքը, որ իւր Միածին Որդին ուղարկեց խաչուելու։ Ուրեմն մի հայր, որ իր որդին իր բարեկամի համար չի խնայում; Էլ ինչ կը խնայի նորա համար։

Այսպէս էլ Աստուած, եթէ իր Միածին Որդին չը խնայեց մեզ համար, ուրեմն երկնային բարիքներից ոչ մի բան էլ չի խնայիլ։ Յիսուսի կեանքը ամեն թագաւորութիւնից մեծ է. եթէ նորա կեանքը չը խնայեց մեզ համար, թագաւորութիւնն էլ չի խնայի. եթէ թագաւորութիւնը տուեց, թագաւորական վառքն էլ կը տայ, թագաւորական պատիւն էլ, թագաւորական իշխանութիւնն էլ կը տայ։

Եւ որովհետեւ երկնքումը հաւատացեալներին այսպիսի մեծութիւն, թագաւորական վառք, պատիւ և իշխանութիւն է տրում, դրա համար էլ ասում է՝ «Իշխանութիւն տրուեց Աստուծոյ որդիք լինելու»։

Որո՞ց տրուեց. — որո՞նք Քրիստոսին ընդունեցին։

Քրիստոսին ընդունել կը նշանակի Քրիստոսի հոգին ընդունել։ «Եւ որովհետեւ դուք որդիք էք Աստուծոյ, իր Որդւոյ Հոգին ուղարկեց ձեր սրտերի մէջ» (Գաղ. Դ. 6)։ Ուրեմն մենք Որդւոյ Հոգին ընդունելով, նշանակում է որդիութեան հոգի ունիք։ Պօղոսն ասում է. «Վասն զի ծառայութեան հոգի չառիք, որ դարձեալ վախե-

նաք, այլ որդեգրութեան հոգին առիք, որով
աղաղակում ենք, Աբբա Հայր»:

Ի՞նչ կը նշանակի որդիութեան հոգի. — Որ-
դիութեան հոգին հնազանդութեան հոգի է
(Հայր, թող Քո կամքը լինի): Աշխարհքի վտանգ-
ներին, նեղութիւններին և չարչարանքներին պի-
տի հնազանդուենք: Աստուած Երբ որ սահմա-
նում է մեղ համար խաչ, մահ կամ այլ չարչա-
րանքներ, Յիսուս Քրիստոսի նման պէտք է հնա-
զանդուենք ասելով Հայր, թող Քո կամքը լինի:
Աստուածոյ որդիները նոյնպէս աղքատութեան
մէջ, սովածութեան մէջ երբէք չեն արտնջում
Աստուածանից, այլ ընդունում են, որ այս բո-
լորը Աստուած է ուղարկում իրենց, իբրև փոր-
ձութիւն, իրենց հաւատքը աւելի զօրաւոր ու
կենդանի անելու համար, ինչպէս նոյին, Աբ-
րահամին, Իսահակին, Յակովին, Յովսէփին,
Յովբին, Դանիէլին, Ստեփաննոսին և այլոց և
որովհետեւ խմանում էին աշխարհքի վերայ ե-
ղած բոլոր նեղութիւնները համեմատելով երկնքի
հարստութեան հետ, ինչպէս Պողոսն ասում էր.
«Այս աշխարհքի չարչարանքները շատ փոքր են
գալու փառքի մօտ, որ մեղ յայտնուելու են»:
Այդ պատճառով նորա ասում էին. «Հայր, թող
Քո կամքը լինի» և այս կեանքի ամեն տեսակ
աղքատութիւններին համբերում էին, որպէս զի
երկնքումը հարստանան, այս կեանքի չարչարանք-
ներին համբերում էին, որ երկնքումը փառաւո-
րուեն և համարձակ կարողանան աղաղակել և

ասել՝ «Աբբա հայր»։

Որդիութեան հոգին սիրոյ հոգի է։
«Բայց ասում եմ ձեզ, սիրեցէք ձեր թշնամիներին, բարի արէք ձեզ ասուղներին, օրհնեցէք ձեզ անիծողներին և ազօթք արէք նրանց համար, որոնք ձեզ չարչարում են հալածում են, որ լինիք երկնաւոր Հօր որդիներ, որովհետեւ իւր արեգակը ծագում է չարերի և բարիների վերայ և իւր անձրեք բերում է արդարների և մեղաւորների վերայ»։ Այսպէս Քրիստոս իրեն չարչարուղների համար աղօթք արեց ասելով՝ «Հայր, ներիր արանց, որովհետեւ չեն իմանում ինչ են գործում»։ Իսկ Սաեփաննոսը ծունդ դնելով, ասում էր՝ «Տէր, այս մեղք մի համարիլ պրանց»։

Որդիութեան հոգին խաղաղութեան հոգի է։
«Երանի խաղաղաբարաց, զինոքա որդիք Առառուծոյ կոչեսցին»։

Աստուծոյ Որդւոյ մի յատկութիւնն էլ այս էր, որ խաղաղութիւն էր սիրում և քարոզում։ Որովհետեւ իբրև որդիք տակաւին մեզ յայտնի չէ թէ ինչ պիտի լինինք (Յով. Ա. 9, 2)։ Քրիստոնեան չը գիտէ, թէ իւր կեանքը այս աշխարհաքի վերայ ինչ ընթացք և ինչ վախճան կունենայ։ ով գիտէ աղքատութիւն, հարատութիւն, հիւանդութիւն, ցաւ, վիշտ, տրամութիւն, չարչարնեք, խաչ, մահ, սղոցումն, քարկոծումն և այլ պատահարներ, այս բոլորի մէջ խաղաղ պէտք է լինի։ Եթէ այս խաղաղութիւնը, որ մոքերից վեր

է, ունենանք, չենք փոխուի, չենք ուրամայ Քրիստոսին. այս խաղաղութիւնովն էր, որ շատերը զոհուեցան Քրիստոսի անուան համար «Բայց այս գիտենք, երբ որ յայտնուի, նրա նման կը լինինք»։ «Ով որ Քրիստոսի հոգին չունենայ, նա նորանը չե»։ Խաղաղասէր նշանակում է՝ ապրիլ խաղաղ սրտով, խաղաղ հոգով և խաղաղ բարք ու վարքով։ Բացի այս, ինչպէս ինքն է սիրում խաղաղ ապրել, ցանկանում է, որ ուրիշներն էլ խաղաղ ապրեն, նորա համար, որ խաղաղասէր է, խաղաղասէրը իր կեանքում ոչ մի զրկանք չի անում և իր գրկողներին էլ ներում է.

Խաղաղութեամբ պէտք է նմանինք Աստուծոյ և Յիսուս Քրիստոսին. Պօղոս առաքեալը ասում է՝ «Աստուած խաղաղութեան Աստուած է, և խաղաղութեան Աստուածը ձեզ հետ լինի....»։ Եւ մեծ խաղաղաբարը նորա Միածին Որդի Յիսուս Քրիստոսն էր, որ իւր արիւնով և խաչով խաղաղութիւն ձգեց երկնքի և երկրի մէջ, «Որ քանդեց թշնամութիւնը խաղաղութիւն քարոզելով նրանց, որ հեռուն էին և նրանց՝ որ մօտ էին» այսինքն հեթանոսներին և հրեաներին։ Մէջտեղի պատը քանդեց և երկուքը մէկ արեց և այս երկուքը միացրած հաշտեցից Աստուծոյ հետ։ Եւ երբ որ Քրիստոս ծնաւ, հրեշտակները խաղաղութիւն երգեցին՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն»։

Որդիութեան հոգին ներողամտութեան հոգի է։

Աստուծոյ Որդւոյ մի յատկութիւնն էլ ներողամտութիւնն է:

«Արդ, եթէ դուք մարդկանց յանցանքները ներէք, ձեր երկնաւոր Հայրն էլ ձեր յանցանքները կը ների. իսկ եթէ չը ներէք, ձեր Հայրն էլ ձերը չի ներիք Քրիստոս իրեն արհամարհող ներին և չարչարողներին ներում էր ասելով «Հայր թող դրանց, որովհետեւ չեն խմանում թէ ինչ են գործում» Եթէ Քրիստոսիւր անձը չարչարող ներին, իւր կեանքը վերցնողներին ներեց, ուրեմն մեր բոլոր ունեցածները կեանքից փոքր լինելով, պէտք է ամեն բանի համար մեզանչողներին ներենք, ինչպէս Ստեփաննոսը և շատ ուրիշ մարտիրոսներ այսպէս ներելով Փրկչի նման դարձան թէև այդ անհնարին է մարդկային բնութեան մէջ, բայց Աստուծոյ շնորհքին անհնարին բան չը կայ: Մէնք պէտք է Ստեփաննոսին և ուրիշ մարտիրոսներին հետևելով մեր ներողամտութեամբ Քրիստոսին նմանինք, պէտք է ներենք մեզ վիրաւորողներին, օրհնենք մեզ անկծողներին, բարի անենք մեր թշնամիներին, և ազօթք անենք նրանց համար, որոնք մեզ հալածում են, որ Քրիստոսին մեզ հետ ունենանք, որովհետեւ ով չունի Քրիստոս, չունի և երկինք:

Որդիութեան հոգին ազօթասիրութեան հոգի է:

«Հայր մեր, որ յերկինս ես»

Աստուծոյ որդիք անդադար ազօթք են անում իրենց երկնաւոր Հօրը: Ինչպէս ամեն մի-

Հօր հնազանդ որդին միշտ իր Հօր կամքն է հարցնում ամեն բանի մէջ, այնպէս էլ երկնաւոր Հօր որդիները ամեն բանի մէջ Հօր Աստուծոյ կամքն են հարցնում՝ թէ Տէր, ինչ եռ ուզում որ անեմ Ազօթքը մարդուն դնում է Աստուծոյ հետ սիւրոյ յարաբերութեան մէջ։ Մենք Աստուծուն կը մօտենանք միմիայն ազօթքով, կը բարեկամանանք Նորա հետ միմիայն ազօթքով, մենք Աստուծոյ որդիք կը գառնանք միայն ազօթքով և երկնքի արքայութիւն ձեռք կը բերենք միայն ազօթքով։ Ուրեմն փառք, պատիւ և իշխանութիւն մենք կը ստանանք երկնաւոր Հօրից միմիայն խնդրելով։ Յիսուսն էլ շարունակ ազօթում էր և իր փառաւորութեան համար խնդրում էր. «Հայր, փառաւորիր Քո որդուդ և Քո որդիդ էլ Քեզ փառաւորէ»։ «Հայր, եթէ հնար է, այս բաժակը թող անցնի ինձանից»։ «Հայր, իմ հոգին Քո ձեռքն եմ յանձնում»։ «Հայր, չնորհակալ եմ Քեզանից, հասել է ժամը»։

Աստուծոյ որդիք, որոնք հնազանդութեան, սիրոյ, խաղաղասիրութեան, ներողամտութեան և ազօթասիրութեան հոգի ունին, այսպիսիները կոչւում են Աստուծանից ծնուած՝ «Ոյք ոչ յարենէ և ոչ ի կամաց մարմնոյ և ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան և Բանն մարմին եղեւ և բնակեցաւ ի մեզ»։ Քրիստոսի հնազանդութեան հոգին, սիրոյ և խաղաղութեան հոգին պէտք է Աստուծոյ որդւոց արտերումը բնակուած լինի։ Աստուծոյ որդին չի կարող մեղք գործել,

որովհետև Աստուածանից է ծնուած։ «Ամեն ոք,
որ Աստուածանից է ծնուած, մեղք չէ դործում,
վասն զի նորա սերմը նրանում մնում է և չէ
կարող մեղանչել, վասն զի Աստուածանից է
ծնուած»։ Երբ որ ցորեն են ցանում, ցորեն է բուս-
նում։ Երբ որ Աստուածոյ որդւոյ սրտում ցանւում
է Աստուածոյ հոգին, նա մեղք չի դործում, ըստ
որում մեղք չի սերմանուել նորա սրտում։

Իսկ նա, որ մեղք է դործում, նա սատա-
նայից է, որովհետև սատանան հէնց սկզբից մե-
ջանջում է։

Սորանով են յայտնի Աստուածոյ որդիք և
սատանայի որդիքը։

«Երկնքի արքայութիւնը նմանում է մի մար-
դոյ, որ իւր սրտումը բարի սերմ ցանեց. Երբ որ
մարդիկը քննեցին, թշնամին եկաւ և որոմ վարեց»։

Այս առակը բացատրելու ժամանակ ասաց. «Սերմ ցանողն է Որդի Աստուածոյ, իսկ թշնա-
մին, որ որոմն վարեց, սատանան է» . . .

Քրիստոս Երկնքի արքայութեան սերմն է
ցանում մարդկանց սրտերում, իսկ սատանան
որոմն է սերմանում։

Քրիստոս արթուն ժամանակ է սերմանում. «Երթնացիր, դու որ կը քնանաս, կանգնէ մեռել-
ներէն, Քրիստոս քեզի լոյս չը պիտի ծագէ մինչեւ¹
չը զարթնես, մինչեւ չը կանգնես Քրիստոս լոյս չպի-
տի ծագէ քո սրտումը»։ Բայց սատանան քնած-
ժամանակ է սերմանում. «Եւ երբ որ մարդիկ
քննեցան, թշնամին որոմներ ցանեց ու գնաց»։

Ով որ անհոգ է երկնքի արքայութեան համար, հոգւոյ փրկութեան համար, նա է քնածը, և հենց սատանան էլ այդպիսիների սրտումն է չարութեան սրոմներ ցանում:

Աստուծոյ որդուոյ օգուտն ինչ է, այս առաքինութիւնների, այս չարչարանքների օդուողը կամ վարձարութիւնն ինչ է:

«Սիրելիներ, այժմ մենք Աստուծոյ որդիք ենք և տակաւին յայտնի չենք, թէ ինչ պիտի լինինք, բայց գիտենք, երբ որ յայտնուի, նորա նման պիտի լինինք».... Աստուծոյ որդիքը այս կեանքումը չը գիտեն՝ թէ իրենց օրերը ինչպես պիտի անցնին: «Հայր, նրանք, որոնց ինձ տուիր, կամենում եմ ինչ տեղ որ ես եմ, նրանք էլ ինձ հետ լինին, որ իմ փառքը տեսնեն»: «Ով որ յաղթէ՝ ամենը կը ժառանգէ, ես կը լինիմ նրան Աստուծ, և նա կը լինի ինձ որդի: Իսկ վախկուներին, անհաւատներին, մարդասպաններին և ամեն ստախօսներին բաժինը կը լինի կրակով և ծծմբով վառուած լիճը»:

Եղանակներ Ա մասն ի ի ուստի դաշնամ

աւագայուն չ ընդուց լի և մարդուն
գոյքուն բանական նոր գնայիշու շքից
հայ ունց լի նաև սմբակ և սկսած ունիք
հայութ և բայց վայ պատուի նաև նուա
ունակ առաջ ու առաջ առաջ ու առաջ նուա

ԹՌ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆ ԿԵԱՆՔ

«Ես եկի, զի կեանս ունիցիք եւ
առաւել եւս ունիցիք»:

Ես եկայ, որ կեանք ունենամ եւ
անդի եւս ունենամ:

Կատաղի ալիքների մէջ խորասկուած նու-
ժի բեկորներին ապաւինած թշուառը ի՞նչ է ա-
ղաղակում։—Կեանք։

Եւ Փրկիք աշխարհ.ք գալով, կամեցաւ, որ
մարդիկ վայելուչ կեանք և սուրբ կենցաղավա-
րութիւն ունենան։

Արդեօք ի՞նչ կայ մարդու համար աշխարհ-
քում այնքան սիրելի քան իւր կեանքը. արդեօք
որ բանը կեանքի համար չէ. ի՞նչ բանով արդեօք
կարելի է փոխարինել կեանքը. ով չէ սիրում իւր
կեանքը. արդեօք դոյութեան կուուի համար ամեւ-
նափոքրիկ ճճին անդամ ինքնապաշտպանութեան
միջոցների չէ դիմում. արդեօք կեանքը մարդու
համար մի անգնահատելի գանձ չէ. բայց ով
տուաւ մարդուն այս անհուն և ամենամեծ պար-
գել, եթէ ոչ ամենաբարի Աստուածը։

Կեանքը Աստուծոյ անհուն և ամենամեծ
պարգևն է, որ ընծայել է մարդուն:

Փրկիչը աշխարհք եկած ժամանակ արդեօք
դվաւորապէս և ամենից առաջ ո՞ր բանը աչքի
առաջ պիտի ունենար, ո՞ր բանի վերայ ուշ պիտի
դարձնէր՝ եթէ ոչ այն բանի, որը մարդու համար
ամենասիրելի և թանկագինն է՝ այն է՝ մարդու
կեանքը. և յիրաւի գրա համար էլ Փրկիչը յայտ-
նում է, ինքը եկաւ, որ մարդու այդ սիրելի
կեանքը աւելի լաւ և ցանկալի վիճակի մէջ դնէ.
«Ես եկի, զի կեանս ունիցիք և առաւել ևս ու-
նիցիք»:

Մարդիկ երբ իրենց բարեկամներից աւանդ-
ներ կամ ընծաներ ու պարզեներ են ստանում,
ինչ խորին յարգանքով են պահպանում. ոչ թէ
միայն ուրախանում են նոցա վերայ, այլ և պար-
ծանքով յիշում են և պատմում իրենց սիրելինե-
րին՝ թէ այս բանը իմ այս ինչ բարեկամիս ըն-
ծան է և շատ զգուշութեամբ պահպանում է մին-
չև մահ:

Բայց այնպիսի մի պարգև, որ մեր կեանքն
է և ամենաբարի Աստուած է ընծայել մեզ, ո՞ր-
պիտի զգուշութեամբ պէտք է պահպանենք և
ինչ խորին երախտագիտական զգացմունքներով
պէտք է յիշենք այն ամենաբարի Աստուծոյ ա-
նունը, որ մեզ պարգևել է մի այնպիսի անդնա-
հատելի, անփոխարինելի ընծայ—կեանք:

Բայց արդեօք մտաբերում ենք, որ Աստուած
մեզ մի այսպիսի ընծայ է աւանդ տուել. դոնէ

Երբեմն երախտագիտական չնորհակալութիւնն
յայտնենք, փառք և գոհութիւն մատուցանենք
Նորան:

Նայենք. եթէ մեր բարեկամները մի որեւիցէ
չնչին իր են ընծայում կամ մի մատանի, դրբոյկ
կամ որ և է բան, ամեն ժամանակ մենք յիշում
և մտաբերում ենք նրան, բայց մեր այս ամեն
նամեծ ընծայ տուողին չենք յիշում. պատճառն
այն է, որ մենք ապերախտ ենք, մոլորուել ենք
և Աստուծոյ ճանապարհից շեղուելով, թափա-
ռում ենք մոլորուած ոչխարների նման:

Բայց երբ որ Աստուծոյ չնորհիւ յանկարծ կը
սթափուենք այս խաւար դրութիւնից և խաւար
ընթացքից, պարտաւոր ենք, որ իսկոյն դարձի գա-
լով, զզջանք մեր ապերախտութիւնը և մեր ան-
ձին վայ կարգալով մեղայ կոչենք ամենողորմ
Աստուծուն թէ՛ Տէր, յանցանք եմ գործել Քո
բարութեան դէմ, ներիր ինձ իմ սխալանքներս,
և այնուհետև միշտ արթուն հսկողութեամբ պահ-
պանենք այն մեծագին դանձը, որ մեզ ստեղծողն
է պարգեել մինչեւ որոշեալ ժամանակ, իբրև թան-
կագին աւանդ:

Կեանքը պահպանելու համար ամեն քայլա-
փոխում խիստ հարկաւոր և կարեոր է գործ
դնել առողջապահական միջոցներ։ Առողջապա-
հական գլխաւոր միջոցը չափաւորութիւնն է ամեն
գործում. մենք պէտք է անպայման գործ դնենք
այդ չափաւորութիւնը թէ ուտելու, թէ խմելու,
զբօննելու, հագնելու, աշխատելու, հանգստա-

նալու, զուարձանալու և թէ ծախսելու, մի խօսքով, ամեն բանի մէջ։ Այս ամեն բանի մէջ չափաւորութիւնը մարդուս թէ մարմնաւոր և թէ մտաւոր բոլոր ոյժերը հաւասարակշռութեան մէջ է պահպանում։ օղուտը այն է, որ մարդուս միշտ պահպանում է արթուն, զգաստ, աշխոյժ և աշխատութեան մէջ աչքաբաց։

Չափաւորութիւն ուտելիքի մէջ։ մի տեսակ կերակրով երբ մարդս բաւականանում է, աւելի դիւրամարս է լինում և առողջ մնում։ իսկ մի քանի տեսակ իրար հակառակ մարսելի կերակուրներով երբ որ ստամիքսը ծանրաբեռնում է, առողջութիւնն էլ է խանգարւում։

Խմելիբի վերաբերմամբ, առ հասարակ ոգելից ըմպելիքների ամենափոքր չափն անգամ վնասուակար է մարդուն, իրբև գրգռեցուցիչ ուժեր, որոնց չափազանց գործածելը, մանաւանդ ընդմիշտ արբեցութիւնը, պատճառ է դառնում մարդու առողջութեան խանգարմանը և ամբողջ կազմուածքի քայքայման։ բայց խիստ չափաւորութիւնն ու սակաւապէտութիւնը ժամանակաւորապէս պահպանում է և նպաստում մարդու հոգեկան և ջղային կարողութիւններին։

Հագուստի վերաբերմամբ։ պարզ և անպահոյն հագուստները աւելի ձեռնատու են քան թանակագին և խայտաճամուկ զարդարանքները։ հագուստի գեղեցկութիւնը մաքրութեան մէջն է կայանում և ոչ թէ գների մէջ։

Քոսանքի և զուարձալի տեղերը երբեմնաւ

պէս կարի հարկաւոր են, որովհետեւ մարդու հոգեկան տխուր և տրտում զգացումները սփռվում և նրան ուրախ տրամադրութեան մէջ են դնում, հետևաբար փարատում են մարդու բոլոր վշտերն ու թախծութիւնները. բայց չափազանցութիւնն ու շարունակ զբօսանքի ետևից դնալը մարդուն ծուլութիւն և դանդաղկոտութիւն է սովորցնում:

Աշխատութիւնը մարդուն սովորցնում է տուկունութիւն և գիւմացկանութիւն, հետևաբար և դարձնում է նորան առողջ, պնդակազմ և աշխայժ մի մարդ, որովհետեւ աշխայժ և առողջ մարդիկ կարող են իրանց հացը ճարել, իսկ հիւանդները քաղցած պառկել գիտեն:

Զափաւորութեամբ ծախսելը որքան բնական նոյնքան և անհրաժեշտ է մարդուն, որ իւրաքանչիւր կոպէկին այնքան նշանակութիւն պէտք է տալ, որքան բուբլուն, վասն զի մարդը երբեք չի կարող 99 կոպէկով բուբլի գնել, նոյնպէս թէ հարիւր լուցկին մի կոպէկ արժէ, բայց առանց կոպէկի մի լուցկի չի կարելի գնել, առա թէ ոչ, վաճառականութեան սկզբունքի գէմ մեզանչել կը ճանաչուի, ով որ առանց կոպէկի կը համարձակուի վաճառատուն մտնել մի բան գնելու, ևս անշուշտ ամօթալի կը մնայ:

Կոպէկին նշանակութիւն չը տուովը բուբլուն էլ նշանակութիւն չի տալ, ամեն մի ամբողջութիւն բաղկանում է մասերից, ինչպէս և մեծամեծ գումարներն էլ կոպէկներից. կո-

պէկները շատ հարկաւոր են. մարդուն, որովհետեւ
առանց կոպէկի մի քայլ անդամ չի կարող անել։
Կեանքի գլխաւոր պահանջը դրամն է։ Այդ բու-
լորի մէջ գեր խաղացողը չափաւորութիւնն ու
խնայողութիւնն է, որ մարդու կեանքը վայելուչ
կենցաղավարութեան և բարձր վիճակի մէջ է
դնում։ Դրամը մարդուս օգնում է ամենայն գէպ-
քում, մարդուն աստուածասէր, ընկերասէր, հա-
սարակութեան պիտանի և պէտքական անդամ
է դարձնում։ Դրամով են շինում եկեղեցի,
դպրոց, աղքատանոց, անկելանոց, հիւանդա-
նոց և ամեն հասարակական աստուածահաճոյ
հիմնարկութիւններ։

Բայց շուայլութեամբ և անհաշուութեամբ,
մարդիկ սնանկանում են, աղքատանում են և հա-
սարակութեանը մի մի ծանր բեռն են դառ-
նում ու նստում նրա վզին, «գէհ, մեզ ոզորմե-
ցէք, մեզ պահպանեցէք» պահանջներ են անում։
Հասարակութիւնը առանց այն էլ շատ պէտքեր
ունի հսկալու, օրինակ որբեայրիներին, աղքատ
հիւանդ անկեալներին խնամել, և եթէ այս
բոլորի հետ էլ ժողովրդի մի մասն էլ իրանց
շուայլութեան պատճառաւ աղքատանում են, հա-
սարակութեանը մի ուրիշ ծախսի և խիստ ծան-
րութեան դուռն էլ են բաց անում։

Մարդիկ բացի հասարակական հոգսերը հո-
գալուց, իբրև ընտանիքի տէր, իւրաքանչիւրն ու-
նի իւր առանձին հոգսերն էլ։

Մարդ ոչ թէ միայն հասարակական և ըն-

տանեկան հոգսերով է զբաղւում, այլ և, իբրև
մարդ, ունի նաև իր կեանքի մէջ ձգտումներ
կամ այսպէս ասած իր իդէալը. մարդ առանց
նպատակի ապրելով նշանակում է թէ կեանքը
նորա համար մեռած է:

Մենք եթէ ապրում ենք աշխարհքիս վերայ,
մեր կեանքի ընթացքը միշտ ոգեսորուած պիտի
լինի բարձր առաքինութեան, առաջադիմութեան
և ընտիր գաղափարներով, մեր կեանքը պիտի
առաջնորդուի միշտ բարոյական ձգտումների
սկզբունքներով, դէպի բարին, դէպի առաքինին
ու բարձր քաշով զգացմունքներով, որովհետեւ
ամենաբարի Աստուածը մեզ պարզեել է կեանք.
այդ Բարձրեալի պարգևած կեանքովը մենք պիտ
տանի պիտի լինինք աշխարհքիս ու մարդկութեան
և պէտք է ընթանանք այն ուղիով, այն ընթացքով,
որը ի նկատի ունենալով Աստուած,
ձեռնարկեց մարդոյ ստեղծագործութեանը:

Ինչո՞ւ Աստուած արարչագործեց, ստեղծեց
մարդուն:

Որպէս զի նա ապրէ աշխարհքիս վերայ
որպէս միւս անսասունները, որպէս զի նա մուլութեան մէջ, իւր անձնական փառքի և եսաւ
միլութեան ետեից ընկնի, չարութեան ու նենդութեան արհաւիրքներով շրջապատէ իր կեանքը,
գողութեան, աւագակութեան, ապօրինութեան,
վաստութեան և անարդար գործերով
պարապացնէ նա այդ կեանքը—մ'չ, ոչ երբէք:
Ամենաբարի Աստուածը անսահման առաքինու-

թեան շունչ է, այն Աստուածը իր աստուածային
պատկերն ու սքանչելի հոգին տուաւ հողից շի-
նած մարդուն. նորան կեանք, հոգի, կամք, զգա-
ցողութիւն, բանականութիւն և մարդկային բո-
լոր այն առաւելութիւնները և խելքը տուաւ,
որ նա այժմ ունի, որպէս զի այդ մարդը ճա-
նաչէ իւր ստեղծողին և փառաւորէ իւր Արարչի
ամենակալ զօրութիւնը, որ նա իւր կեանքով
հետևէ իւր Ստեղծագործողի անսահման բարու-
թեան, առաքինութեան և արդար օրինաց ճա-
նապարհին: Եւ մարդը, որ միայն այդ ընթացքի
և ուղղութեան համար է ստեղծուած, գրանով
պէտք է սքանչացնէ ամենատես Արարչին, որ նա
չէ ներում չարութիւնը, որ նա գարձեալ փար-
ձատրէ իւր երկրպագողին, տալով նրան աշխարհ-
քի մէջ կեանք, և հանդերձեալում յաւիտենական
անմահութիւն, յաւիտենական կեանք և երջան-
կութիւն:

Եւ ահա այդ կեանքի մէջ է գրուած յա-
ւիտենական անմահութիւն և երջանկութիւն ժա-
ռանդելու պայմանը:

Աստուծոյ ցոյց տուած օրինաց ճանապար-
հից գուրս մարդուս համար փրկութիւն և յա-
ւիտենական կեանքի ժառանգութիւն չը կայ:

զաւու և զանցու աշխարհ մասու ունեն Անդ
մեծապահ ով որ ժամանքին չ զաւու գնանք
ողման ով Տնաց պայման իրավելիութեանը ունեն
առաջ և առաջի բանականից ուներու և մեջ,
մասնաւութեանը ունեանից որ առաջաւու ըստի
աշխարհ առաջ առ առ առ առ առ առ առ առ առ

Փ.

ՊԱՐՑԱՀԱՆՍՉՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

«ԱՌԴ հատուցիք ամենեցուն զպար-
սու, որում զիարկ՝ զիարկն, որում
զմասն՝ զմասն, որում զերկիւդ՝ զեր-
կիւդն, որում զպատիւ՝ զպատիւն։ Եւ
մի՛ ումեք պարտապան գտանիցիք,
բայց զմիմեանս սիրելոյ, զի որ սի-
րէ զընկերն, զօրենս կատարէ»։

(Հռովմ. ԺԳ. 7—8)

Ուրեմն հատուցիք պարտիներդ, որին
հարկ՝ հարկ, որին մասն՝ մասն, որին
երկիւդ՝ երկիւդ, որին պատիւ՝ պատիւ
եւ ոչ ոքին էլ պարտական մի՛ մնամ,
բացի միմեանց սիրելուց, որովհետեւ
ոլ որ իւր ընկերին սիրում է, ճան
օրէնքն է կատարում։

Մարդոց կենցազավարութեան վերայ խօ-
սելուց յետոյ, պէտք է ասենք, որ քրիստոնեան,
որովհետեւ հոգեպէս միաւորութիւն ունի Քրիս-
տոսի հետ, այնպէս ինչպէս որ ծառի ճիւղը իր

բնի հետ, ուրեմն այնպէս մաքուր և սուրբ կեանք պէտք է անցկացնէ, որ իր արտաքին կենցաղավարութիւնով ապացուցանէ իր ներքին և հոգեսոր քրիստոնեայ լինելը: Ի միջի այլոց ասուեցաւ, որ ճշմարիտ կենցաղավարութեան հիմքը չափաւորութիւնն է, իսկ անչափ, անհաջու կենցաղավարութիւնը պատճառ է լինում մարդու նիւթական սնանկութեան, հետեւաբար և կործանման: Աւստի քրիստոնեան իր ընտանեաց վերայ հոգ տանելու և ընտանեաց պարտքը կատարելու հետ ունի նաև մի այլ պարտականութիւն գեղի իր շրջանը և իր հասարակութիւնը: Առաքեալը այս խօսքերով բոլոր քրիստոնեաներին յորդորում է, որ իրենց բոլոր պարտքերը վճարեն, այսինքն պարտաճանաչ լինին, բոլորին, որին պարտական էն հարկ տալու, հարկ տան, որին մաքս՝ մաքս, որին երկիւղ՝ երկիւղ, որին պատիւ՝ պատիւ, այնպէս, որ ոչ ոքին պարտապան չը մնան, բացի միմեանց սիրելուց, որովհետեւ ով որ ընկերին սիրում է, նա օրէնքն է կատարում:

Մարդիկ առ հասարակ պարտաճանաչութեան վերայ ոչ թէ միայն հարեւանցի են նայում, այլ մինչեւ անգամ գաղափար էլ չունին, թէ ինչ կը նշանակի պարտաճանաչութիւնը: Պարտաճանաչութիւնը կրօնական հաւատոյ մի մասն է, վասն զի սուրբ գրքից է բղխում և սուրբ Հոգին է խօսել Առաքեալի բերանով. պարտաճանաչութիւնը մարդուն ազնուացնում է, սրբացնում է և

առաքինի ու բարսյական է դարձնում, Քրիստոսի
ճշմարիտ հետեւող և աշակերտ է անում:

Ով որ պարտաճանաչ չէ, չի էլ կարող պար-
տականութիւնը ճշութեամբ կատարել:

Ով որ պարտաճանաչ չէ, նա ոչ մարդ է
ճանաչում, ոչ ազգն է ճանաչում, ոչ հասարա-
կութիւն, ոչ շրջան, ոչ մեծ և ոչ էլ փոքր:

Սորա համար սկսենք մեր բնաբանը արծար-
ծել, թէ ինչ է նշանակում առաքեալի խօսքը՝
«Արդ հատուցեք ամենեցուն զպարտա»:

ա. Ոչ ոքի պարտապան չը լինել. այսինքն՝
որին հարկ տալու ենք տանք. հարկը կայսրին
ենք տալիս. առաքեալը յորդորում է, նաև թա-
գաւորին հնազանդիլ:

բ. Մաքս կալուածատիրական գետնի վե-
րայ բնակուողները պիտի տան, յորդորում է,
որ բէդերին կամ հսղատիրոջը բաժին տան:

գ. Յորդորում է, թէ ովմից պէտք է վա-
խենայ՝ այսինքն ծառաները իրենց տէրերից.
առաքեալի ժամանակ յաւիտենական՝ ծառաներ
կային. Մովսիսական օրէնքի մէջ գրուած է (տես
Ելից ԻԱ.): Այդ ժամանակ և նրանից յետոյ
էլ սարուկներ կային, որոնք պարտաւոր էին վախ
ունենալ իրենց տէրերից. այդ երկիւղն էլ սլար-
տաճանաչութիւն է. ով որ իր տիրոջից չի վա-
խենալ, նա Աստուծոյ երկիւղ էլ չի ունենալ
իր սրտումը, և ով որ Աստուծոյ երկիւղը չունի,
նրանից ամեն տեսակ չարութիւններ սպասելու
է: Ա. Դիրքը մարդկային իմաստութեան սկիզբը

Տիրոջ երկիւղն է ճանաչում և համարում. «Մկիզքն իմաստութեան երկիւղ Տեառն»։ Երկիւղ Աստուածաշտութեան, սրբութեան, պատուոյ, վարուց և բարուց, դործունէութեան, այս ամենն էլ հաւասար մի մասն են կազմում։

Դ. Պատիւ. որին պէտք է պատուել, յորդուրում է պատուել. առհասարակ փոքրերը մեծերին պէտք է պատուեն. առաքեալը մի ուրիշ տեղում առում է, «Մի յանդիմանէք, այլ միսիթարեցէք ծերերին՝ իբրև հայր, երխտասարդներին՝ իբրև եզրայր, պառաւներին՝ իբրև մայր, մանկամարդներին՝ իբրև քոյր ամենայն սրբութեամբ» (տես Ա. Տիմոֆ. Ե. 1—2.)

Այսպէս ուրեմն առաքեալը յորդորում է, թէ հատուցէք հարկ, մաքս, երկիւղ, պատիւն Առաքեալը չէր կարող բալոր կէտերը նշանակել, թէ ումը ի՞նչ պէտք է հատուցանենք. նա ժամանակի պահանջի համար է խօսել. բայց ամեն պարտաճանաչութեան սկզբունքը այս խօսքերի մէջն է բովանդակում թէ՝ «Հատուցէք ամենեւցուն զպարտս և մի ումեք պարտապահ գտանիշ կիր»։

ΦΠ.

ՎԱՅԵԼՈՒԶ ԽՕՍԿՅՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

«Եւ բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք Տեսոն իրեւ աղիւ համեմեալ լիցի, զիտէլ որպէս արժանի լոց ձեզ իւրաքանչիւր ումե՞ք սալ պատասխանի».

(Unq. Φ. 6)

Զեր խօսերը քող ամեն ժամանակ Տիրոջ շնորհելով լցուած լինի իբրեւ աղով համ եմուած, որ զիտենամ թէ ինչպէս պէտք է ամեն մէկին պատասխան տայ:

U. S. GOVERNMENT.

Աշխարհքի վերայ շատ կենդանիներ կան,
որոնք իրանց կազմուածքն ու ձեն ունին. մարդն
էլ ձև ունի. մարդը զանազանութմ է և գերա-
զանց է Աստուծոյ միւս արարածներից իրեն խօ-
սակցութիւնովը կամ լեզուովը. փիլիսոփայու-
թիւնը ուսուցանում է թէ լեզուն տրուած է
մարդուն, որ իւր միտքը արտայայտի. Այսպէս էլ
հաստատում է Ցիսուսը. «Քո խօսքովդ. կար-

դարանաս և քո խօսքովդ կը դատապարտուիս» եւ որովհետեւ մարդը իւր խօսքով թէ արդարանում և թէ դատապարտում է, ուստի և Պօղոս Առաքեալը յորդորում է հաւատացեալներին թէ ձեր խօսքը ոչ թէ դատապարտութեան խօսքեր լինին, այլ Տիրոջ շնորհքով լցուած։

Բ. Շնորհի.

Շնորհքը սուրբ Հոգու պարգևն է. այդ պարգևով և այդ շնորհքովը քրիստոնեան պէտք է լցուած լինի, ինչպէս Ստեփաննոսի համար դրուած է. «Մի Ստեփաննոս անունով մարդ կար, որ շնորհքով լի էր»։ Պօղոս առաքեալը իր թղթերի սկիզբը հաւատացեալներին շնորհք և խաղաղութիւն է ցանկանում։ Իր համար էլ ասում է՝ «Աստուծոյ շնորհքի չափովը, որ ինձ տուած է իմաստուն ճարտարապետի նման, հիմը դրի» (Ա. Կորն. 2. 10)։

Աստուծոյ արքայութեան խօսքերը՝ հաւատոյ, յուսոյ և սիրոյ, բովանդակուում են Ս. Գրքի և Աւետարանի մէջ։ Աստուծոյ Աւետարանի խօսքերը երկնքից են իջած, դրա համար էլ մարդկանց համար դժուար է հասկանալ. հաւատ, յոյս և սէր պիտի ունենայ մարդ, որ կարողանայ հասկանալ, բայց եթէ չունի, եթէ հազարաւոր անդամքարողներ ու խրատներ լսելու լինի, դարձեալ չի կարող հասկանալ։ Բայց Յիսուս Քրիստոս այդ դժուարութիւնը վերացրեց և հեշտացրեց։ Ահա թէ ինչպէս ինչպէս որ Աւետարանը երկնային

լեզու է, նոյնպէս էլ մարդկանց տուաւ մի երկ-
նային իմաստութիւն, որպէս զի կարողանան երկ-
նային—Աւետարանի խօսքերը հասկանալ. և ինչ
է այդ իմաստութիւնը.—Սուրբ Հոգին է և կամ
Սուրբ Հոգու շնորհքը: Յիսուս մի տեղ պարզ
ասում է՝ «Ինչ որ հիմայ ասում եմ, չեք կա-
րող հասկանալ, բայց երբ որ Սուրբ Հոգին կը գայ
ձեզ վերայ՝ այն ժամանակ նա ձեզ կը սվորեց-
նէ» (Յովհ. ԺԶ. 12—13): Եւ յիրաւի Առաքեալ-
ները, դեռ ոչինչ չէին հասկանում և ոչինչ դեռ
չարած, ամենից առաջ վերնատան մէջ նստած,
Փրկչի համբարձումից յետոյ, աղօթում էին և
սպասում էին այն Սուրբ Հոգւոյ շնորհքին, որը
խոստացել էր իրենց Վարդապետը: Նորա ան-
սուտ խօստումը կատարուեցաւ. Սուրբ Հոգին
իջաւ նոցա վերայ վերնատան մէջ, նորա իսկոյն
ստացան նորա շնորհքը և այն շնորհքովը փո-
խուեցին, լցուեցան և սկսեցին խօսել և քարո-
ղել: Ուրեմն աւետարանի խօսքերը հասկանալու
համար պարտաւոր ենք և ամենից առաջ պէտք
է ընդունենք աւետարանի Հոգին, այսինքն Քրիս-
տոսի ուղարկած Սուրբ Հոգին: Պօղոս առաքեալը
մի այլ տեղ ասում է՝ «Ով որ Քրիստոսի Հոգին
չունի նա նրանը չէ, ձեր խօսքերը շնորհքով
լցուած լինին»: Արդեօք, եթէ Սուրբ Հոգու շնորհ-
քը ստացած չլինինք, ինչ կարող ենք խօսել, որ
շնորհքով լինին մեր խօսքերը. չէ որ առաքեալ-
ները ամբողջ երեք տարի ման եկան Յիսուսի
հետ, ամեն ժամանակ լսում էին նորա խօսք»

ըլք և տեսնում՝ էին նորա արած հրաշքները, բայց գարձեալ ոչինչ չէին հասկանում և ոչ մի հրաշք չէին կարողանում դործել, մինչև որ նորա Հոգին չստացան. ուրեմն մենք էլ եթէ Սուրբ Հոգու չնորհքը մեղ վերայ ջնդունենք, հազարաւոր տարիներ էլ որ ասպենք, գարձեալ մեր խօսքերը չնորհքով չեն լինելու։ Պօղոս առաքեալը յորդորում է, որ մեր խօսքերը չնորհքով լցուած լինին, ինչպէս աղով համեմուած։

Գ. Ա. Ա.

Առ հասարակ աղը ամեն կերակուրին համէ է տալիս և համեղացնում է. ինչ տեսակ նիւթից էլ որ կերակուր պատրաստուի, եթէ աղ չը կայ, անհամ, անպիսան բան կը լինի. ուրեմն ձեր խօսքերն, ասում է, այնպէս լինի ինչպէս քաղցրահամ կերակուր։ Յիսուսն էլ ասաց՝ «Դուք երկրի աղն էք»։ Քրիստոնեան եթէ չնորհքով լցուած է, նա ամեն տեղ գտնուած ժամանակ համավցնում է, խօսակցութիւնով էլ, քաղցրութիւնով էլ։ Եկեղեցու ժողովուրդը չնորհքով միմեանցից պէտք է գերազանցեն, «Եղբայրսիրութեան մէջ միմեանցից գերազանցէք» ասում է Պօղոսը։ Եթէ պատահի, որ քաղաքի եկեղեցու քրիստոնեաներից մէկը յանկարծ պատահի որ գիւղը գնայ, այն ժամանակ ամբողջ գիւղի եկեղեցւոյ ժողովուրդը պէտք է հետաքրքրուի։ թէ քաղաքի եկեղեցւոյ ժողովուրդի եղբայրներից մէկը եկեղեցւոյ է, գնանք տեսնենք ինչ բաներ է խօսում, ինչ չնորհքներ,

ինչ խօսքեր ունի, լսենք նրա ասածները։ Այսպիսի հանգամանքների համար Պօղոս առաքեալլ Թեսաղոնիկեցւոց եկեղեցուն դրում է՝ «Եւ դուք նմանեցաք մեզ և Տիրոջ և խօսքն ընդունեցիք շատ նեղութեան մէջ Ա. Հոգւոյ ուրախութիւն նովը, որ դուք օրինակ եղաք այն ամեն հաւատացեալներին, որ Մակեղոնիայի և Աքայեայի մէջն են, պատճառն որ ձեզանից դուրս եկաւ Աստուծոյ խօսքի ձայնը... ամեն տեղ փոռեցաւ ձեր հաւատը...» (Ա. Թեսաղ. Ա. 6, 6, 8)։ Թեսաղոնիկեցւոց հաւատը, խօսքը, շնորհքը տարածուեցաւ ամեն տեղ և օրինակ եղաւ ամենքին։ Այսպէս էլ այժմեան եկեղեցիքը պէտք է լինին, որովհետեւ «Դուք երկրի աղն էք և լոյսն էք» առաց Յիսուս, Եթէ ոչ, աղը որ համ չըտայ, իւր համը կը կորցնի և այնուհետեւ դուրս են ձգում և ոտաց կոխան է լինում, այժմեան եկեղեցիների ժողովուրդները ուղիղ անհամ աղերն են, և այդ անհամութիւնը ապացուցւում է նրանով, որ Ա. Եկեղեցիներից մի ժողովուրդ ուր էլ որ գնայ, ոչ ոք չի հարցնի, ովք ես, ովք չես, որովհետեւ մտածում է, թէ ինչո՞ւ համար հարցնի, ինչ հասկանայ, ինչ տեղեկանայ. Եթէ սխալուի հարցնի էլ թէ պարոն, ովք էք, անհամ պատասխան պէտք է ստանայ՝ թէ ինչ բան ունիս թէ ովք եմ։ Անհամութեան աղ են, որովհետեւ ինչ տեղ էլ որ գտնուում են, մի որ և է շնորհքով խօսքեր չեն դուրս դալիս բերաններից, բացի բամբասանքից և ծաղրածութիւնից։

Այս գլխում բնաբանը բաժանում է երկու մասի, առաջին մասն էր Բանի և Շնորհը, որի վերայ խօսուեցաւ, իսկ երկրորդը՝ որ գիտենաք թէ ինչպէս արժան է ձեզ ամեն մէկին պատասխան տալ։ Այժմ խօսենք այս երկրորդ մասի վերայ։

Դ. Որ գիտենաք թէ ինչպէս արժան է ձեզ ամեն մէկին պատասխան տալ։

Քրիստոնեան Ս. Հոգւոյ շնորհքով կանչուած է եկեղեցու մէջ սուրբ լինելու, ինչպէս Պօղոս առաքեալը ասում է՝ «Ամենեցուն որոց էք ի Հռոմ սիրելեաց Աստուծոյ կոչեցելոց սրբոց»։ «Եւ եղերուք սուրբ, զի ես սուրբ եմ»։

Ուրեմն եթէ քրիստոնեաները, իբրև սուրբ եր են նկատում, խօսքերն էլ պէտք է մաքուր և իրենց սրբութեան արժանի խօսքեր լինին. Եպիսկոպոսը իւր աստիճանին արժանի, քահանան իւր կոչմանը, սարկաւագը իւր կոչմանը, եկեղեցու անդամը իւր անուան արժանի և վայելուշ խօսքերով իրենց գիմացի մարդուն պատասխան պէտք է տան, այնպիսի պատասխան, որ լինի քաղցր և համեղ, ինչպէս կերակուրի աղդրա համար է ասում՝ «Զեր խօսքերը ամեն ժամանակ ինչ տեղ էլ որ լինի, ինչ ժամանակ էլ որ լինի, Տիրով շնորհքով լցուած լինի ինչպէս աղով ... և այլն»։

Նայենք՝ թէ Յիսուսն ինչպէս է պատասխան տալիս մի անդամ Սիրաբար քաղաքի ջրհորի մօտ Սամարացի կնկանը, նրանից ջուր ուղելու ժամանակ ։ Սամարացի կինն ասում է. «Դու, որ Հրէայ


ես, ինչպէս ես ինձանից ջուր ուզում, որովհետեւ
Հրէաները Սամարացւոց հետ չեն խառնւում»:
Յիսուսը պատասխանում է «Թէ որ Դու Աստու-
ծոյ պարգևը գիտենայիր, և թէ ով է քեզանից
ջուր խնդրում, ապա դու նրանից կը խնդրէիր
և նա կենդանի ջուր կը տար քեզ»: Կինն ասում
է «Դու աման չունիս, ինչպէս կարող ես ջուր
քաշել»: Յիսուսը պատասխանում է «Ով որ այդ
ջրից խմի, գարձեալ կը ծարաւի, բայց ով որ այն
ջրիցը խմի, որ ես կը տամ նրան, նա յաւիտեան
չի ծարաւիլ, բայց այն ջուրը, որ ես կը տամ
նրան, յրի աղբիւր կը լինի նրանում, որ յաւի-
տենական կենաց մէջ կը բզիսի»: Զարմանալի
հանդարտութեամբ և վերին աստիճանի իմաս-
տալից բառերով է պատասխան տալիս Յիսուս:
Արդեօք Յիսուս բարկացաւ կնոջ վերայ, որ
ջուր չը տուեց. — ոչ, ապա եթէ մեզանից մէ-
կը լինէր, ով գիտէ ինչ կը պատահէր, ով գիտէ
բանը կռուի կը հանէր. բայց Յիսուս մի ան-
պիտան կնոջ հետ, որը հինգ մարդ էր փո-
խել, վերին աստիճանի քաղաքավարութեամբ է
խօսում. ինչո՞ւ. որովհետեւ Յիսուս իրեն ար-
ժանի խօսքերով էր պատասխանում և նոյնպէս
էլ վայելում էր: Մի տեղ էլ Յիսուս քահանա-
յալեատին պատասխանում է. «Ինձնից ինչո՞ւ ես
հարցնում, հարցրու նրանցից, որոնք ինձանից
լսել ու տեսել են»: Մի այլ տեղ իրեն աստակող
զինուորին պատասխանում է զարմանալի հան-
դարտութեամբ՝ «Եթէ չար բան խօսեցի, վկայէ

այն շարի համար, բայց եթէ բարի, ինչու եռ
ապտակում ինձ» (Ցով. ԺԵ. 23): Յիսուս այս
տեղ գարձեալ հանդարտութեամբ պատասխա-
նում և խրատում է նրան, մինչև անգամ զգաս-
տացնում է և ուղղում իրեն հարկանողին: Յի-
սուսին շատ բաներ էին ասում «Դե կայ քեզա-
նում ... Բէեղզեբուզով է հանում դա գեերին»
և այլն և այլն. բայց նա միշտ հանդարտութեամբ
էր պատասխանում, որովհետեւ ոչ մի խօսք այն-
քան զօրաւոր ներգործութիւն չի ունենալ, որ-
քան քաղցրութեամբ և հանդարտութեամբ ար-
տասանած ժամանակ:

Այսպէս էլ մենք, ինչպէս որ բնաբանն ա-
սում է՝ «Զեր խօսքերը թնդ ամեն ժամանակ
Տիրոջ չնորհքով լցուած լինին, իբրև աղով համեռ
մուած, որ գիտենաք, թէ ինչպէս արժանի է
ձեզ՝ ամեն մէկին պատասխան տալ» պէտք է
մեր կոչմանը արժանի և վայելուչ խօսքերով վե-
րաբերուենք դէպի ընկերը, սիրելին և միայն-
գամայն հարկանողն ու թշնամին:

Ամեն մէկին, ումն էլ որ լինի, չը պէտք է
ասել, որ գիմացինը աղքատ է, կամ յիմար է,
կամ օտար է, տկար է, մերկ է, հարուստ է,
իշխան է, կամ այս և այն է. ոչ. ամեն մէկին
ամեն տեղ և ամեն ժամանակ մեր կոչման ար-
ժանավայել պատասխան պէտք է տանք, որով-
հետեւ մենք մեր խօսքերով մեր ներքինն ենք
արտայայտում, մեր անվայել, անպիտան, յիմար,
հայհոյանքներով լցուած խօսքերով ցոյց ենք

տալիս, որ մեր ներսը լվքն է անվայել, անպիս
տան և յիմար բաներով. Հայհոյանկներով ցոյց
ենք տալիս, որ մեր ներսումը գիզուած են հայ-
հոյանկները. և այսպիսի անպիտանութիւնները,
որ գուրս է գալիս քրիստոնէի բերանից, ցոյց
է տալիս, որ նա անունով միայն քրիստոնեայ է,
այլ սիրաը ապականուած է, գեշութիւններով լվքն
է. աւաղելի է այսպիսի քրիստոնեան, որովհետեւ
նա խւր խօսքերով պէտք է արդարանայ և խւր
խօսքերով պիտի գատապարտուի. չէ՞ որ հայհոյ-
անկներ և անվայել խօսքերը գատապարտում
են: Դորա համար է, որ առաքեալը յորդորում
է ասելով. «Ձեր խօսքերը թող ամեն ժամանակ
Տիրով շնորհքով լցուած լինին, և իբրև աղով հա-
մեմուած»:



ՓԲ

ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

«Ամենայն՝ որ բարկանայ եղօր
իւրում սարապարտոց, պարտաւոր լիցի
դատաստանի».

(Մատք. Ե. 22).

Ամեն մարդ՝ որ զուր Տեղը բար-
կանայ իւր եղօր վերայ, պարտական
կը լինի դատաստանին:

Առ հասարակ, եթէ մարդու մարմնի վերայ
մի վնասակար վերք է լինում, նա աշխարհքում
էլ ոչ մի բանի վերայ չի մտածում, եթէ ոչ իւր
մարմնի վերքի առողջանալու մասին. նրա հա-
մար ուտելը, խմելը, հագնելը, աշխարհքը և ոչ էլ
աշխարհքի դեղեցկութիւնը չեն հետաքրքրում,
բայց միայն իր առողջութիւնը:

Այսպէս էլ բամբասանքը, բարկութիւնը, նա-
խանձը, ստախօսութիւնը, չարախօսութիւնը մէկ
մէկ վնասակար և անբուժելի վերքեր են մեր
հոգուն, որ բնակուած են մեր սրտերում. Ի՞նչ-

պէս որ մարմնոյ վնասակար վէրքը, եթէ չը բժշկուի, պիտի մարմինն սպանէ, այնպէս էլ եթէ սրտերի այս հոգեսոր վէրքերը չը բժշկուեն, մեր հոգին կը սպանեն։

Յիսուս աշխարհքի վերայ եղած ժամանակ՝ առաջ հոգու վէրքերն էր բժշկում և ապա մարմի վերքերը, ինչպէս անդամալոյծին՝ առաջ հոգւոյ վէրքերը բժշկեց ասելով՝ «Թողեալ լիցին քեզ մեղք քո»։ Եւ բաւական խօսակցութիւնից յետոյ առաց՝ «Վեր կաց, գնա»։ Այսպէս էր իր մօտ եկող բոլոր հիւանդների նկատմամբ, առաջ նոցա սրտերն էր բժշկում, հաւատքն էր կենդանացնում. իսկ հաւատ կենդանացնելուց յետոյ, ասում էր՝ «Քո հաւատքի պէս լինի քեզ» կամ «Քո հաւատքովը ապրես»։ Յետոյ ասում էր. «Մի վախենաք նրանցից, որոնք միայն ձեր մարմինը կարող են սպանել, այլ վախեցէք աւելի նրանից, որ կարող է մարմինն էլ հոգւոյ հետ գեհենի մէջ ձգել»։ Ուրեմն որքան որ վախենում ենք այն վէրքերից, որոնք մեր մարմինն են սպանում, աւելի ևս պիտի վախենանք այն վէրքերից, որոնք հոգին էլ մարմնոյ հետ կարող են սպանել։

Բարկութիւնը մի հոգեսոր վէրք է, որ կարող է մեր հոգին սպանել. Ղամէքը երբ որ կայէնին սպանեց անդիտութեամբ, եկաւ և իր կանանցը ասաց. «Ով Ղամէքի կանայք, ականջ դրէք իմ խօսքիս. մի մարդ սպանեցի ինձ վէրք եղաւ և մի երիտասարդ՝ ինձ հարուած եղաւ. եթէ կայէնից եօթն անդամ վրէժ պիտի առնուի, Ղա-

մէքից եօթանասուն եօթը անդամ»:

Բարկութեան յանցանքը աւետարանի մէջ հաւասար է սպանութեան յանցանքին, ինչպէս ասում է՝ «Ասեցէք, որ ասուեցաւ առաջուց՝ թէ մի սպանիր, ով որ սպանութիւն անէ պարտաւոր կը լինի դատաստանի, բայց ես ասում եմ ձեզ, ով որ ի գուր տեղը բարկանայ իր եղբօր վերայ՝ դատաստանին սպարտաւոր կը լինի»:

Դամէքը կայէնին սպանել էր, վէքըն ու հարուածը իրենն էր համարում, ոչ թէ մարմնին՝ այլ իր հոգուն, ասելով. «Մի մարդ սպանեցի, ինձ վէրը ու հարուած եղաւ, ինձանից եօթանասուն եօթն անդամ վրէժ պիտի առնուի»:

Դամէքից պահանջող չը կար, աշխարհի մեծն էլ, դատաւորն էլ, տէրն էլ ինքն էր, բայց նա զգաց, որ ինքը մի մեծ մեղք դործեց և իր կանանցը խոստովանեց իր դործած այդ յանցանքը:

«Որ բարկանայ եղբօր իւրում, պարտաւոր լիցի դատաստանին»: Բարկութիւնը մի անզուսպ կիրք է, որ մարդուն մարդկութեան սահմանից, այսինքն մարդկութեան շարքից հանում դադանային սահմանի մէջ է դնում, որովհետեւ բարկացած մարդը ոչ իր արժէքն է ճանաչում, ոչ էլ ուրիշի արժանապատութիւնը, ոչ մեծը և ոչ փոքրը, ոչ ծերի պատկառելի հասակն է ճանաչում և ոչ էլ երիտասարդի գեղեցիկ կեանքը գնահատում, ոչ արդարը, ոչ մեղաւորը, ոչ ազգականը և ոչ էլ եղբայրը հարցնում: Բարկու-

թեան սահմանը կամ չափը, ասում են, կարելի է չափել այնպէս, ինչպէս մի անկառավար կառքի, անդեկավար նաև, կամ փոթորկի ու հեղեղի։

Բարկութեան անզուսպ կրքի աղդեցութեան տակ մարդը կորցնելով իւր զգացողութիւնը, կարող է կատարել ամեն ոճիր, յանցանք, մեղք ու բարբարոսութիւն։ Բարկութիւնը մարդոյ մէջ կարող է ոչչացնել ամեն մի բարի և ազնիւ զգացմունք, ընդ նմին և աւետարանի սէրն ու միութիւնը, և ահա նա գառնալով մի անզգայ գագան, իր շուրջը բացի մեղք և յանցանք, վասս ու վիրաւորանք տարածելուց, այլ ևս ոչ մի բանի վերայ չի մոտածում։

Բարկութիւնը կարող է որդին հօրից բաժանել, հայրը որդուց, եղբայրը եղբօրից և ոչ թէ կարող է քանդել միմիայն սիրոյ միութիւնը, այլ և իւր հետ բերում է կրիւ, հայհոյանք, վիրաւորանք, բաժանմունք, աւերմունք, սպանութիւն և այն։ Պատմական օրինակ է Կայէնը, որ բարկութեան անզուսպ կրքի տակ սպանեց իւր եղբայր Աբէլին։

Բայց ներկայումն, այս գարում, վիրաւորական խօսքը աւելի ծանր է համարւում քան թէ սպանութիւնը։ Նախաջրհեղեղեան դարն անցաւ, այժմ մարդիկ քաղաքակիրթ, ազնուամիտ և ազնուաբարոյ են։ Որքան գեղեցիկ խօսքը հասկացող մարդու սրտին ուրախութիւն և հոգւոյ զուարճութիւն է բերում, այնքան էլ վատ ու ծանր խօսքը անպատճութիւն, դառնութիւն ու

վիրաւորանք է պատճառում։

Յակոբոս ասում է. «Եղիցի ամենայն մարդ արագ առ ի լսել, ծանր ի խօսիլ, և ծանր ի բարկանալ»։ Ծանր լինինք բարկանալու համար. մարդու բարկութիւնը շատ շուտ է գրգռւում. որքան մարդու միտքն արագ է շրջելու շատ հեռաւոր վայրեր, այնքան էլ արագ է, ինչպէս փայլակ, բարկանալու համար։

Թէև դժուար է չբարկանալը, բայց «Բարկանայք և մի մեղանչեք» ասում է աստուածահայր Դաւիթը։

Սոկրատը ծառայի վերայ բարկացած ժամանակ ասում է՝ «Եթէ բարկացած չլինէի, քեզ պիտի թակէի»։

Իդուր բարկութիւնը հոգուն վիրաւորում է, և վիրաւորելուց յետոյ ըստ Յիսուսի՝ դատաստանի առաջ պարտական է անսում. «Ամենայն մարդ, որ բարկանայ եղօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի»։ Ուրեմն աշխատենք ամեննեին չը բարկանալ և չը վիրաւորել, և եթէ բարկանալու էլ լինինք՝ չը մեղանչենք։

«Ամեն դառնութիւն և բարկութիւն, և սրտմտութիւն և աղաղակ և հայհոյանք թող վեր առնուի ձեղանից ամեն չարութիւնների հետ» (Եփես, Դ. 31)։

Բարկութիւնը գրգռւում է արտաքին ազդեցութիւններից, այն է, որոնք կամենում են շօշափել մեր պատիւը կամ վնասել մեր անձին-

և մեր կարողութեանը»:

Մենք շատ անդամ բարկանում ենք աւելի պատույ և վնասի քան թէ մեր անձի դէմ»:

Պատույ դէմ եղած անպատութիւնները պէտք է տանենք Քրիստոսի սիրոյ համար, ինչպէս ինքը մեր սիրոյ համար հայհոյանքներ, չարչարանքներ և անպատութիւններ առ ոչինչ համարեց»:

Նիւթական կարողութեան դէմ եղած վնասների համար նոյնպէս ներողամիտ պէտք է լինք Քրիստոսի սիրոյ համար, ինչպէս վայելուչ է Քրիստոսի աշակերտին՝ թէ «Ճէր, ահա մենք ամեն ինչ թողինք և եկանք Քո ետևից» և ինչպէս մեր հոգիների ուսուցիչը ասում է. «Եթէ ձեր հայրը, մայրը, եղբայրը, քոյրը, կինը, ադարակը չը թողնէք և իմ ետևից չը գաք, ինձ արժանի չէք»։ Եւ ինչպէս որ երիտասարդին էլ ասաց՝ «Գնա, ունեցածդ ծախիր, տնւր աղքատներին և եկ իմ ետևից»։

Քրիստոսի աշակերտին կարող է պատահել, որ իր բոլոր ունեցածը կամ ինքնակամ թողնէ, կամ կարող է մի որ և է փորձանք իւր ձեռքից իր ունեցածը լսել, այն է՝ կամ թշնամու ձեռք կով կամ հրդէհի և կամ հեղեղի միջոցաւ։ Եւ նրանց կը պատահին այս նիւթական վնասները, որոնք դէպի Քրիստոս աւելի սէր ունին, քան թէ դէպի աշխարհի կարողութիւնները, որպէս զի աշխարհից միանդամայն յօյսը կտրելով, կապուեն աւելի ամուր կերպով երկնքի հետ։ Ինչպէս Յովն էր».

Անձի դէմ եղած վեասներից էլ չը պէտք է
վախենանք, ինչպէս Քրիստոս ինքն էլ չը վա-
խեցաւ, ոչ թէ միայն չը վախեցաւ, այլ և ընդ-
հանուրի օդակին իր անձը կամովին զոհեց, ինչ-
պէս որ ասում է՝ «Մի վախենաք նրանցից,
որոնք միայն ձեր մարմինն են սպանում»:

Վերջապէս Քրիստոս մեր յոյսը մեծացրել
է, ինքը մեր յոյսն է. եթէ պատուից էլ, նիւ-
թական կարողութիւնից էլ, անձից էլ զրկուենք,
աւելի պատույ, փառաց պսակների, երկնային և
մայուն ստացուածքների և յաւիտենական կեան-
քի պիտի արժանանանք:

առաջին ամ յա պեսոք բանակ ամ կը
ուշացնամի և սպիտակաբան ով ուժինալունայ
և պար) ամուս և սպիտակաբան ամուսնական այսոք

ԺԳ

ՀԵԶՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ

«Երանի հեզոց, զի նորա ժառան-
գիսցեն զերկիր»:
(Մատթ. 6. 5).

Երանի հեզերին, որովհետեւ նրանի
կը ժառանգեն երկիրը:

Հեզութիւն կը նշանակի քաղցրութիւն, ազ-
նուութիւն և խոնարհութիւն. ուրեմն պէտք է
լինել խօսքի մէջ քաղցր, վարմունքի մէջ ազնիւ-
և հաւատոյ մէջ խոնարհ։ Յիսուսն ասում է. «Ե-
րանի այն մարդուն, որի խօսքերը միշտ քաղցր
են բղխում և վարմունքը, վարք ու բարքը աղնիւ-
է, և հաւատոյ մէջ խոնարհ»։

Հեզութիւնը աստուածային հոգւոյ պատուց-
ներից մինն է. Պօղոսն ասում է՝ «Բայց հոգւոյ
պատուցն է սէր, ուրախութիւն, խաղաղութիւն,
քաղցրութիւն, հեզութիւն ...» (Թաղ. 6. 22—23)։

Իսկ բարկութիւն, նախանձ, բամբասանք,
գինովութիւն մարմնոյ գործքեր են. «Եւ յայտ-

Նի են մարմնոյ գործք, որ են, չնութիւն,
պոռնկութիւն, կռապաշտութիւն, թշնամութիւն,
կռիւ, նախանձ, բարկութիւն և այլն» (Թաղ. Ե.
18—21):

Հեղութիւնը առաքինութիւն է, իսկ բամբա-
սանքը և բարկութիւնը՝ մահացու մեղք: Առա-
քինութիւն գործողները պէտք է պատկներ ստա-
նան, իսկ մահացու մեղք գործողները պիտի
մեռնեն նաև երկրորդ մահով: «Ով որ յաղթէ,
ամեն ինչ կը ժառանդէ, և ես կլինիմ նորան
Աստուած: Իսկ վախկոտների, անհաւատների,
պիղծերի, մարդասպանների, պոռնիկների, կա-
խարդների, կռապաշտների և ամեն ստախօսների
բաժինը այն կը լինի, որ կրակով և ծծումբով է
վառուած: Այս է երկրորդ մահը» (Յայտ. ԽԱ. 8):

Որովհետեւ առաջի գլխում խօսեցինք բամ-
բասանքի և բարկութեան մասին և ցոյց տուինք,
որ նոքա աշխարհային հոգւոյ պատկերներ և
պտուղներն են և նրանց վերջը կորուստ է,
որովհետեւ բամբասանքով մարդիկ ուրիշներին են
վնասում, իսկ բարկութիւնով իրենց, ուրեմն
բամբասանքի—դառն խօսքերի գէմ պիտի գոր-
ծածուի քաղցրութիւն, իսկ բարկութեան գէմ՝
աղնւութիւն և խոնարհութիւն: Այս գլխումն էլ
կը խօսենք և ցոյց կը տանք, որ երկնային Հռ-
գւոյ պտուղներ բերողների վերջը երկնային ան-
վախճան թագաւորութիւնն է:

Ա. «Երանի նեզոց» այսինքն երանի նրանց,
որոնք քաղցր են իրենց խօսքերի մէջ:

Այժմ աեսնենք՝ թէ ինչու համար պէտք է
քաղցր լինինք։

Որովհետև մարդիկ թէեւ, իբրև առանձին
առանձին անհատներ, ունին և իրենց առանձին
համոզմունքներն ու գաղափարները, բայց կեան-
քի մէջ ապրելու համար իրարից մեծ կախումն
ունին։ Աշխարհքի վերայ ոչ մի մարդ, լինի նա
ազքատ, հարուստ, տգետ թէ զարգացած, եր-
բէք չի կարող մի կողմը քաշուել ընտանիքից,
ընկերութիւնից կամ մարդկութիւնից և հեռու
կամ բոլորովին անկախ ապրել։

Ամենից առաջ մտնենք ընտանիքի մէջ, որ
ընկերութեան ու բոլոր համայնքի նախադուռն է։
Կը տեսնենք, որ երեխան երբ ծնւում է,
ծնողներից կախումն ունի. նա իր ծնողների
թեերի վերայ պէտք է ապրի, մինչև որ ինքնա-
ճանաչութեան համնի։

Այսպէս էլ ծնողները, երբ որ ծերանում են,
զառամութեան մէջ են ընկնում, երբ որ մտա-
ծելուց, աշխատելուց և գործելուց գալարում
են, մանաւանդ երբ որ անշարժ ընկած են, ման-
դալ ու շարժուել չեն կարողանում, այն ժամա-
նակ ծնողներն են երեխայ գառնում իրենց զա-
ւակների առաջ. այդ ժամանակ փոխադարձաբար
ծնողները իրենց զաւակներից կախումն ունին։
Ինչպէս երեխաները իրենց ծնողների գթու-
թեանն ու կարեկցութեանն էին կարօտում, նոյն-
պէս ծնողները իրենց զաւակների կարեկցու-
թեանն ու օգնութեանն են կարօտում. ինչպէս

զաւակները ցանկանում ու սիրում էին իրենց ծնողների բազուկների վերայ առլրել, այժմ էլ նոյնպէս ծնողներն են փափագում զաւակների բազուկներին, որ իրենց դրկեն, վերցնեն, տեղը դնեն, տեղը փոխեն, կերակրուեն և ներս ու դուրս անեն:

Աշխարհքի վերայ այսպէս ամեն ինչ փոխ է. եթէ տուել ենք, կառնենք. եթէ քաղցր ենք եղել դէպի մեր զաւակները, նոյն քաղցրութիւնն էլ կը վայելենք նրանցից. եթէ դառն ենք եղել դէպի մեր զաւակները, նոյն դառնութիւնն էլ կը ճաշակենք նրանցից. «Ինչ որ մարդս կը ցանէ, նոյնը կը հնձէ» ասում է Պօղոսը:

Ինչպէս Խսահակը ասում էր Եսաւին. «Որդի, գնա գաշտը, որս արա, միս բեր, ինձ համար կերակրուր պատրաստիր, ուտեմ և քեզ օրհնեմ»: Խսահակը այս խօսքերը ասաց այն ժամանակ, երբ ծերացել էր, ուժից ընկել, աչքերը չեին տեսնում և կարօտում էր որդւոյ բերած կերակուրին:

Ուրեմն մեր որդւոյ սրտերումը քաղցրութեան շտեմարաններ շինենք, քաղցրութիւն ամբարենք նոցա մէջ, որպէս զի մեր ծերութեան ժամանակ, երբ անոյժ և կարօտ կը լինինք, կարողանանք այդ մեղրից էլ անոյշ քաղցրութիւնը ճաշակել ու վայելել:

Միայն ուտելլը չէ, այլ մեր ոսկորներն էլ հողին յանձնուելու ժամանակ, դարձեալ քաղցր որդւոյ ձեռքերին ենք կարօտ:

Ինչպէս Յակոբ նահապեալ Յովսէփին էր ասում: «Սիրելի որդի, աղաջում եմ քեզ, ինձ մարդասիրութիւն ցոյց տուր, որ երբ ես մեռնեմ, ինձ այս եգիպտացիների մէջ չը թաղես, այլ ինձ տանես իմ հայրերիս մօտ Աբրահամի և Խաչակի մօտ թաղես»: Յովսէփը խոստացաւ կատարել, և կատարեց: Յակոբը վստահ էր Յովսէփի վերայ, որովհետեւ եթէ Սուրբ Գրքի մէջ այս կտորը կարդանկը, կիմանանկը թէ Յակոբը Յովսէփին ինչպէս էր սիրում, ինչպիսի ծաղկեայ շուրեր էր հագցնում; որքան արտմեց և արտասուր թափեց նրան կորցնելու համար, ինչպէս ուրախացաւ երբ իմացաւ, որ Յովսէփը կենդանի է և մեծ փառքի մէջ է գտնեւում: Եթէ այսպիսի որդի չունենար, Յակոբի ցանկութիւնը ցանկութիւն կը մնար և ոչ ոք նրա այդ ցանկութիւնը չէր կատարիլ, Եգիպտասից Քանանացւոց երկիրը չէր բերի նորա մարմինը և իւր հայրենի գերեզմանում չէր թաղիլ:

Ուրեմն վստահութիւն պիտի ունենանկ մեր որդւոց վերայ: Ճշմարիտ է թէև օտարի կամ քրիստոնեայ եղբօր ձեռքովն էլ կարող ենկ մեր ցանկացած տեղումը թագուել—գերեզման մըտնել բայց քաղցր ու սիրելի որդւոց ձեռքով գերեզման իջնելը ապրելուց լաւ է: Սորա համար է ասում Փրկիչը. «Երանի հեղոց . . .», երանի նրանց, որոնք քաղցր են գեղի իրանց որդիքը . . .

Քաղցրութիւն բացի լնտանիքի մէջ ունենալուց, հարկաւոր է և գուրսը ունենալ:

Որովհետեւ ընտանիքից դուրս միմեանցից կաշումն ունին մարդիկ, և միմեանցով են ապրում՝ աղքատը հարուստով, հարուստը՝ աղքատով, այսինքն աղքատը օգտառում է հարուստից նորա հարբատութիւնով, հարուստը օգտառում է աղքատից նորա աղքատութիւնով, իմաստունը տգետի տգիտութիւնից է օգտառում, իսկ տգետը իմաստունի իմաստութիւնից, վաճառականը՝ ապրանք առնոցից, իսկ ապրանք առնողը՝ վաճառողից։ Գործարանատէրը կախումն ունի գործաւորներից և գործաւորները՝ գործարանատէրերից։ ուսուցիչը՝ ուսանողից, ուսանողը՝ ուսուցչից, քահանան՝ ժողովուրդից, ժողովուրդը՝ քահանայից։ Թագաւորը՝ իւր հպատակներից, հպատակները՝ թագաւորից։ ահա այսպէս, թագաւորից սկսած մինչեւ վերջին աղքատը, մարդիկ միմեանցով են ապրում։ ուրեմն քաղցր լինել աւելի նպատակայարմար է քան թէ դառը։ Առածն ասում է. «շողովորթդառը եօթը մօր կաթն է կերեր»։ «Իրարու հետքաղցր եղեք, գթած, միմեանց չնորհ արեք, ինչպէս Աստուած Քրիստոսով մեզ չնորհք արեց» (Եփես. Դ. 32)։

Բ. Ազնուութիւն. թէ ինչու համար պէտք է աղնիւ լինել։

Մարդկանցից շատերը ոչ թէ միայն անուշադիր են դէպի ազնուութիւնը, այլ դաղափար էլ չունին ազնուութեան վերայ։

Բոլոր արարածները, մարդուց սկսած մինչեւ

անասունները, կեանկի մէջ շատ բաներով նման
են միմեանց, օրինակ՝ ուտել, խմել, քնել, ղգալ,
աշխատել, հանդստանալ, կռուել, վախենալ,
թագչել և այլն, այս բոլորը նկատւում են թէ
մարդու թէ անասունների և թռչունների մէջ։

Բայց մարդը այս բոլոր արարածներից գերազանցում է երկու բանով՝ բանականութեամբ
և հոգւոյ անմահութեամբ. բանական նշանակում
է՝ խօսող, մտածող, դատող, չափող, կշռող, որոշող
և այլն։

Բայց այս ամենը ոչ թէ պէտք է ի չարն
գործ գնենք, այլ ի բարին, ըստ որում եթէ ի չարն
ենք գործ գնում, այն է բամբասելու, բարկա-
նալու, հայհոյելու, չարախօսելու, ուրիշներին
դատելու կամ վլասնելու, այն ժամանակ ոչնչով
չենք զանազանութիւ գիշատող գաղաններից և ան-
բան անասուններից—Ընդ հակառակ մենք շատ
նմանութիւն կունենանք չար գաղանների, ան-
բան անասունների և գիշատող թռչունների,
որովհետեւ նորա միմեանց խածնում են, պատա-
ռում են և վեսասում են մանաւանդ այն ժամա-
նակ, երբ իրանցից թոյլերին են ճանկում։

Մեր բանականութիւնը պէտք է գործ գնենք
ազնւութեամբ, այս ինքն մեր խօսուածքը, վար-
մունքը, բարք ու վարքը, նստել, վերկենալ, առ-
ուտառւրը, գործունէութիւնը, ընկերութիւնը, հա-
ւատարմութիւնը և այլ այսպիսի բաները բոլորը
պէտք է ազնւութեամբ կատարուեն, ըստ որում
ազնիւ լինելը պարտականութիւնների կատարե-

լու մէջն է։ Օրինակ, եթէ մեզանից մէկը ուսուցիչ է՝ ազնւութեամբ պիտի կատարէ իւր պաշտօնը, հոգաբարձու է՝ ազնիւ պէտք է լինի իւր աղգային հաշխների մէջ, երեցփոխ է՝ ազնիւ պէտք է լինի եկեղեցւոյ կողեկների հետ, հարուստ է, իշխան է, քաղաքադլուխ է, քահանայ է, գատաւոր է՝ ազնիւ պէտք է լինի գէպի այն հօտը, որ իրեն է յանձնուած և պէտք է կառավարէ առանց երեսպաշտութեան, առանց ակնկալութեան և առանց խարեցայութեան։

Շատ անգամ երբ մարդիկ իրար խօսք են տալիս, ասում են՝ «ազնիւ խօսք եմ տալիս» կամ երբ ուզում են, որ հաւատացնեն, ասում են՝ «ազնիւ խօսք եմ տսում», ուրեմն նոքա երդւում են իրենց ազնւութեան վերայ, և երբ որ երդւում են, շատ պէտք է զգոյշ մնան, որ իրենց խօսքերը ազնւութեամբ կատարեն. այսօր մէկին խօսք ենք տալիս, պարաւոր ենք կատարել, որ պէս զի մեր խոսանումը լինի ազնիւ և քաղցր, իսկ եթէ չը կատարենք այն ժամանակ խոստումներս կը լինի անազնիւ և դառն։ Բայց ամենկը իս յայտնի է, որ քաղցրութիւնը ախորժելի է, իսկ դառնութիւնը զղուելի։ Թէ մեծ և թէ փոքր դորձերի մէջ պէտք է ազնւութիւն դործ դնենք, որպէս զի արժանանանք այն աստուածային ձայնին, որ ասելու է՝ «Ազնիւ և հաւատարիմ ծառայ, որովհետեւ փոքր բանին հաւատարիմ և ազնիւ եղար, մեծ բաների վերայ կը կանգնեմ քեզ։

Դ. Խոնարհութիւն հաւատոյ մէջ. Քրիստոս
նէտկան հաւատոյ հիմքը խոնարհութիւնն է. որ-
քան էլ հաւատոյ մեծամեծ բարոյական շինու-
թիւններ ունենանք, եթէ դորանց հիմքը խոնար-
հութեան վերայ չէ, փարիսեցու շինութեան պէս
պէտք է քանդուին, ինչպէս որ ասում էր. «Ես
ուրիշների նման յափշտակող անիրաւ չեմ; շա-
բաթը երկու անգամ ծու եմ պահում և ունե-
ցածներս էլ տասանորդ եմ տալիս . . .» Բայց
ընդունելի չեղաւ, վասն զի շէնքի հիմքը հպար-
տութեան վերայ էր դրուած։ Բայց մաքսաւորը
այնպէս էր ազօմում, որ նորա շինութեան հիմք
ըլ խոնարհութեան վերայ էր դրուած և նրա
համար էլ արդարացաւ։ Յիսուս ասում է. «Ով
որ իւր անձը բարձրացնէ, կը խոնարհուի, ով որ
իւր անձը խոնարհեցնէ, կը բարձրանայ»։ Յիսու-
սը ինքը խոնարհութեան օրինակն է մեզ համար,
Նա իւր խոնարհութեամբ աստուածութիւնից
մարդ դարձաւ, մարդոց հետ ապրեցաւ, Նա խո-
նարհութեամբ դառնութեան բաժակը ընդունեց
Հօր կամքը կատարելով, խոնարհութեամբ դա-
տաւորների առաջ ապտակուեց և ծեծուեց, խաչը
ուսին առաւ և Գողգոթայ բարձրացաւ, խաչուեց
ու թաղուեց և ապա իբրև Աստուած յարու-
թիւն առաւ ու երկինք բարձրացաւ։ Ահա այս-
պէս էլ նրան հաւատացողը, նրան աշակեր-
տողը պէտք է խոնարհ լինի սրտով և բարձր
լինի դորձերով։ Առածն ասում է. «Եկալ հասկը
գլուխը քաշ կը պահի»։ Որքան որ սուրբ լինինք,

որքան որ մարդարէութիւն ունենանք, որքան
հաւատ, յոյս և սէր ունենանք, դարձեալ այս
ամենի հետ պէտք է մեզ խոնարհութիւն ունե-
նալ. «Ես որտեղ պէտք է հանգիստ առնեմ, եթէ
ոչ հեղերի և խոնարհների մէջ. Տէրը ամբարտա-
ւաններին հակառակ է կանգնած, հեղերին շնորհը
է տալիս»:

Խոնարհութիւնը նման է ագամանդի, որ
պահուած է երկրի ծոցում—մութ և խոնաւ
տեղում, ոչ ոք գիտէ և ոչ ել նորա արժեքն
է յայտնի, բայց երբ այդ մութը տեղից լոյս
աշխարհը է գուրս գալիս, ամենափայլուն զարդն
է գառնում թագաւորների մատների, ճակառ-
ների և թագերի վերայ։ Այսպէս ել երբ որ խո-
նարհութեան, առաքինութեան հօդիները յարու-
թիւն կ'առնեն, այն ժամանակ աղամանդներից
ել աւելի արեգակնանման պիտի փայլեն. «Յայն-
ժամ արդարքն ծագեսցեն իրեւ զարեգակն ար-
քայութեան երկնից, որ ունիցի ականջս լսելոյ-
լուիցէ»։ Ուրեմն լսելու ականջս ունենանք և լսենք։

ՃՐ

ԱՐՏԻ ԱՐՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ.

«Երանի այնոցիկ, որք սուրբ էն
արտիմ, զի նորա զԱստուած տեսցեն»:

«Երանի նրանց, որոնի սուրբ էն
արտիմ, որովհետև նրանի Աստուած
կը տեսնեն»:

Ծխուս Քրիստոս երանութիւն է տալիս
այն մարդկանց, որոնց սրտերը մաքուր են, սուրբ
են և ասում է՝ որ նրանք պէտք է Աստուած
տեսնեն»:

Մարդոց սկիզբն էլ, վերջն էլ Աստուած է.
«Ես եմ առաջինն ու վերջինը, ես եմ սկիզբն ու
կատարածը»:

Այս սկիզբն ու կատարածը մարդոց համար
է առևում, որովհետև Աստուած ոչ սկիզբն ունի
և ոչ վերջ՝ Սուրբ գիրքը առաջին դլխով ցոյց է
տալիս մարդոց սկիզբը, և վերջին դլխով՝ մարդ
ոց վերջը. առաջին դլուխն ասում է՝ Աստուած
ստեղծեց երկինքն ու երկիրը, մարդն ու բոլոր

արարածները. Խոկ վերջին գլուխը պատմում է նոր երկնքի և նոր երկրի մասին և մարդոց նոր կեանքի մասին

Այդ երկու գլուխը պատմում է, թէ մարդիկ ստեղծուել են Աստուածանից, պիտի ապրին Աստուծով, պիտի ննջեն Աստուծով, յարութիւն պիտի տռնեն Աստուծով և յաւիտենական կեանք պիտի ունենան Աստուծով:

Բայց Յիսուս երանութիւն է տալիս միայն սուրբ սիրտ ունեցողներին, որովհետեւ բոլոր մարդոց վախճանը, բոլոր մարդոց վերջը մի տեսակ չէ, ոմանց վախճանը ի կենաց ի կեանս է, և ոմանց վախճանը ի մահուանէ ի մահ։ Մահից գէպի մահ փոխուղղները Աստուծոյ երեսը պիտի չ տեսնեն. Փրկիչը յայտնապէս ասում է՝ թէ նեղ է դուռը և անձուկ է ճանապարհը, որ տանում է գէպի կեանք. լայն է դուռը և ընդարձակ է ճանապարհը, որ տանում է գէպի կորուստ և շատերն են, որ կորսուեան ճանապարհով են գնում։ Փրկիչը դարձեալ ասում է. «Ճատերն այն օրը ինձ պիտի ասեն, «Տէր, Տէր, չ՞ որ Քո անունով մարդարէացանք, չ՞ որ Քո անունով դեեր հանեցինք և շատ հրաշքներ ու զօրութիւններ արինք»։ Բայց այն ժամանակ նորանց յայտնապէս պիտի ասէ. «Ես ամենեին ձեզ չեմ ճանաչում»։ Որովհետեւ շատերն են կանչուած, բայց քչերն են ընտրուած։

Ճատերը այն օրը, որոնք հարսանեաց հանգերձ չեն ունենայ, կապած ձեռքերով ու ոտքե-

ըով դէպի արտաքին խաւարը պիտի հանուին:

Նատերը այն օրը դուռը պիտի թակեն ու ասեն՝ Տէր, Տէր, բաց մեզ ողօրմութեան դուռը, բայց պատասխան պիտի լսեն՝ թէ «Գնացէր, ես ձեզ չեմ ճանաչում»:

Նատերին թագաւորը պիտի ասէ՝ «Բերէք առաջիս սպանեցէք նրանց՝ որոնք չեին կամենում, որ ես նրանց վերայ թագաւորի»:

Նատերը, որոնց անունը գրուած չէ կենաց գրքումը, պիտի ընկնեն վառուած կրակի լճի մէջ:

Բայց շատերը պիտի լսեն այն քաղցր և երանաւէտ ձայնը թէ «Եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանդեցէք ձեզ համար պատրաստուած արքայութիւնը»: Այս օրհնուածները Աստուծուն պիտի ներկայանան և նորա երեսը պիտի աեսնեն, Աստուծային լուսոյ մէջ յաւիտեանս յաւիտենից Աստուծոյ հետ պիտի թագաւորեն: Աստուծոյ զենեալ Գառան առջև անգագար նոր երգեր և օրհնութիւններ պիտի երգեն Սիօն լերան վերայ, խաչեալ Քրիստոսի հետ պիտի ուրախանան: Երանին նրանց, այն՝ Բայց ովքեր են այս երանեալքը.—Նրանիք, որոնք իրենց կեանիքը սրտի սրբութեամբ են անցկացրել, ինչպէս որ Յիսուսն ասում է՝ «Երանին նրանց, սրանիք սրտով սուրբ են, որովհետեւ նրանք պիտի Աստուծոյ երեսը տեսնեն»: Եւ ովքեր են իրենց կեանիքը անցկացրել սրտի սրբութեամբ.—Նրանիք՝ որոնց սրտերը մաքուր, սուրբ է եղել, որոնց խղճմուանիքը արթուն է եւ

դեր։ Սիրտ այսանդ նշանակում է հոգեկան զօւ բութիւն։ ուրեմն մեր հոգիքը, մեր սրտերը մաքրենք, սրբենք, չը կեղծաւորենք։ Մեր շապիկները մաքրում սպիտակացնում ենք, ուրեմն մեր որբատերն էլ մաքրենք սպիտակացնենք, չը սևացնենք։ Մեծասունը բեհեղներ էր հաղնում, խակ աղքատար՝ ցնցոսիք, նորա վերքերը չներն էին լիդում, բայց որովհետեւ աղքատ Գաղարոսի սիրտը մաքուր էր, մեծասունը նրանից խնդրում էր, որ մատը թացացնի և մի կաթիլ ջրով իւր պապակած լեզուն զովացնի։ Յովքի մարմինը վերքերով աղքականուած էր, բայց սիրտը մաքուր էր։

Ուրեմն որքան որ մեր մարմնոյ վերայ խնամք ենք տանում և մաքուր ենք հաղնուում, պարտաւոր ենք տանհապատիկ և հարիւրապատիկ աւելի խնամք տանել մեր սրտերը մաքրեւրու և սուրբ պահելու, որպէս զի Յիսուսի երանութեանը արժանանանք։

Ա. Երանի նորանց Այս Յիսուսի երանութիւն է, երկնային երանութիւն է, աշխարհական բառը փառքերից, հարսաւութիւնից, մեծութիւնից երկնային երանութիւնը մեծ է, բարձր է, որովհետեւ աշխարհացին փառքերը ողիտի մեռնեն, ոչնչանան, խակ երկնային երանութիւնը յաւիտեանս յաւիտենից կենդանի պիտի մնայ։ Այդ երանութիւնը, որ երկնքում սուրբերը պիտի վայելեն, Քրիստոսի երանութիւնն է, որ այս կեանիքումն են ստացել, եթէ մենք էլ այս կեանաքումը երանութիւն ստանանք, այն կեանիքումն

Էլ երանելի կը լինինք, բայց ինչով կարող ենք
այս կեանքում երանութիւն ստանալ: Ի հարկէ,
ըստ Յիսուսի՝ սրբութեամբ:

Բ. Մըրութիւն. Սրբութեան մասին Պօղոսն
ասում է՝ որ առանց սրբութեան ոչ մէկը Տիրոջ
երեսը չի կարող տեսնել, որովհետեւ Հայր Աս-
տուածը սուրբ է, Յիսուս Քրիստոսը սուրբ է, Հո-
գին Աստուած սուրբ է: Եսային ասում է՝ «Սուրբ,
սուրբ, սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք և
երկիր փառօք քո»: Երկինքը սուրբ է, Աստուածոց
հրեշտակները սուրբ են, ուրեմն մեր հոգիքն էլ
պէտք է սուրբ լինին, որ արժանանան երկինքը
դնալու և Աստուածոց սուրբ երեսը տեսնելու:

Գ. Սիր, Դաւիթի ասում է. «Միրտ սուրբ
հաստատեա յիս, Աստուած» այսինքն՝ իմ մէջ
սրտի սրբութիւն հաստատիր, ով Աստուած: Իսկ
Սողոմոնը յորդորում է մեզ, որ մեր սրտերի
վերայ հոգ տանենք, զգուշանանք և խնամենք,
որովհետեւ կեանքի ազբիւրը սրտումն է: այն,
սիրտը նման է մի ազբիւրի, որից շարունակ
կեանք է բղխում, կենդանութիւն է բղխում: Եթէ
մաքուր ջուր են բղխում ազբիւրները, նշանա-
կում է, որ այդ ազբիւրների ջրի ամբարը մաքուր
ջրից է գոյացած: Այսպէս էլ, եթէ սիրտը մաքուր
է, մաքուր կեանք կը բղխի իւր համար թէ այս
և թէ յաւիտենական կեանքում: ինչպէս Դաւիթի
ասում է՝ «Բղխեացեն սիրտք մեր զբան բարի»:
Իսկ եթէ սիրտը չար է, անմաքուր է, առակա-
նուած է, չարացնում է մաքուն, անմաքուր

կեանք է անցկացնել տալիս և ապականում է նրա բարք ու վարքը։ Ինչպէս Յիսուսն է առում՝ «Որովհետեւ սրտիցն է դուրս գալիս չար խորհուրդները, ապականութիւնները և այլն, ինչու որ սրտի յաւելուածներից է խօսում բերանը և թէ, ինչ որ դրսից ներս է մտնում չի պղծում մարդուն, այլ ներսից ելածն է պղծում»։

Զարմանալի է, որ մարդիկ իրենց մարմնաւոր տէրերին ընդունելու համար խոկոյն պատրաստում են ընդունելութեան համար տեղ, վայելուչ օթեան, կերակրեզէն, խմիչքեղէն և մինչեւ անդամ ամենամաքուր անկողին, բայց հոգեպէս այնքան ծոյլ են, որ իրենց ամբողջ կեանքում ծնուած, օրից մինչեւ մահ, մի բողէ անդամ չեն կամենում պատրաստել իրենց սրտերը Քրիստոսին ընդունելու, որովհետեւ աշխատում են արտաքինով մարդկանց հաճոյանալ, նրանց առաջ մաքուր երեալ, ուրիշների պատուին չըդիպչել, բայց ներքինով գուցե չար կրքեր, նախանձ, բարկութիւն և անհոգութիւն է թագաւորում։ և այս լինում է միայն նրա համար, որովհետեւ ապահով են, որ ծածուկ է, ոչ ոք չի տեսնում, և չեն մտածում, որ ամենայն բան կարելի է մարդկանցից ծածկել, բայց Աստուածանից ոչ, «Ոչինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի»։ Աւրեմն ինչ օգուտ կունենանք, որ դրսի մաքրութեամբ մարդոց հաճոյանանք, բայց ներքին անմոքրութեամբ Աստուծուն առելի լինինք. չէ որ «Աստուած նայում է սրտին, խոկ մարդիկ երեսին»։

ԺԵ.

ԿԱՆԱՅՑ ՄԱՍԻՆ

«Կին ժրագլուխ, եթէ ո՛ք գտանիցէ, պատուականագոյն է այնպիսին բան զականս պատուական».

(Առակ. 1.Ա. 10).

«Ով որ ժրագլուխ կին գտնի, այն պիսին պատուականագոյն է բան պատուական ակունքներ:

Իմաստուն Սողոմոնը դովում և նախադասում է ժրագլուխ կնոջ միւս կանանցից. բարոյական փիլիսոփայութիւնը սովորյնում է, որ առ հասարակ բոլոր կանանց սեռը սրտով բարի, դժուա, զգայուն, կարեկից և փափուկ են, խել դվնով կոշտ են, գրա համար էլ կանայք աւելի զգում են քան կշռագատում. նրանց սիրտը աւելի է գործում քան ուղեղը. Սրա հակառակ՝ տղամարդիկ աւելի մտածում են քան զգում, վերջիններիս ուղեղը բնականապէս աւելի է գործում քան թէ սիրտը. Տղամարդիկ գործում են գիտակցաբար, խել կանայք՝ կարեկցաբար, սորա

Համար կանանց սրտի այս յատկութիւնը գերադասում է աղամարդկանցից, ուրեմն կինը սրտով արդեն զգայուն է մնում, որ գլուխն էլ աղնուացնուի, այսինքն պէտք է կանանց ուսուցանել, կրթել, դաստիարակել։ Երկու սեռի դաստիարակութեան համար ասում է բարոյական փիլիսոփայութիւնը առաջինի (կնոջ) գլուխը պէտք է կրթել, երկրորդինի (մարդու) սիրտը. «Եթէ աղամարդին առանց սրտի դաստիարակութեան և կնոջ առանց գլխի դաստիարակութեանը թողնենք երկուսն էլ կեանքի մէջ միանգամայն անպէտք բաներ կը լինին» (Սմայլս բնաւորութիւն տես. գլ. ԺԱ)։

Ահա սորա համար Սոզոմոնն ասում է. «Ժրադլուս կինը պատուականագոյն է քան պատուական ակունք»։ Հիմա պէտք է հասկանալ թէ ժրագլուխ կինը ինչ պատճառով է պատուականագոյն։ Սոզոմոնը ինքը բացատրում է թէ կնոջ պատուականութիւնը ինչի մէջն է կայանում։ ասում է «Վատան է գէպի նա մարդու սիրտը և շատ աւարների չի կարօտի»։ Ուրեմն Սոզոմոնը բացատրում է, որ պատուական կինը նա է որի մարդու սիրտը նորա վերայ վստահ է. հիմայ էլ տեսնենք թէ, որո՞նք են վստահութիւնները։ Վստահութիւնը երեք պայմանների մէջ ենք դնում։

Նախ՝ Ամուսնութեան որբութեան մէջ։

Երկրորդ՝ Բնտանիք կառավարելու մէջ և Երրորդ՝ Զաւակների դաստիարակութեան մէջ։

Ա. Վատահութիւն ամուսնութեան պայմանի մէջ:

Այր և կին ամուսնութեան սուրբ կապով կապուած են միմեանց հետ, «Ամենայն, որ արձակիցէ զկին իւր և ոչ վասն բանի պոռնկութեան և առնիցէ այլ շնայ» (Մատթ. ժթ. 9): Իսկ կնոջ համար էլ ասում է «Կին մարդը քանի որ մարդը կենդանի է օրէնքով կապուած է մարդու հետ, բայց եթէ որ մարդը մեռաւ՝ նա մարդու օրէնքիցը արձակուած է, ասկա ուրեմն՝ քանի որ մարդը կենդանի է՝ նա շնացող է կոչւում՝ թէ որ ուրիշ մարդու գնայ». (Հոռմ. է. 2—3): Ամուսնութիւնը մի սուրբ ուխտ (պայման) է ամուսնացողների մէջ, որով այր և կին նուիրուում են միմեանց, մարդը կնոջն է պատկանում և կիւնը մարդուն, մարդը բացի իւր կնոջից ուրիշներին կոյս է օրէնքով, նոյնպէս կինը բացի իւր մարդուց՝ ուրիշներին կոյս է, այս պայմանը սուրբ պէտք է պահել կեանքի ամեն պայմանների մէջ, այսինքն դառն և դժուար ու անտանելի դէպքերում, կեանքի փորձութեան ամենադառն աւլիքների մէջ անգամ չը պէտք է վհատուին ու քանդեն իւրեանց ամուսնութեան սուրբ ուխտը, մինչև անգամ եթէ մահ էլ հասնի իրանց։ Ինչպէս սուրբ կոյս Հռիփսիմէն, որը ուխտ էր գրել հոգով հարանանալ Փրկչին, և Տրդատ թագաւորը ցանկացաւ նորա հետ ամուսնանալ, բայց Հռիփսիմէն կամք չը տուեց և նահատակուեց։ Սա նաև հատակուեց հոգեոր ամուսնութեան պայմանը չը

քանդելու համար։ Այսպէս էլ պատուական է այն կինը, որ նահատակուելու պատրաստակաւութիւն կը յայտնէ իւր ամուսնութեան սուրբ ուխտը չքանդելու համար, և յիրաւի այսպիսի կանայք պատուական են քան պատուական աւկունք։

Բ. Վասահութիւն ընտանիք կառավարելու մէջ։

Դարձեալ Սոզոմննն ասում է. «Ոչինչ հոգս չունի նորա այրը եթէ որ ևիցէ տեղ ուշանայ»։ Կեանքի փոթորիկների մէջ մարդը աղքատութեան պատճառով և կամ վաճառականութեան գործով կարող է տնից հեռանալ և սպասաժժամնակից կարող է ուշանալ, այդպիսի դէպաքերում ժրագլուխ կինը ըստ Սոզոմննի տղամարդու պէս մէջքը պինդ կըկապի, կառավարութեան զելը ձեռք կառնի, դործել կոկոի և ընտանիքը իւր աշխատանքով կը կերակրի»։

Գ. Վասահութիւն զաւակների դասիարակութեան մէջ։

Ընտանիքի հայրը միայն աղքատութեան պատճառով և վաճառականութեան դործերով չէ, որ հեռանում է տնից և ուշանում։ Տան տէրը կարող է և անդարձ հեռանալ, այն, մտհով

կարող է հեռանալ իւր սիրելիներից և յաւիտեան այլ ևս չի վերագառնալ՝ մտնելով սառը գերեզմանի մէջ։ Եւ եթէ մահուան ժամանակ մի մարդ հարցնելու լինի, թէ «Ո՞վ մարդ, դու որ այդպէս տարաժամ հեռանում ես, քո որբ զաւակներդ ումն ես յանձնում», անշուշտ պատաշխան կըստանայ. «Ես վստահ եմ իմ պատուականագոյն, ժրագլուխ, գլխիս պսակ կնոջս վերայ», ու հոգին կաւանդէ։ Ուրեմն ժրագլուխ կինը պարտաւոր է իւր մեռնող ամուսնու վստահութիւնը չգաւաճանել, նորա բոլոր յոյսը որ դրել է նորա վերայ, ի կատար ածել։

Ա՛րդ, ժրագլուխ կին, Սոզոմոն իմաստունը քեզ ժրագլուխ և առաքինի է անուանում և նախագասում է պատուական ակունքներից և գոհարներից, քո մարդու գլխի պսակ է անուանում քեզ, միտքդ բեր նորա խրատներն ես։ Դու որ քո մարդուդ կենաց մէջ միշտ բարիք կը բերէիր և ոչ չար, այժմս էլ բուրդ ու քաթան փնտոիր և ուզածդ ձեռքովդ գործիր, վաճառականի նաւի պէս քո զաւակներիդ համար հեռու տեղից հաց բեր, գիշերները վեր կաց և քո ընտանիքիդ կերակրիր ու ծառաներիդ էլ բաժին հանիր, մտածիր որ արտը ծախսու առնես, քո ձեռքերիդ պտուզով այդի տնկիր, քո մէջքդ զօրութիւնով պնդիր և քո բազուկներդ զօրացրու, քո վստակիդ լաւութիւնը հասկացիր և քո ճրագդ գիշերները մի հանդցնիր, քո ձեռքերդ իլիկին երկարացրու և ափովդ բոքը բռնիր, աղքատների հա-

մար ձեռքդ բաց պահիր և կարօտեալներին օգ-
նութեան հասիր, բոլոր ընտանիքիդ տաք հագ-
ցրու, որ ձիւնից չը վախենանց Քեզ համար առա-
քինութեան ծածկոցներ շինիր և պարկեշտու-
թեան ծիրանի և բեհեզ հագիր, բերանդ իմաս-
տութեամբ բաց արա և քո զաւակներիդ առա-
քինութեամբ գաստիարակիր և եթէ կարողու-
թիւն ունես, ուսման տուր Միթէ միայն հայրն
էր պարտական որդւոց գաստիարակելու. չէ որ
իբրև իւր որբերի ծնողի՝ իւր գաստահութիւնը
քեզ վերայ գրեց. չէ որ քեզ նորանց ծնող ծա-
նաչեց. չէ որ դու ես յզացել ծնել և կաթովդ
կերակրել. դէ՞հ ուրեմն, զաւակներիդ կրթութեան
կիսաճանապարհի վերայ մի թողնիլ. դու քո ա-
մուսնուդ գործակից ես ամենայն բանում: Այս,
շարունակիր մարդուդ թողած գործերը, որպէս
զի նա, գերեզմանի մէջ հանգիստ պարկի ասե-
լով. «Վասահ եմ կնոջս վերայ, նա զաւակներս
քրիստոնէական հոգով կը գաստիարակի»: Ի՞նչ
ցանկալի վաստահութիւն, որ գերեզմանից խղճմը-
տանըի ձայնը արձագանք է տալիս:

Ահա այն ժամանակ բոլորս էլ Սովորնի հետ
կասենք. «Այս, այսպիսի կանայք պատուականա-
գոյն են քան զականս պատուականա»:



